



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

952

206

5-36

1272

*[Handwritten red scribbles]*

Printed in Turkey

2010

206 us.  
U-36

ԵՐԿՈՒ ԽՕՄՔ

ԵԿԵՂԵՑԻՈՑ

ՊԱՇՏՕՆԷՅԻՑ ՈՒՂՂՈՒԱԾ

Ի ՄԱՄԱՐԻ ԿԱՐԴԱՊԵՏԷ  
ՄԱՐԿՈՍԵԱՆ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Ս. ԷԶՄԻԱՆՆԻ

Տ. Տ. ԳԷՈՐԳԱՅ

ՎԷՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ՀՐԱՄԱՆՈՒ

ՊԱՏՐԻԱՐԻՒՄ ՍՐԲՈՑ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

Տ. ԵՍԱՅԵԱՆ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԵՒ

Ի ՊԱՏՐԻԱՐԻՒԹԵԱՆ Կ. ՊՕԼՍՈՑ

Տ. ՄԿՐՏԶԻ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՒՈՑ

ՍՐԲՈՑ ՅԱՎՈՎՔԵԱՆՑ

ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

1872

2012

*[Red stamp]*

33648-4. 6.

Printed in Turkey

# ԵՐԿՈՒ ԽՕՍԲ

ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՊԱՇՏՕՆԷԻՑ ՈՒՂՂՈՒԱԾ<sup>(\*)</sup>

ՀԱՐՔ ԻՄ ԵՒ ԵՂԲԱՐՔ.

ՊԱՇՏՕՆԱԿԻՑՔ ԻՄ Ի ԲԻՒՍՏՈՍ

ԱՄԵՆԱՅ խոնարհութեամբ և սիրով Հողւոյն կ'աղաչեմ և արտասուօք կը խնդրեմ, շնորհք ըրէք, կարդալու արժանի համարեցէք ձեր յետին պաշտօնակցին այս սկար խօսքերը, որք կարելիք խոցուած սրտէ մը կը բղխին և որք, եթէ սիրով և առանց արհամարհանաց ընդունուին յուսամ յԱստուած թէ օգտակար կը լինին:

Գիտեմ և կը խոստովանիմ, որ ձեզ մէ շատերը հմուտ էք ամենայնի, և

(\*) Եկեղեցւոյ պաշտօնեայ ըսելով կը հասկնանք ամեն աստիճանի Եկեղեցականք, փոխասաց դպիրէն սկսեալ մինչև ցկաթողիկոս:



(343) 16431-98  
40

120 01

102

կարօտ չէք ուրիշ մը ազգարարութեան կամ առաջարկութեան. և թերեւս ձեր հմտութեամբ խոտելի երևին իմ դուզ նաքեայ տկար ու անհամ խօսքերս, սակայն շորհք մի է՝ զոր կը խնդրեմ. կարդացէք զայս և մի համարիք թէ ուսուցանելու համար կը գրեմ, այլ արդէն գիտցածնիդ թէ՛ ձեզ և թէ՛ ինձ վերակրկնելու և յիշեցնելու համար, որուն այս միջոցիս խիստ կարեւորութիւն ունենալնիս չափազանց զգալի եղած է :

Հարբ իմ, գիտէք դուք անշուշտ որ ամենքնիս ալ իբրեւ մարդ և իբրեւ անդամ մարդկութեան պարտքեր ունինք, իսկ իբրեւ Արկեղեցւոյ պաշտօնեայ՝ կրկնապատկուած է մեր պարտքը : Արդար մարդը փոյթ կը տանի անթերի կատարել իւր ստանձնած պարտքը՝ առանց իրաւունքէն զրկուելու հոգսով . արդ ջո գիտեմ ի՞նչը ներու է այն մարդը որ իրաւունքը կը տանայ և պարտքը կը զանայ. գիտէք նաեւ, որ ազնուական մարդը ուրիշ ընտիր հանգամանքներէ զատ կունե-

նայ պատուոյ գեղեցիկ զգացումը, որով կուզէ իւր բարոյական կեանքը. այս պատուական զգացումը չի կրող և անպատուութեան դալը տեսնելով չի կարմրող և չզուռչացող մարդը արժանի չէ մարդ անուան. վասն զի հակամէտ կը լինի այնպիսին ամեն տեսակ մոլութեան, չարութեան և վատութեան. այս իբրեւ մարդ հասարակ է ամենուն, իսկ իբրեւ Արկեղեցւոյ պաշտօնեայ առաւել եւս կրկնապատկուած է մեր վերայ նախանձաւոր լինել մեր պատուոյն և մեր ստանձնած պաշտօնի պատուոյն . . . :

Արկար ժամանակէ ՚ի վեր է, որ հրապարակային գրիչք զԱրկեղեցւոյ պաշտօնեայս կը նախատեն, կանարդեն, կայսպանեն, կը վատահամբաւեն և վերջին աստիճան անպատիւ կ'ընեն, և մենք սորա դարմանը չենք խորհիր : Ի այց ինչէ՞ն է այս ամեն անարդութիւնը մեր վրայ, ինչու մեր սիրելի եղբարքը, մեր հոգեւան որդիքը, մեր աղբակիցքը այսպէս մեզի դէմ եղած են, ինչէ՞ն է, որ զմեզ այսպէս չարաչար

կը դատեն : Ինչո՞ւ չենք կարող համար  
 ձակիր ըսել առաքելոյն պէս , թէ « Եւ  
 ես ընդէ՞ր դատիմ 'ի ձէնջ և բնաւ իսկ  
 'ի մարդկանէ » : Գիտեմ , թերեւս պիտի  
 ըսէք , ինչպէս շատ անգամ ըսած էք ,  
 թէ նոքա չեն պատկառիր , նոքա չա  
 դակրատներ են , և ձախող նպատակ  
 ներու կը ծառայեն , և այլն : Իրաւ էք  
 ես ալ ձեզ հետ կ'ըսեմ որ այդպէս է ,  
 բայց անգամ մի եղելու-թիւնքը քըն  
 նենք , ինքզինքնիս անաչառ դատենք ,  
 մեր գործքերը մեր կոչման հետ համե  
 մատենք և ահա պիտի տեսնենք , որ  
 նոքա ինչ նպատակաւ ալ խօսած լինին  
 և ինչ տեսակ անձինք ալ լինին՝ միշտ  
 կ'արդարանան . ըստ որում մեր գոր  
 ծերն արդէն նոցա ըսածներուն ասպա  
 ցոյցն է : Այո՛ , եթէ մենք իրօք անմեղ  
 և արդար լինիմք , եթէ զգաստ և օրի  
 նապահ լինիմք , անշուշտ նոցա խօսքե  
 րը արժէք չեն ունենար , և այն ատեն  
 նոքա ինքնին փասքուս և բանաբազ  
 ներ կը համարուին . իսկ դժբազգաբար  
 եթէ մենք մեր կոչման և պարտույց  
 դէմ կը մեղանչեմք , յայտնի է թէ այն

ատեն այդպիսի խօսքերով և զանոնք  
 արհամարհելով չենք կարող արդարա  
 նալ , այլ անոնց խօսածը շարունակ կը  
 հաստատենք :

Արտի դառն վշտօք կ'ըսեմ , որ ցա  
 լալի է մեր այս ընթացքը , և հետ  
 զհետէ աւելի դառն պիտի լինի մեր  
 վիճակը , քանի որ անզգայ կենանք մեր  
 դէմ եղած անպատուութեան վրայ  
 և չզգաստանանք , և չուղղուինք և չը  
 սրբուինք և չարդարանանք : Արդա  
 րանալ կ'ըսեմ , և չը լինի թէ այն դառն  
 և անպատիւ յօդուածոց արտաբուս  
 պատասխանել և պատրուակել հաս  
 կրնանք . ո՛չ , զայդ արդարանալ չեմ  
 համարիր՝ երբ ճշմարտութեամբ չէ .  
 քանզի սառութեամբ և պատրուակաւ  
 սրատասխանելը՝ յանցանքը բազմա  
 պատկել է , անիրաւութեամբ արդա  
 րանայն՝ պարզ յանցաւորութենէ ե  
 ղեռնազորութեան մէջ իյնալ է , ա  
 դատիլ ուղելով անլուծանելի կաշկան  
 դուիլ ըսել է . վասն զի արդէն ունե  
 ցած յանցանաց վերայ աւելցուցած  
 կ'ը լինիմք հանրութիւնը խօսքով եւս

խաբելու ոճիրը, ինչպէս շատերն ըրին  
 և չի կրցին իրապէս արդարանալ, եւ  
 քանզի արդարանալու համար մեր ը-  
 րած նոյն խօսքերը ներհակ պիտի գըտ-  
 նուին միշտ մեր գործոց, ուրեմն անով  
 զմեզ դատապարտող դատախազ մի ևս  
 աւելցուցած կը լինինք ներկայ և ա-  
 պագայ աշխարհին առջեւ, որով չա-  
 րաչար պիտի դատուինք յաջորդ սե-  
 րունդէն, ինչպէս կը դատենք այսօր  
 մեր մեր նախորդները:

Մյցեալ դարուց պատմութիւնը կար-  
 դացած ատեն՝ որ և իցէ կարգի անձանց  
 ըրած չարութիւններն ու վատութիւն-  
 ները մեր սիրտը կը վշտացնեն, սակայն  
 աւելի զայրոյթով մեկտեղ կրկնապա-  
 տիկ ցաւ կը զգանք երբ կը կարդանք,  
 որ Աստուծոյ պաշտօնէութեան եւ  
 ձեւին ներքեւ գործուած են անոնք-  
 եթէ զանոնք կը խտտենք, կը նզովենք  
 և կը դատենք, հասլա մեզ ինչ պիտի  
 պատահի. մեզ, որ մեր շուքը ան-  
 ցեալ և ներկայ անհամար դէպքեր և  
 օրինակներ ունինք զմեզ հրահանգող  
 և դէսլ ՚ի ըսան առաջնորդող. սակայն

դժբաղդաբար կամաւ կուրացած՝ ալ  
 սուելի վատթարանալու հակամէտ ենք  
 քան թէ լաւանալու. ասոր ապացոյց  
 են ամենօրեայ առաջնորդական խրե-  
 դիւքը և դառն գանգատանքներն ու  
 բողբոքները, որք կը դիզուին կը կուտա-  
 կին մեր վրայ հրապարակի մէջ, և որք  
 օր մը պիտի դատեն զմեզ, և այն ա-  
 տեն գուցէ չտրերուն հետ դալարներն  
 ալ պիտի այրին, յանցաւորներու հետ  
 անմեղներն ալ պիտի դատապարտուին  
 ապագայ պատմութեան մէջ. քանզի  
 ցաւալի եղանակ և խիստ մեծ դժ-  
 բաղդութիւն մ'է, որ հրապարակա-  
 յին գրիչք կղերի մը չարութեան դէմ  
 ղինուած ատեն՝ կղերք, կղերականք և  
 նայն խակ կղերութիւնն առհասարակ  
 մէկ ջրով կը լուան. առաւել գէշն այն  
 է, որ ոմանք եւս օտար լեզուներէ  
 թարգմանելով ճիղբալիթաց անկարգ  
 վարուց նկարագրութիւնը մեր կղերաց  
 կը սեփհականեն, (թերեւս Եկեղեցւոյ  
 պաշտօնէից դէմ մասնաւոր ատելու-  
 թիւն ունենալուն, կամ հրապարակի  
 մէջ բան մը գրած լինելու համար). սա-

կայն մենք առանց զանոնք դատելու, կը  
 սենք, որ կերպիւ իւիք իրաւունք ըս-  
 տացած են այնպէս ընել, Քանզի Լ-  
 կեղեցւոյ բարձրաստիճան պաշտօնեայք  
 և ձեռնհաս իշխանութիւնք, նոյն խոկ  
 ժողովուրդը՝ յանցաւոր պաշտօնեայն  
 յականէ յանուանէ յայտնուած ատեն  
 անաչառ դատաստանով չեն դատա-  
 պարտած և վճռակի պատժած, որով  
 տեղի տուած են և այլոց նոյնը գործել  
 և իրենք ալ գործակից համարուիլ և  
 ահա այս պատճառաւ զեղծումն ու-  
 ընդհանուր ասպականութիւնը տիրե-  
 յու վրայ է :

Հարբ իմ, սիրտս կարեւեր խոց-  
 ուած է, քանի խօսքս յառաջ տանիմ  
 և նկատողութիւններս քանի շարու-  
 նակեմ, այն քան աղիքս կը գալարի,  
 և հոգիս կը խռովի. դուժ ունենանք  
 կ'աղաչեմ, քիչ մը մոռնանք մեր զմեզ,  
 ժողովրդեան վիճակն աղետալի է, նո-  
 րա բարոյական կեանքը մեռելութեան  
 վերջին ճգնաժամին հասած՝ իւր մա-  
 հահրաւէր տաղնապին մէջ օգնութե-  
 բարեբար ձեռք մի կը պաղատի, չէք

յօժարիլ այն բարեբարը դուք լինել :  
 Լ ուրջ հայեացք մը ձգենք ժողովրդեան  
 անմահ հոգւոյն վերայ, զիննք նորա  
 բարոյական վերբերք, և ահա կը տես-  
 նենք թէ ի՞նչ տղրմուկ է և որչափ օգ-  
 նութեան կարօտ :

Սեր ստանձնած պաշտօնը, Հարբ  
 իմ, չներէր մեզ անհոգ լինիլ. սէ, սրբ-  
 տերնիդ չի՞ շարժիր երբ կը տեսնէք որ  
 քրիստոնէական անմեղութիւնք և սրբ-  
 բուժիւնն աղարտուած եղծուած է  
 ժողովրդեան մէջ, հեղութիւնը՝ իրա-  
 բու դէմկատաղութեան, գթասիրու-  
 թիւնը՝ անգթութեան, համաձայնու-  
 թիւնը՝ երկպառակութեան, խաղա-  
 ղութիւնը խռովութեան փոխուած է  
 և ամեն տեսակ բարեմասնութիւն  
 ներք՝ եթէ չըսեմ սպառած՝ գոնէ  
 կիսով չափ պակասած են, որով խեղճ  
 ժողովուրդը մոլորած ու ցնորած՝ ինչ  
 ընելը չգիտեր, խորհրդակորոյս ազ-  
 դի մը պէս շինելու տեղ կը քան-  
 դէ. զինքը կեղեքող աւաղակին առ-  
 ջու անշարժ կը կենայ, պատիւը կը  
 բռնաբարուի լուռ ու մունջ կը հեծէ :



և հարստահարիցը կորսուելէն վերջը աղաղակ կը բառնայ . սակայն երբ բարեխնամ ձեռք մի իրեն օգնութեան հասնի , երկիւղէն ու շուարումէն — Ինչ փաստը չէ կայ — կ'ըսէ . այս դառն՝ այլ ճշմարիտ իրողութիւնը մտաւոր հիւանդութիւն մի է , իմացականին խանգարումն է , որուն պատճառը եւ թէ անաչառ հետադրտեիք՝ մեր չափազանց ինքնասիրութեամբ ունեցած անհոգութիւննիս է , և որուն դարմանը իրաւամբ մեզմէ կը սպասուի :

Տեսէք կ'աղաչեմ , տեսէք սա դեռ տինը փռուած սղորմելի դիակը , տեսէք նորա կուրծքին վերայ պատառուած լայնաբաց վերքը , ուրիկէ կենաց անգին հեղուկը հորդութեամբ կը հոսի , սակայն նորա աչերուն մէջ կենդանութիւն կայ , դեռ շունչ կառնու կուտայ և շարժելու ճիգ կը թափէ . այլ վայրկեան առ վայրկեան նուաղելու վերայ է , տկար ձայնով օգնութիւն կ'աղաղակէ , հասէք , Հարք իմ , օգնութեան հասէք , նորա կեանքը մեզմէ կը պահանջուի , վասն զի նա մեր

ժողովուրդն է , վասն զի նա Հայ ազգին է , նա մեր արիւնն է , մեր կեանքն է և մեր հոգին . նորա մահը մեր ալ մահն է , իսկ մեր անհաստական մահը՝ նորա հանրական կենդանութիւնն է , ինչո՞ւ չենք արիանար , ինչո՞ւ չենք բաղձար այս փառաւոր դիւցաղութեան . մեռնիլ ամբողջ ազգի մը կենաց համար՝ անմահութիւն է . սակայն հիմայ զմեզ մահուան հրաւիրող ալ չի կայ . լոկ գործելու արիութիւն է մեզմէ պահանջուածը . գործել՝ խահական խորհրդով , գործել անսպառ երկնային սիրով , գործել՝ արդարութեամբ , բարի նպատակաւ և արդար ու սուրբ միջոցներով . պէտք չէ վհատիլ , հարկ չէ թուլնալ . վասն զի անխուսելի պարտքը , երկնային հարկը , մեր յօժարակամ հաճութիւնը և խոստումը որովք ընդունած ենք սոյն պաշտօնը՝ կը բռնադատեն զմեզ առ այս . մեր պաշտօնն է այս , բեռ մը չէ , ծանրութիւն կամ դժուարութիւն չունի . բայց եթէ չի կատարենք , արդարեւ պարտադանց եմք , խոստմտագրուծ և

գասալքը կը համարուինք աշխարհի առջեւ և արդարութիւնը կը պատժէ զմեզ՝ այսպէս անարգելով և անպատիւ ընելով. չեմ ուզեր հաւատալ որ ձեր մէջ այս ճշմարտութիւնները ջր գիտցող և անոնց չհամոզուողներ կը գտնուին, բայց եթէ դժբաղդաբար գտնուին, թող գոնէ իրենց օգուտը մշտաձեւ, զիրենք խնամող, հոգացող, կշտացնող աղօթն է, որ իրենց օգնութեան կը կարօտի. իրենց կենաց համար դէժ պէտք են խնայել անկեղծ կենացը. այս Հարբ իմ, պատուական հարբ, օգնեցէք նորա տկարութեան, պատեցէք այն ահռելի վէրքը, ուրկէ հասածը կենանք է և որուն հետ ձերն ալ կը մաշի և կը մահանայ. բայց ահաւոր ճշմարտութի մի է խոստովանիլն, որ այն ատեն մենք պիտի սեպուինք անձնասպան, մարդասպան, ազգասպան և եղբայրասպան. և այն ատեն նորա արիւնը մեզմէ պիտի պահանջուի, մեզմէ, որ այս կրօնական արտաքին ձեւն զգեցած օրերնիս ներքին ամենամեծ պարտքեր ալ զգեցանք. ուխտ, դա՛լիք, խոս-

տու մն, երդում, և ամեն հաստատական միջոց գործածեցինք մեր անձը ժողովրդեան փրկութեան վրայ դնելու, և հիմայ նորա աղէտից աչք կը բոցենք:

Պէտք է մտածել Հարբ իմ, ահռելի ատեան մը ունինք ուր պատասխանատուութեան պիտի հրաւիրուինք և այն տեղ բազմող դատաւորը իւր անչափ մարդասիրութիւնը գթութիւնը, ողորմութիւնը ներողութիւնը և անյիշահարութիւնը քրած կատարած լինելով արդարութիւն պիտի գործադրէ. այն տեղ ամեն բան մերկապարանոց է. ուր տեղ մթութիւն կամ մոռացումն չկայ, հոգւոյ կարողութիւնքք պայծառ, խիղճն ու յիշողութիւնը արթուն և լուսաւոր են, վկայի, փաստաբանի և կաշառքի ոչ կարօտութիւն կայ և ոչ կարեւորութիւն. հոն այն յաւիտենական բարեոյն առջեւ չարերը ամօթապարտ պիտի լինին և ծածկուելու խորշ անգամ չի պիտի գտնեն, նոցա համար արդար պատուհասէ զատ ուրիշ անկապուցութիւն չկայ, այս ճշմարտութիւն մի է, մարդկային

ախտաւոր կիրքերն ու ամբարտաւանութիւնը ինչ կուզեն թող առարկեն այս փրկաւէտ սկզբան դէմ և 'ի զուր ճիգ թասիեն իրենց խղճի խայթն ու տագնապը հանդարտեցելու, Աստուծոյ արգար դատաստանն ուրանալ ու զող հրէջք իւր մոլի և տեսակ մը կրից գերի լինելը համարձակապէս կը յայտնէ, և նոյն իսկ իւր ըրած այն ձախող ճիգըն անգամ աղետալի է իրեն համար, քանզի արհամարհած պիտի լինի յաւիտենական անյեղի ճշմարտութիւն մը, զոր տիեզերաց Արարիչը հազար միջոցներով ցոյց տալէ և յայտնելէ զատ բնութեան մէջ բիւրաւոր օրինակներով և ապացոյցներով հաստատած և մեզ ներկայացուցած է, զորս աչք ունեցող և տեսնելու զողը կը լստենէ, ուստի հարկ չէ մեզ այս տեղ սոյն նիւթին վրայ ծանրանալ, այլ կը թողու՞մ որ ամեն պարտազանց Հովիւ ողջմտութեամբ խորհի և իւր վիճակի դառնութիւնը ինքնին զգայ:

Այժմէ մենք, իրօք ճշմարտ քահանաներ և հովիւներ լինելու համար այս պաշտօ-

նը յանձն առինք, պէտք է անոր պարտքերը սուղինք և անթերի կատարենք, ինչպէս որ կը պահանջեմք մեզ սպասաւորողներէն, և ի՞նչ ենք մեք էթէ ոչ Աստուծոյ եկեղեցւոյն պաշտօնեաները, հաւատացելոց սպասաւորները, Աստուծոյ գերդաստանին վրայ կարգուած անտեսներ, որ ժամանակին նույս հոգեւոր կերակուրը տալու պաշտօնն ու պարտաւորութիւնը ունինք: Ի՞նչ կրնենք մենք՝ երբ մեզ սպասաւորող եղբայրը իւր սարտուց կատարման մէջ անհաւատարիմ, և իւր գործոյ մէջ անհոգ գտնուի. ո՞չ ապաքէն կը խրատենք, կը յանդիմանենք, կը պատժենք և վերջապէս կը վանենք. շատերնիս այսքան համբերութիւն ալ չենք ըներ. ուրեմն ի՞նչ կը յուսանք մեք քանի որ մենք ալ նոյն պէս մեր պարտքերը կատարելու մասին իսպառ կը թերանանք Աստուծոյ անհուն մեծութեան առջեւ. անշուշտ օր մը որ շատ հեռի չերեւիր, պիտի ընդունինք մեր արգար հատուցումը. և ո՞չ ապաքէն ասիա արդէն

343 / 16431-58



սկսած ենք կրել անոր առհաւատչեան .  
 միթէ փոքր կը համարինք այսչափ նա-  
 խատինքը , արհամարհանքը զզուանքը  
 և հրապարակաւ կամ առտնին եղած  
 անպատուութիւնները . որք մարդու  
 մը համար պէտք էին խիստ զգալի լին-  
 նել . բայց ահա կը տեսնենք , որ մեր շա-  
 տերուն հոգն անգամ չէ . . . : Բայց յայս-  
 ցանէ ո՛ր թողունք այն մեծ անար-  
 գանքը , որ մեր խօսքերը ժողովրդեան  
 անկտելի կը լինին և անօգուտ , ասկէ  
 աւելի ինչ նախատինք կրնայ լինիլ մեզ  
 և Աստուծոյ խօսքին , որ ապարդիւն  
 կը մնայ :

Ես կը քստմնիմ , Հարք իմ , և սար-  
 սուռ կողքամ ամեն անգամ , երբ սուրբ  
 Եկեղեցւոյ պաշտօնէից վըսայ անկուր  
 ամբաստանութիւններ կը կարգամ ,  
 կամ այնպիսի դործեր կը լսեմ որք հե-  
 թանոսաց մէջ անգամ անարգ են և  
 խոտելի . և դուն ուրեք գործուելը կը  
 լսուի կամ անպատու հաս կը մնայ . ան-  
 հաւատ կուտալաչտից մէջ անգամ դա-  
 տապարտելի եղած գործքեր բրիստու-  
 նէութեան մէջ տեսնել , արդարեւ ան-

Ես կը քստմնիմ  
 Հարք իմ  
 և սարսուռ  
 կողքամ  
 ամեն անգամ  
 երբ սուրբ  
 Եկեղեցւոյ  
 պաշտօնէից  
 վըսայ  
 անկուր  
 ամբաստանութիւններ  
 կը կարգամ  
 կամ այնպիսի  
 դործեր կը լսեմ  
 որք հեթանոսաց  
 մէջ անգամ  
 անարգ են և  
 խոտելի .  
 և դուն ուրեք  
 գործուելը կը  
 լսուի կամ  
 անպատու հաս  
 կը մնայ .  
 անհաւատ  
 կուտալաչտից  
 մէջ անգամ  
 դատապարտելի  
 եղած գործքեր  
 բրիստունէութեան  
 մէջ տեսնել  
 արդարեւ ան-

ներելի է , մանաւանդ եկեղեցւոյ պաշ-  
 տօնէից մէջ , որք առաքինութեան ,  
 սրբութեան , բարի վարուց , սիրոյ և  
 խաղաղութեան՝ բանիւ ու գործով քա-  
 ըող և օրինակ հանդիսանալու սահմա-  
 նուած են , որք յօժարութեամբ եւ  
 հետասնդութեամբ սոյն պաշտօնին  
 մէջ մտեր են , որք երդմամբ և ուխ-  
 տիւք զայն յանձնառած են , կենօք և  
 մահուամբ անթերի կատարել , և որք  
 այսօր , դառն է խոստովանիլը , այսօր  
 բարձի թողն ըրած իրենց ուխտը , խո-  
 տորնակ շաւիղ մը ընտրած են , որ չի  
 պիտի յաջողին , և որ ելք չունի : Ի՛նչ է  
 այսպիսեաց հատուցումը , խորհելու  
 արժանի է այս կէտը և դարմանը անհը-  
 րաժեշտ կարեւորութիւն : Ըն այս  
 հարկ կը համարիմ ըսել , թէ բնաւ մե-  
 կերնիս ալ ինքզինքնիս ամենեւին չար-  
 դարացնենք , բանդի ամենքն ըստ իւ-  
 բում կարգի և չափու այս պարտա-  
 ղանցութեանց մէջ է և սոցա ընդհա-  
 նուր լինենն անուրանալի է : Ի՛նչ աստի-  
 ճանի մէջ ալ որ լինինք , այսօր կաթո-  
 ղիկոսէն մինչեւ ցղպիր պէտք է դիա-

նանք որ այս թերութեանց ենթակայ ենք . ուստի իմ խօսքերս ամենուս կը պատկանին , մի գուցէ մէկերնիս ը սինք , թէ Կս այս կարգէն չեմ , ոչ , սը խարմունքնիս այն ատեն մեծ կը լինի երբ այլոց խրատուած ու յանդիմանուած ատեն մեք զմեզ բացառութիւն սեպենք , և ահա այն ատեն մեք ա նուղղայներ կը համարուինք :

Կարգւած , ով եկեղեցւոյ պաշտօնեայ , կարգւած հրատարակ ելած՝ բեզ համար գրուած յօդուածները և եթէ մարդկային զգացումն ունիս եթէ քրիստոնէական հաւատք ունիս և եթէ վերջապէս իբրեւ աստուածապաշտ կը պարծիս՝ սոսկս ու սարսափէ . դարձիր և ընթացքդ փոխէ :

Հարբ , հերիք մեր անունը անարժանապէս հրատարակ ելաւ , հերիք վատահամբաւուեցանք , ալ բաւական է , կ'աղաչեմ ամօթ կրենք քիչ մը , յանուն մարդասիրութեան , որով պէտք է վառուած լինինք . 'ի սրատիւ մեր ստանձնած սուրբ պաշտօնին , զոր մեր Հարբ անաղարտ մեզ յանձնեցին , և

զոր մեք մեր գործով կ'աղարտենք . 'ի փառս Աստուծոյ , որ հաջիւ պիտի պահանջէ և անաչառ պիտի դատէ զմեզ , սթափինք այս ապուշ յիմարութենէն , (բանպի անհնարին է այսչափ նախատինք կրելէն վերջը չզգաստանալ և յիմար ջը համարուիլ) :

Սուրբ Արքեպիսկոպոս պաշտօնեայ վրայ քսուած անարգական բառերը կ'ուզէի մի առ մի ամփոփել այս տեղ և ամբողջ ջը իբրեւ հրէշային պատկեր ձեզ ներկայացնել . բայց տեսնելով որ նոցա 'ի մի վայր կուտակութիւնը խիստ ահուելի երեւոյթ մի ունի և համեստ լըսելեաց զզուանք կը պատճառէ , ուստի խնայելով պատուոյ և համեստութեան՝ զանց կ'ընեմ մանրամասն թըւելը և միայն ընդհանուրի վերածելով . քանի մը հատուածներու կը բաժնեմ , և հետզհետէ կը խօսիմ ամեն մէկուն վրայ , կրկնելով իմ խոնարհ աղաչանքս , որ սիրով կարդաք զանոնք և ըստ ամենայնի խելամտելով դարման տանիք , յօգուտ ձեր անձին եւ ձեր խնամոյ յանձնուած ժողովրդոյ :

Ահաւասիկ Աշկեղեցւոյ պաշտօնէից  
վրայ խօսուած պահասուածեանց հա-  
մառօտութիւնը :

- Ա. Տգիտութիւն :
- Բ. Ընդործութիւն :
- Գ. Ազահութիւն :
- Դ. Խռովարարութիւն :
- Ե. Հպարտութիւն :
- Զ. Պճնասիրութիւն :
- Է. Օրինաց արհամարհութիւն :

Լ.

ՏԳԻՏՈՒԹԻՒՆ

Եթէ մարդ Աշկեղեցւոյ պաշտօնէ-  
ութեան ինչ իննը նկատէ, պայծառ  
տեսնէ, և լաւ ճանչնայ, խիստ մեծ  
ամօթ պիտի դրայ անձին՝ երբ նոյն  
պաշտօնն ընդունի և ինքզինք անոր  
յարմար չի գտնէ. և առաւել ամօթ,  
երբ պատրաստուիլ չուզէ : Այլ է ինչ  
և իցէ գործ և ծառայութիւն ըստ օ-  
րինի կատարուելու համար իրեն յար-

մար պաշտօնեայն կը պահանջէ, որ  
չափ ևս առաւել հոգեւորական պաշ-  
տօնը, որ բարձր է քան զայնս և հար-  
կեցուցիչ. արդ՝ որ մէկերնիս կարող  
ենք վստահութեամբ ըսել թէ մեր  
սոյն վսեմ պաշտօնին արժանաւոր ենք  
և առ այն պատկանած հանգամանք-  
ներն ունինք. ծառք իւր պտուղէն և  
գործը իւր արդիւնքէն կը ձանցուի :

Այդ համար պէշպէս էն կ'ըսեն,  
եւ միթէ կարող ենք ուրանալ զայն,  
եւ եթէ ուրանանք, չէ՞ որ մեր գործ-  
քերն ու խօսքերը զմեզ պիտի յան-  
դիմանեն : Ահաւասիկ մեզ յանձնը-  
ւած ժողովրդեան վաքքը, նոյս բա-  
րոյական ու մտաւոր կեանքը դատաւ-  
խաղ կանգնած կը բողբէ մեր ստու-  
թեան դէմ. զմեզ աշխարհի առջեւ,  
մեր ամենաբարի Արարչին առջեւ  
կ'ամբաստանէ իբրև անհաւատարիմ  
անտեսներ, իբրև անհոգ և անձնա-  
սէր հպիււններ, իբրև կոյր առաջնորդ-  
ներ, կոյր մոլորելոց և իբրև ճրագ ան-  
լոյս կամ ընդ գրուանաւ թաքուցեալ.  
որ մէկերնիս կարող ենք համարձակիլ

լսել Աւարելոյն պէս, թէ՛ « Իմաստուն  
 ճարտարապետի մը պէս հիմն դրի » .  
 Բնչպէս կամ որուն կրնանք ըսել, թէ  
 « Գործ իմ դուք էք ՚ի Քրիստոս » .  
 քանի որ աւելի քանդիչ կը յօժարինք  
 լինել մեր տգիտութեամբ քան թէ  
 շինող, բայց պէտք է գիտնանք որ մեր  
 Տէրը զմեզ տուաւ ժողովրդեան Ի շէ-  
 նել և ոչ ՚ի չափել :

Յիտուս Քրիստոս աշխարհի վիր-  
 կիչը, մեր Տէրը և երկնաւոր վարդաւ  
 պետը զմեզ աշխարհի լոյս կ'անուանէ,  
 բարձր աշտանակի վրայ դրուող՝ եւ  
 տունը, այսինքն Աստուծոյ ժողովուրդը  
 ըստարող ճրագ կը կոչէ, լերան վրայ կե-  
 ցող չաղափ կը նմանցնէ . այս անուն  
 ներքը, նմանութիւնները և այս վտեմ'  
 տիտղոսները՝ որոց մէջ մեր պաշտօնն  
 ու պարտաւորութիւններն ալ բովան-  
 դակուած են, չէն յանդիմաներ ու  
 պատկառեցններ զմեզ, քանի որ մենք  
 այնպիսիներ չենք . բուն իսկ մեր պաշ-  
 տօնը և կրօնմը չգիտնալնիս կամ ըստ  
 այնմ՝ չի գործելնիս յայտ յանդիման  
 չի խայտառակեր մեր տգիտութիւնը :

Եթէ մեր զմեզ պիտի խաբենք զա-  
 նաղան շաղկաղիտութեամբ և մեծխօ-  
 սիկ սնոտխաբանութեամբ, եթէ սուտ  
 անուն գիտութեամբ և յամառ վե-  
 ճաբանութեամբ պիտի երեւինք, որք  
 կարող են զմեզ հպարտացնել և Աս-  
 տուծոյ Հաբին շեջուցանել, եթէ լոկ  
 մտաւոր և նիւթական գիտութեամբ  
 պիտի պարծինք առանց աստուածային  
 գիտութեան, առանց սրտի մշակու-  
 թեան և բարուց ուղղութեան, ար-  
 դարեւ ողորմելի ենք քան զամենայն  
 մարդիկ, քան զանբանս և քան զան  
 զգայս, որք գոնէ բնութե օրինաց հնա-  
 ղանդ են : Այլ մեր կը պարտաւորիմք  
 գիտնալ այն գիտութիւններն հոգե-  
 ւորին և բարոյականին համար, առանց  
 որոց մեռած են անոնք և ապականիչ  
 են մտաց, հոգւոյ, մարմնոյ և կենաց,  
 սորա ասպարոյցը թէ և բազմաց վերայ  
 կը տեսնեմք, այլ առաւել մեր վերայ  
 ակն յանդիման կ'երեւի . քանզի ինչ է  
 մեր ասլոութեան պատճառը, ինչէն է  
 մեր ամենօրեայ մտաց, սրտի և մարմ-  
 նոյ չարաչար տագնապը, ինչ է մեզ

գէժ՝ յարուցուած հակառակութեան  
 և ատերլութեան առիթը, եթէ ոչ՝ մեր  
 տգիտութեամբ մեր բուն կոչումէն  
 շեղելը, ինչ է ժողովրդեան այսչափ  
 յուզումն ու երկպառակութիւնը, ան-  
 շուշտ մեր տգիտութեամբ սոյն պաշ-  
 տօնին անցարմար և անարժան գտնը  
 լիլը. ինչէ՞ն է որ Աստուծոյ ժողովուր-  
 դը վհատած, հաւատքէն թուլցած,  
 յոյսը կորած և յատուածային խա-  
 ղաղարար սիրոյն հեռացած է, անշուշտ  
 մեր տգիտութենէն, որով ամեն բան  
 տակն 'ի վերայ եղած է և եղծումն ու  
 զեղծումը ամեն ուրեք տիրած է: Սա-  
 կայն Հա՛րք իմ, այս անմիաբանելի  
 ներհակութիւն մի է, Աստուծոյ պաշ-  
 տօնեայ, Արեւելեաց առաջնորդ, ժո-  
 ղավրդեան հովիւ և մտաց խաւարե-  
 լոց լոյս ըսուել, ու տգէտ լինիլ. այս  
 անլուծանելի հակառութիւն է, և այս  
 ընդհանուր անկարգութիւնը բուն ա-  
 սոր համար է, որուն պատճառ ու  
 պատասխանատու ենք նախ մենք, որ  
 առանց զմեզ քննելու՝ հետամուտ կը  
 լինիմք այնպիսի պաշտօնի մը: զոր չի

պիտի կրնանք ըստ օրինի 'ի դուրս տա-  
 նիլ. և երկրորդ զմեզ ընտրող հաւա-  
 նող և ձեռնադրողը, որ առանց մեր  
 ամեն հանդամանաց, կատարելութեց  
 կամ թերութեանց հասու լինելու, ինչ  
 և իցէ նկատմամբ և թերլաղրութեամբ  
 կը յօժարի ձեռք դնել մեր վրայ և կը  
 ցորդ լինիլ մեր ամեն չարեաց ու ա-  
 նանցմէ հետեւելիք բոլոր գայթակղու-  
 թեանց: Քանզի այնուհետեւ կը մըտ-  
 նանք Աստուծոյ տան մէջ, և չգիտնա-  
 լով այն տեղ շարժելու կերպերնիս,  
 մեր արդէն ունեցած բազմաթիւ թե-  
 րութեամբ չար օրինակ կը դառնանք  
 անմեղներու, որոց արիւնը մեզմէ պի-  
 տի պահանջուի:

Ուրջ նկատողութիւն մի. Հա՛րք  
 իմ, սուր ակնարկ մի ձգենք մեր ան-  
 ձին, մեր խորհրդոց, մեր կրից և մեր  
 գործած կամ այլոց գործել թերլաղրած  
 կրողութեանց վերայ. ինչպէս զայս  
 կը գատենք նոյնպէս ալ զմեզ դատենք,  
 և ահա պիտի տեսնեմք որ 'ի մեզ կար-  
 ծուած լոյսը խաւար է, հապա մեզմէ  
 լուսաւորիլ ուզող խաւարը ո՞րչափ



խաւար պիտի մնայ . ինչպէս որ ահա  
բուն իրողութիւնը կը վկայէ : Ար ա-  
նաչառ անձնադատութիւր պիտի յայտ-  
նէ մեզ, որ մենք աշտանակի վրայ դը-  
բուած լուսաւոր ճրագներ չենք, մեր  
պարզ զննողութիւնը ցոյց պիտի տայ,  
որ մենք աշխարհի առջեւ պարզ երես  
երեւնալու և ճակատաբաց տեսնուե-  
լու արժանի լերան վրայ շինուած քա-  
ղաք չենք, այլ մեզ կարեւոր եղած գիւ-  
տութիւններէն զուրկ խաւարի մէջ  
խարխալիող, մոլութեանց և մորորու-  
թեանց բաւոյն մէջ թաքցող և ստու-  
թեան ու խաբէութեան պատրուա-  
կին տակ ծածկուած գործողներ . և ա-  
հա այս ամենը պիտի ապացուցանեն,  
որ մենք ինչ որ պէտք էր լինէինք՝ այն  
չենք, արտաբուստ տարբեր, և ՚ի ներ-  
քուստ տարբեր, երեւոյթով ուրիշ  
և իսկութեամբ անոր ներհակն ենք .  
մենք ճշմարտութե աշակերտներ ենք,  
իսկ մեր այս դրութիւնը ճշմարտու-  
թեան հակառակն է . սակայն ամօթ  
այն մարդուն, որ ստութեան ներքեւ  
սողալու չափ կը ցածնայ, և առաւել

ևս ամօթ, վայ և հաղար նախատինք  
այն կրօնաւորին, որ ընդ պատրուա-  
կաւ գործելու ցածութեան կը ղեջանի  
և այսպիսի վատութեան նախատինքը  
կրելու յանձնառու կը լինի :

Պէտք է սարսափինք ո՞վ պաշտօ-  
նակիցք իմ, հարկ է որ սոսկանք, երբ  
մեր այսպիսի տգիտութեամբ ամեն  
չարիք գործելու կը յօժարինք, երբ ժու-  
ղովուրդը մեր ետեւէն ձգած դէպ ՚ի  
դայթակողութիւն կը տանինք . և երբ,  
կ'ամաչեմ ասել, անձնական օգտի և  
սին փառաց համար նոցա խաղաղու-  
թիւնը կը վրդովենք, նոցա մարմնա-  
ւոր շահուն կը մնասենք և նոցա ան-  
մահ հոգին կորուսանելու առիթ կը  
լինինք, և այս ամենը կ'ընենք, պատ-  
ուական չարք, այս ամենը տգիտու-  
թեան արդիւնք չէ, հասկա ի՞նչ է,  
մեր պաշտօնի պարտքը չի ճանչնալ չէ,  
ուրեմն ի՞նչ է :

Յիսուս Քրիստոս, իրեն հաւա-  
տացողներուն պատուիրեց, « Լ՛յնպէս  
լուսաւոր պէտք է լինի, ըսաւ, ձեր  
լոյսը, որ մարդիկ տեսնելով ձեր բա-

րի գործքերը՝ փառաւորէն ձեր երկնաւոր Հայրը ու Մայր սուրբէրը եւ թէ համայն քրիստոնեայ անհատ պարտաւոր է պահել և կատարել իբրեւ Աստուծոյ ժողովուրդ, իբրեւ երկնաւոր Հօր որդիք, հասպ ո՞րչափ ևս առաւել Արեւելոց պաշտօնեայք, որք մեծամեծ անուններ վրանին առնուլ չեն խղճեր. որ Խոյեակի կ'անուանին և հոգեւոր կաթամբ իրենց սանուկք չեն սնուցաներ քանզի չունին և չեն գիտեր, հովիւ կը կոչուին, և ժողովուրդն 'ի պարարտ արօտս եւ 'ի կենսատու մարգս աւետարանական ճշմարտութեան չեն հովուեր և առ ջուրս հան գրատեան շնորհաց սուրբ Հոգւոյն չեն մակաղեր, և 'ի փարախ երկնապարգեւ խաղաղութեանն Յիսուսի՛ չեն ժողովեր, ըստ որում ագիտութիւն այնտեղ իրենց օգուտ չեն տեսներ. որ Հայր կ'անուանին և չեն խնամեր, չեն գգուեր ու դարմաներ իրենց հոգեւոր որդիքն 'ի Քրիստոս, քանզի հայրութեան ինչ լինելը չեն գիտեր. որ առաջնորդ կը կոչուին և անարժան վարմունքով ու խօսքեւ

րով խտտորնակի կ'առաջնորդեն նոցա՝ չար օրինակ դառնալով, ինչու որ Յիսուսի ըսածին պէս «կոյրք են կուրաց առաջնորդք ու Մայր, Հայրք, դարուս մէջ այս ամենը գործուած անուրանալի ճշմարտութիւններ են. վըչ տանալ պէտք չէ, խոնարհիլ և զգալ պէտք է. զգալ ու զղջալ պէտք է, գուցէ օր դայ, ուր զղջալ և դառնալ ուղենք բայց սնօգուտ լինի»:

Սենք դաստիարակի, ուսուցիչ և վարդապետ կը կոչուինք, շատերնիս այս ալ հերիք չը սեպելով առաւել բարձր անուններու կը ցանկանք. . . և ահա մեք անդաստիարակ, անգէտ և անկամաստ ենք, որով ուսուցանելու պաշտօնն խստաբարձի թողի ըրած ենք, կամ պէտք եղածը չենք ուսուցաներ. ոչ Աստուծոյ տաճարին մէջ, ոչ կրթութեան յարկերու մէջ և ոչ անուանին Աստուծոյ խօսքը ոչ կը բարուղենք և ոչ կուսանինք, և բարձրամտութեամբ կը պանծամք իբր օրէնագէտ, իմաստուն և ժողովուրդ հովուելու ձեռնհաս. անարժան միջոցեւ

րով պաշտօններ կը շորթենք եւ մեր պաշտօնատեղին հասած օրերնէս մեր թշուառութիւնը յերեւան կուգայ... քանզի բաց ՚ի ցուցամուտութենէ, մեզ չինկած գործերու մէջ կը նետուինք և իրաւամբ խայտառակ կը լինինք = 1 սենք Սարգարէին, Հարբ իմ, որ Աստուծոյ կողմէն ազգարարութի կրնէ մեզ, որոյ զանցառութենէն հետեւած անարգութիւնը ամեն ժամանակ կը կատարուի, « Քահանային շրթուները, կըլտէ, պէտք է գիտութիւն արհապանէ, գիտութիւն ստանալու հոգ տանի, և ժողովուրդը նորա բերնէն օրէնքներ պիտի խնդրեն. ինչու որ քահանայն ամենակալ Աստուծոյ պատգամաւորն է »:

Այլ սիրելի Հարբ իմ, մեր բուն պաշտօնը ուսուցչութիւնն է, « Աչ է բարւոյք մեզ թողուլ զբանն Աստուծոյ և պաշտել զսեղանս ». հասպա մենք ո՞ւր թողուցեր ենք մեր այս սուրբ ու նուիրական պաշտօնը, այս վսեմ պարտաւորութիւնը. վայելա՞ծ ենք, կամ զգացած ունի՞նք երբէք այն քաղցր

ու երկնային բերրիանքը, այն համեստ ու սուրբ ուրախութիւնը, զոր կը մատուցանէ անարատ և ողջամիտ ուսուցչութեան արդիւնքը: Տկար արարած մը զորացնել հոգւով, խաւար միտք մը լուսաւորել ճշմարտութք, գայթակղած ու մոլորած քայլ մը ուղղել դէպ ՚ի արդարութիւն, սքբութիւն և ՚ի բարութիւն, մէկ խօսքով աշխարհի վրայ անմուտ արփի ըլլալ, ապագայ սերունդին նախախնամը՝ կազդուրիչը եւ փրկիչը լինել, արգարեւ մեծ են ասոնք, ինքնին փառաւոր են, դիւտիին պատուաւոր և վսեմ, զոր ճանչնալու և որոյ քաղցրութիւնն զգալու համար կատարել պէտք է. սոքա այնպիսի վեհութիւններ են, զորս խօսքով լիտիին բացատրել եթէ չըսեմ անհնար՝ գոնէ ինձ համար խիստ դժուար է. ես միայն խորհելով զմայիլ գիտեմ, նման այն գեղջուկ մարդուն, որ առաջին անգամ իւր մութ խրճիթէն ելած մարդաշատ ու վաճառաշահ քաղաք մի կը մրտնայ, ուր ամեն կողմ նորանոր տեսա-

բաններ կը բացուին առջեւը, հիանալի հոյակապ շէնքեր, զարմանալի աբուէստներ և ակնապարար զմայլելի նկարներ . և այս առարկաներու բազմադիմի նորանոր փոփոխութիւնները տեսնելով կ'աքանչանայ, կ'զմայլի, և չէ կարող խօսիլ . կ'ապշի կը հիանայ և չէ կարող բացատրել : Այս, ես լոկ խորհելով կը կրեմ այս սքանչացումը, բայց արդեամբ մտած ունի՞նք Աստուծոյ բանին բազմադիմի գեղեցկութեան մէջ, սրտասհած ունի՞նք նորա անձառ զմայման . բաբէ՛, սիրով հոգւոյն գրգուսմ՞ծ ենք Աստուծոյ որդիքը, գուրգուրացմ՞ծ ենք երբէք գթալով նոցա աղէտալի կացութեան վերայ, վշտապին բեկեալ սրտիւ նկատմ՞ծ ենք արդեօք աղգին և նորա մատաղ սերունդին տխուր ասպազայն . զանոնք կրթելու, դաստիարակելու և նոցա ուսումն տալու համար սր մէկերնիս զիջած ենք վարժարանաց խոնարհ և անշուք ակթուի մը վերայ նստիլ և մանկանց միտքն ու սիրտը կազդուրել, հոգին պարարել և նորա կարողութիւնները

դարգացնել և բեղմնաւորել : Այն աթոռները, զոր այսօր եկեղեցւոյ պաշտօնեայք ընտրած և իրարու ձեռքէ յափշտակել կը ձգնին, խիստ խարխուլ է և վտանգաւոր, քանզի զայն փառասիրութիւնը հնարած է, և որուն շուրջը անօգուտ հոգեր, ժանտ նախանձ, կենսամաշ կասկածներ, սպաւկանիչ խռովութիւն, վրդովիչ երկիւղ և տագնապ և այլ բիւր տեսակ դժոխային ճիւղակներ մահաթոյն օձերու պէս կը սողան և հանապաղ մարդուս սիրտն ու միտքը կը կեղեքեն և անձողոպրել տագնապներու մէջ կը չարչարեն . իսկ գուրսէն անշուք երեւցած այն համեստ նստաբանը, որ բռնաւ արտաքին հրասպուրանք մի չունի, զոր գթութիւնը պէտք է հաստատէ և որուն վրայ մարդասիրութիւնը իւր ամեն վէհութեամբք պէտք է բազմի, այն պարտուց՝ միանգամայն և երախտեսաց խոնարհ ակթուը կրսեմ, իւր անշուք պարզութեան մէջ այնչափ պերճ է, և համեստ խոնարհութեան մէջ այնչափ բարձր է, որուն շէն հա-

սած աշխարհիս փառաւորներէն եւ մեծ կարծուածներէն և ոչ մէկը . բայց պէտք է դիտնալ որ խարդախ ձեւերով և դբացմունք ու նախտակ պատուուակելով այս սուրբ և պատկառելի աթոռին վերայ բազմից յանդգնող վատը պիտի տուժէ անարգանօք անձին . . . : Չարամիտք արժանի չեն անոր , տգէտք պէտք է փախչին անկէ , այլ և այլ կրից և նկատու մտերու ծառայողները թող սարսափին այն տեղ բարձրանալէ , վասն զի ամբողջ դարեր իրենց դէմ կը զինին , արգարու թիւնը , և ճշմարտութիւնը զիրենք իբրեւ մղեղ անհունութեան մեջ կը խարսկալէ :

Այն տեղ շքեղապէս կը բազմէր Յիսուս , երբ երկնային ճշմարտութիւնը և ընկերային պարտքերը կ'ուսուցանէր ժողովրդեան , և բարէ ինչ վսեմ է իւր տեսքը , որչափ պատկառելի է իւր ներկայութիւնը , այլ սակայն որչափ սիրուն զմայլելի և սրտադբաւ է իւր կեանքն ու խօսքերը . բաց ինչ էր Յիսուսի աթոռը , հողակոշտ մի , և յենարանը ծառ մի . երբ

բեմն ցուրտ ժայռ մի թէ նստարան և թէ յենարան կը լինէր , բայց միշտ խուռն բազմութենէ շրջապատուած էր , շարունակ իւր վարդապետութիւնը լսող սքանչացող և զՆստուած փառաւորող մեծ բազմութիւն մի աննաճանօք կ'ողջունէր , իսկ այդ փառաց կարծուած աթոռներուն վերայ բազմողները միշտ տխուր միայնութեան , կամ աղմուկներու և կամ շողորթութներու մեջ կը գտնուին , որք զիրենք կը բարձրացնեն չարաչար ձրգելու համար , և ահա այս ամենը ամեն օր տեսնող և կրողները , որ չեն զգար և չեն ճանչնար իրենց թշուառութիւնը՝ միթէ տգէտ չէն . ուրեմն նիւթը չէ փառաւորողը այլ հոգին . . . :

Տեսէք ահաւասիկ նոյն պարկեշտ աթոռին վերայ երկոտասան անշուք անպատրաստ և խեղճ ձկնորսներ բազմեցան , երբ զաշխարհ կը լուսաւորէին և ազգեր ու ըզողուներ կաշակերտէին . այն տեղ հանդէսեցաւ իւր բազմաչարչար վշտերէն Սուրբ Ղրիգոր , երբ

ամբողջ ժողովուրդ մի, ողջոյն ազգ  
 մի իւր ահաւոր թագաւորոյն հան-  
 դերձ խաւարի վհէն դէպ 'ի լոյս կը  
 կորզէր. վերջապէս այն տեղ գտան  
 միթարուծիւն Սահակ, Սեսրոյք,  
 Ներսէս և այլ բազմաթիւ Հարբ, որք  
 անխոնջ կուսուցանէին, կը կրթէին և  
 կը լուսաւորէին, և ասոր համար է որ  
 այսօր թագաւորած են նոքա սիրով և  
 երախտօք մեր հոգւոյն, սրտի և մտաց  
 վրայ: Արդ եթէ մեք նոցա յաջորդներն  
 անուանուելու փառասիրուծիւնն ու-  
 նինք, ինչո՞ւ նոցա գործոց նախանձա-  
 ւոր չը լինինք, ինչո՞ւ նոցա շաւղաց  
 հետեւելու արիււծիւնը չունենանք,  
 այլ՝ ընդհակառակն խոտորնակ ծամ-  
 բով փառք որսալու ելնենք. միթէ  
 չե՞նք հաւատացած դեռ, որ մեր  
 կեանքը, փառքը, պարծանքը վեհու-  
 թիւնը, ճոխուծիւնը վերջապէս ա-  
 մեն բան՝ Սիրոյ, խոնարհութեան,  
 և մեր տիրոջ օրինաց պահպանութեան  
 մէջ է. յորոց խոտորելուն հետեւան-  
 քը արհամարհանք և անարդուծիւն  
 է. ինչպէս որ դարերով յառաջ մար-

դարէն իսկ Աստուծոյ կողմէն աղբա-  
 րարուծիւն ըրած է. «Լշահա, կը  
 սէ, զձեզ բողոր աղբաց առջեւ անար-  
 գուած արհամարհուած և երեսէ ձը-  
 գուած ըրի, ինչու որ իմ ճանապար-  
 հըս չը պահեցիք, այլ օրէնքը կատա-  
 րելու մէջ աչառուծիւն կ'ընէիք »:

Տեսէք, Հարբ իմ, տեսէք որ մեր  
 անխայել գործոց բնական հետեւու-  
 թիւնն եղող այժմեան մեր այս ան-  
 պատիւ վիճակը արդէն ծանուցուած  
 է մեզ, և մեր զայն չը գիտնալը տը  
 գիտուծիւն է, գիտնալ եւ չզգուշա-  
 նալը անհնազանդութիւն, յամառու-  
 թիւն և յիմարութիւն է: Եթէ մենք  
 Աստուծոյ խօսքին չենք հնազանդիր,  
 ինչպէս կը յուսանք որ ժողովուրդը  
 մեզ հնազանդի:

Սուրբ գրոց վճիռները, բարոյա-  
 կան կանոնները եւ խրատներն անփո-  
 փոխ են, ամեն ժամանակի համար  
 կարեւոր են, ամեն ատեն նոյն են.  
 մարդկան շարեաց համար նորա պա-  
 րուճակիս սպառնալիքները, նորա մի-  
 ջոցաւ խոստացուած պատիժները միշտ

կատարուած են և կը կատարուին :  
 Սուրբ գիրքը ամեն դարու համար է ,  
 և նա է մեր իմաստութիւնը . մենք զայն  
 չի գիտնալով և չի արդարով , նորա պա-  
 րունահած աստուածային պատուէրնե-  
 րն ու հրամանները չը կատարելով , մի-  
 թէ նորա սպանալեաց ազդեցութե-  
 նէն ազատ պիտի լինինք . ոչ երբէք , այլ  
 միշտ կը կրենք , կզգանք , բայց կամ չգի-  
 տենք և կամ չենք ուղերգիտնալ թէ մեր  
 յանցանաց հետեւութիւնն է այն : Այս-  
 րը աչք չունենալուն համար արեգակը  
 չի ծագած չը լինիր , այլ միշտ կը ծագի  
 և կոյրն ալ նորա ազդեցութիւնը կը լրէ-  
 մէք և սմտօք կոյր լինելուս համար , Աս-  
 տուծոյ խօսքին ազդեցութիւնը չենք  
 կարող խափանել . քանզի այն յաւի-  
 տենահան Օրէնք է : Մենք միշտ մեր  
 անմիտ գործոց դառն հետեւանքը կը  
 կրենք , զոր յայտնած է մեզ Աստուծոյ  
 իմաստութիւնը թէ , « Օ իս անար-  
 գողը պիտի անարգեմ » և զգուշացու-  
 ցած է , որուն եթէ չը հաւատանք ,  
 դարձեալ կը յանդիմանէ զմեզ ըսելով .  
 « Ի՞նչ էր իրոց սրտիւք , որք ոչ հաւատան

Աստուծոյ , և վասն այնորիկ ոչ պահ-  
 պանին ՚ի նմանէ . վայ այնոցիկ որք կո-  
 րուսին զհամբերութիւն , և որք ՚ի բաց  
 թողին զճանապարհս ուղիւս և դարձան  
 ՚ի ճանապարհս թիւրս . և զի՞նչ արաս-  
 ցեն՝ յսրժամ նկատել սկստնիցի տէր » :

Իմաստութիւն պէտք է մեզ , քանզի  
 առաջնորդներ ենք . հմտութիւն կը պա-  
 հանջուի մեզմէ , օրէնք և գիտութիւն  
 կը փնտրուի մեր բերնէն , քանզի վար-  
 դապետներ ենք և Աստուծոյ պատգա-  
 մաւորներ : « Կերպցիները պէտք է ա-  
 ռաջնորդութիւն ստանան » , կրտէ Ի-  
 մաստունը , « Իմաստնոց բազմութիւնը  
 աշխարհի վրկութիւն , և հանձարեզ  
 թագաւորը՝ ժողովրդոց հաստատու-  
 թիւնն է » :

Արդ բազմութիւն առաջնորդք և տան  
 երեց քահանայք պատճառ կը դառնան  
 իրենց ժողովրդոց կորստեան , կը խռով-  
 են դանոնք , կը վրդովեն և կը ցրուեն , ո-  
 րով յայտնի է թէ իմաստուններ չեն ,  
 ուրեմն ինչո՞ւ կը վարեն այն պաշտօնը ,  
 որ իմաստնոց պաշտօնն է , կամ ինչո՞ւ չեն  
 պատրաստեր զիրենք իրենց պաշտօնին

արժանաւոր լինելու : Արդ քանի որ տը  
գէտ անմիտներ են , քանի որ իրենք զը  
րենք չեն սրատրաստեր և քանի որ նոցա  
խմարութեամբ զնասակարեն ազգին,  
ժողովրդեան և աշխարհի, ինչո՞ւ տակա  
ւին պիտի կարողանան վարել այդ պաշ  
տօնը՝ որ հասարակաց օգտակար լինե  
լու համար սահմանուած է :

Իմաստութիւն ու հմտութիւն  
պէտք է մեզ, վասն զի տնտես և Ար  
տուծոյ բանին մատակարարներն ենք .  
արդեթէ մենք մեր պաշտօնի սրտքերը  
չք գիտնանք ու չք սովորինք , եթէ մա  
տակարարելու ժամանակը, կերպը, իւ  
րաքանջիւրին ընդունակութեան և սնն  
դեան համար պէտք եղած տեսակները  
չք գիտնանք , չք պատրաստենք ու չք  
բաշխենք , յայտնի է որ Ատուծոյ որդի  
քը իրենց հոգեւոր սննդենէն զրկած կը  
լինինք , հետեւաբար անհաւատարիմ,  
անձեռնհաս և յանցաւոր կը համար  
ւինք . ինչպէս որ ենք այժմ : Ասան զի  
զրկած ենք ժողովուրդը իրենց հոգե  
ւոր կերակուրէն , ինչու որ մատակա  
րարութեան գործոյն անստեղծակ ենք :

մեզ նման մարդկան գործը չէ այն . խել  
քի , շնորհաց և առաքինութեան տէր  
լինելու է Ատուծոյ տան տնտեսը :  
Նախնիք ալ այսպէս կը հասկնան , ինչ  
պէս որ յառաքելոց անտի աւանդուած  
է իրենց . «Օ ի զայսպիսի խահագործել  
կերակուր և մատուակել ըմպելի , ա  
բանց է բարեաց և քաջուսումնութե  
հռչակաւորաց , որք բաւական են ա  
ծել հասուցանել զանկատար որ իսյայր  
կատարեալ 'ի չափ հասակի կատար  
մանն 'Քրիստոսի ' : Այսպէս կը խօսի  
Յովհան վարդապետ , Սարկաւազ մա  
կանուանեալ իմաստուն պաշտօնեայն ,  
որով յայտնապէս ըսել կուզէ թէ  
չարերուն , մոլիներուն և անիմաստնե  
րուն գործը չէ այս մեծ մատակարա  
րութեան պաշտօնը կատարել : Սող  
ներն , կամ թէ ըսինք , իրենց մէկ ան  
կարգ բաղձանաց գերի եղողները չեն  
կարող այս պաշտօնը կատարել , քան  
զի թէպէտ և համայն գիտութիւնք  
և ուսմունք սովորած լինին իմաստուն  
չեն . մոլիներն օգտակար սկզբունք չեն  
կրնար ունենալ , և եթէ լաւութիւն



մի ընեն՝ այն դիպուածակիան է: Որչափ  
օգտակար հոչակուած մարդիկներ, որք  
իրօք չարեր են և վնասակար, ժամա-  
նակ ժամանակ և բուն այսօր ալ մտած  
են ու կը մտնեն ազգային հոգեւոր և  
մարմնաւոր պաշտամանց մէջ, սրչափ  
խօսքով սկզբունք պաշտողներ գիտենք,  
որ գործով հակառակ են իրենց սկզբ-  
բան, որով յայտնի է թէ ոչ սկզբունք  
ունին և ոչ ալ սկզբան ինչ լինելը գի-  
տեն. և այս կերպով ազգը կը խաբեն  
և լրագիրներէն ոմանք ալ կամ ցած  
նկատումներով և կամ տգիտութեամբ  
գոյլեստներ կը շոայլեն այնպիսեաց և  
ազգին տունը կաւրեն: Այնպիսի Հո-  
մերք հանդերձ իրենց Աքիւլլեսներով հը-  
րապարակաւ խայտառակութե՛, պաշ-  
տօնէ խապառ դադարման և անարգա-  
նաց արժանի են, քանզի երկուքն ալ  
միտայէս վնասակար են հանրութեան,  
քանզի երկուքն ալ շահամոլ նենգա-  
միտներ, խաբեբայ կեղծաւորներ եւ  
լաւութեան պատրուակաւ գաղտնի  
թշնամիներ են. որք միտայէս ազգէն  
կը սնանին, կ'աճին և կը փառաւորին

բայց երկուքն ալ ազգը վնասուց և կո-  
րրատեան կը մատնեն: Այն, այսպէս են  
ուխտադրուժ կրօնաւորներն ու խա-  
բեբայ և շահամոլ խմբագիրները, ինչ  
վնաս որ կարող է հասցնել ճշմարիտ բ-  
կղբունքէ զուրկ խմբագիր մը, նոյն վնա-  
սը կուտայ տգէտ ու մոլի պաշտօնեայն.  
և փոխադարձաբար: Այլեղեցոյ հովի-  
ւը տգէտ ու նենգաւոր լինել, կընշա-  
նակէ լոյս չը տուող բայց տոչորող արե-  
գակ, չտաքցնող կրակ, չի կշտացնող կե-  
րակուր: Իխտունքայց մոլի կրօնաւորը,  
բոտ իմաստնոց, ամեն կարգի գիտունք  
ալ, գիրք շարկող աւանակի կընմանին.  
բայց այս նմանութիւնը թերի է. իրաւ  
է որ ինչպէս գրաստը իւր շարկած գըր-  
քերէն օգուտ չի քաղեր, նոյնպէս մոլի  
գիտունն ալ իւր գիտութիւններէն,  
բայց գրաբարձ գրաստը գոնէ ուրի-  
շին վնաս ալ չունի, բայց մոլի գի-  
տունը թէ իւր անձին եւ թէ այլոց  
բազմաց հազարաւոր վնասներ ունի.  
զոր բնութեան մէջ ուրիշ բանի չեմ  
կարող նմանցնել, և ոչ իսկ կարող եմ  
հաւատալ թէ նորա հաւասար վնա-

սակար բան մը գտնուի բնութեան մէջ . . . : Արեւմտեան պէտք չէ խաբուել անոնց , որ գառներու հանգերձով կը մօտենան մեզ բայց իրենց ներսդին յափշտակիչ գայլեր են . արաքուստ իմաստուն , բազմագէտ և ամեն բանի հմուտ կերեւին բայց ՚ի ներքուստ յի մար , ագէտ և թերամիտներ են , ինչու որ չար են , մոլի մոլորեալ են , և վատթար կը համարուին քան զկողոպտիչ աւաղակս և քան զկտի անառա կըս : Իմաստուն չեն կրսէնք նոքա՝ որ ամեն բան գիտեն բայց իրենք զիրենք չգիտեն . մորութեան և առաքինութեան վրայ ճառող և նոցա օրէնքներուն խելամուտ եղող իմաստուն կաբձուածները կրնան իրօք իմաստուն համարուիլ , մինչդեռ մոլի են և ոչ առաքինի . Ի՛նչ օգուտ որ նոքա աղբու կերպիւ համողիչ և բռնադատիչ փաստերով կը պարսաւեն մորութիւնը եւ կը գոլեն առաքինութիւնը , բայց փաստերէն ամենազօրաւորը ներհակ կողմին կը գործածեն . այսինքն , անձնական օրինակը , սոսիւ և ուսուցանելու օ

րէնքը , որ ամենէն աւելի հզօր համողիչ փաստն է , սխալ տեղ կը գործածեն : Քանզի խօսքով գովածին գործքով չը գործադրելով կատեն ու լուելայն կը պարսաւեն , իսկ պարսաւածնին գործով յօժարակամ կատարելով լուելայն գոված կը լինին , և իրենց խօսածներն ինքնին ջրած . և ահա այս պատճառաւ քարոզք , բեմբասացութիւնք , խրբատք և յորդոցք սովորական բաներ դարձած՝ ապարդիւն կը մնան . որով ժողովրդեան մէջ Նստուծայ խօսքը լուսու սովը տիրապետած է , և ամեն մարդ հոգեկան սաստիկ անօթութենէն ահա իւր մարմնայն կէսը սւտերու վըրայ է . նորա կենաց մեծ մասը ապարդիւն կը մաշի և հեշտախտութեամբ կը փձացնի . . . : Աւ այս աղետալ կացութիւնը տեսնելով ոչ միայն բզգուշացնող չի կայ , այլ և այն իմաստուն կարծուածներէն օրինակով քաջալերող և խրախուսողներ բազմութիւցաւ է ըսելն ու լսելը , որ այս չարեաց պատճառ և ապականութեանց օրինակ եղող Ալեղեցւոյ պաշտօնեայներ

ալ կան։ Ի՞նչ պիտի ըսէ այն հոգեւոր հովիւը՝ երբ իւր ժողովուրդը Աստուծոյ ատելի գործոց մէջ տեսնէ, քանի որ ինքն թէ բանիւ և թէ գործով պատճառ տուած է նոցա մեղաց և մողութեանց։ Ի՞նչպէս կարող է արգելուլ երբ իւր ուսուցածը գործադրուած տեսնէ, անշուշտ պապանձի պիտի, քանզի խօսելիքն ալ անօգուտ է և ահա անդէն կորոյս իմաստութիւնը։ Իսկ եթէ համարձակի իւր չգործադրածը այլոց ուսուցանել, անշուշտ պիտի յանդիմանուի՝ նախ Աստուծմէ որ կը սէ։ «)ակայն մեղաւորին ասէ Աստուած. իսկ դու ընդէր բնաւ պատմես զարդարութիւն իմ, կամ առնուս զուխտ իմ՝ ՚ի բերան քո։ Օ՛ի դու ատեցեր զխրատ իմ, մերժեցեր և յետս ընկեցեր զամենայն բանս բերանոց իմոց։ Թէ տեսանէիր զգողս, ընթանայիր ընդ նոսա, և ընդ շունս զնէիր զբաժին քո։ Բերան քո յաճախէր զարութիւն, և լեզու քո նիւթէր զնենդութիւն։ Աստեալ զեղբօրէ քումմէ չարախօսելիր, և ՚ի վերայ որդւոյ մօր քո

զնէիր զգայթակղութիւն։ Օ՛յսա ա՛մենայն արարեր և լուցի քեզ. կարծեցեր անօրէնդ ՚ի մտի քում՝ թէ եւես քե՞զ նմանիցեմ։ Արդ յանդիմանեցից և կացուցից զայս ամենայն առաջի քո. իմացարուք ամենքեան որոց մոռացեալ իցէ զԱստուած։ Արդ որդ իւր խղճէն, որ կազդէ միշտ բրածին ապօրինաւորութիւր. և ապա իւր ժողովուրդէն, ազգէն, եղբայրներէն և զաւկըներէն, ինչպէս որ ահա այսօր փորձով կը տեսնենք, և կատարելապէս պէտք է համոզուած լինիմք որ այս ամենը մեր պաշտաման սրբութիւնն ու վեհութիւնը չի պահելնուս հետեւութիւնն է, և արդարութեան վրէժխն դիր պատուհասը, զոր Աստուած ՚ի ըսկզբանէ սահմանած է և որն որ վերջին մշտնջենաւոր պատուհասին և արդարութեան կատարեալ վճարքին մէկ փոքրիկ ազդարարն է, զոր եթէ չոգզանք՝ բանական չենք, և եթէ հասկը նալ չուղենք՝ իմաստուն չենք։

Իմաստութիւն կը պահանջուի սեղմէ, այո՛, իմաստութիւն ՚ի բանս, ի

մաստուծիւն 'ի խորհուրդս, 'ի գընացս և յամենայն շարժմունս . իմաստուծիւն, նախ ուղղուելու և ապա զայս ուղղելու : Անօգուտ են բանից առատուծիւնք, սնտոի են բազմաթիւ գիտելեաց հմտուծիւնք, չեն ազգեր իշնանական սաստք և այլ արտաքին հաղարաւոր միջոցք՝ առանց կենդանի օրինակի . եթէ իմաստուն լինինք՝ խաչափառին առակը կարող է մեզ համար ազդու խրատ մի լինիլ .

— Աաչափառին խրատ կուտայ մայրը, որդեակ՝ ուղիղ քայլէ, կրսէ . իսկ որդին կը պատասխանէ . — մայր իմ ճիշդ քեզ նման կը քայլեմ :

Ըստ ուղիղ օրինաց ճշմարիտ բարոյականին, բոլոր մարդիկ պարտաւոր են բանիւ եւ գործով իրարու բարի օրինակ լինիլ . այս՝ առ ընկերս ունեցած պարտուց մի կարեւոր մասն է, որուն ենթակայ է մարդէս կը ըստ ամենայնի, և որուն զանցաւորութեան հետեւանքը խիստ աղետալի է և որուն տեղ սուրիշ ոչինչ չէ կարող փոխարինել, քանզի ընկերը գայ-

թակղեցնել՝ սոսկալի չարութիւն է . և ճնած լինելու կամ ապրելու արժանի չէ . արդ հասարակ մարդիկ եթէ իրարու խօսքով և գործքով չար օրինակ լինելով պարտազանց կը գտնուին և դատասպարտութեան արժանի են, ուրեմն մեզ ի՞նչ պիտի լինի . ո՞ւր պիտի փախչինք և ուր պիտի թաքչինք՝ մենք որ մարդ լինելէ զատ քահանայ, ուսուցիչ և առաջնորդ ալ ենք . ի՞նչ բան կարող է աղատել զմեզ սոյն անհրաժեշտ պարտաւորութենէն և պատասխանատուութենէն : Այն ո՞ր առանց նաշնորհութիւնը կարող է արդարացրնել զմեզ, եթէ մեր սուրբ կարգն ըսես, ես զայդ մտածելով կը սոսկամ, քանզի երկու կողմէն ահագին արգելքներ և սպառնալիք կը տեսնեմ, նախ իմ Տէրս կրսէ . « Արու՛մ շատ արւաւ շատ ինդրեսցի, և որում բազում աւանդեցաւ առաւել եւս պահանջեսցի » . և թէ, « Ար ոք լուծցէ մի ինչ 'ի պատուիրանացս յայցանէ 'ի փոքունց և այնպէս ուսուսցէ զմարդիկ, փոքր կոչեսցի յարքայութեան երկնից » .

և երկրորդ Յիսուսի ճշմարիտ աշակերտ  
 ընտրեալ անօթը կրսէ . « Մի անիոյթ  
 առնէր զչնորհացդ , որք 'ի քեզ են ,  
 որք տուան քեզ մարգարէութեամբ 'ի  
 ձեռնադրութենէ երկցութեան . . . ըզ-  
 գոյ լինիջիր անձին և վարդապետու-  
 թեան՝ և 'ի դմին յամեսջիր , զայդ ե-  
 թէ առնիցես և զանձն ապրեցուսցես  
 և զայնոսիկ՝ որք քեզն լսիցեն » : Աջօթից  
 և պաշտամանց յաճախութիւնը պի-  
 տի ըսես , այդ ալ տեսակ մի գայ-  
 թակղութեան առարկայ բրած ենք .  
 քանզի եթէ կատարենք՝ պարտու պատ-  
 շաճ երկիւղածութիւն չենք ունենար ,  
 Ատուծոյ փառաց , մեծութեան եւ  
 սրբութեան արժանաւոր ոչ վարք և ոչ  
 պատրաստութիւն կունենանք . ցու-  
 ցամոյլութեամբ և սնափառութեամբ  
 կերեւինք Ատուծոյ սուջեւ , անոր հա-  
 մար ալ կարհամարհուինք և աղօթքնիս  
 չի լուիր : Ատերնիս ալ շատանդամ  
 կը հեղգանք և կը զանանք . ուզած  
 ատեննիս կը կատարենք և չուզած ա-  
 տեննիս անիոյթ կը մնամք , սակայն  
 պէտք է դիտնանք որ աղօթքն ևս նուի-

րական պարտք մի է , որ միւս պարտուց  
 հետ անհրաժեշտ կը պահանջուի , և ո-  
 ըոյ զանցառութիւնը պարտադանցու-  
 թիւն է և անհնադանդութիւն . աս-  
 տուածային հրամանաց , և ապերախ-  
 տութիւն ընդգէմ աստուածային բա-  
 րերարութեանց և գայթակղութիւն  
 հասարակութեան ուրեմն այդալ զմեզ  
 չարդարացներ , այլ ատու ևս դատաս-  
 տանի և պատասխանատուութեան են-  
 թակայ եմք . հասար ի՞նչ բանի վստա-  
 հացած եմք . ոչ մի առարկայ չունինք  
 վստահութեան , բայց միայն մեր սգի-  
 տութեամբ ունեցած կամապաշտու-  
 թիւնն ու յամառութիւնը , որուն ի՞նչ  
 աստիճան յամարութիւն լինելը ինքնին  
 յայտնի է : Ինչո՞ւ չենք կարգար և հնա-  
 զանդիր Առաքելոյն սա կենսաւէտ խրա-  
 տին որ 'ի դէմն Տիմոթեայ մեզ ամենե-  
 ցուն կը խօսի . « () րինակ լինիջիր հաւա-  
 տացելոց բանիւք , գնացիւք , սիրով , հա-  
 լատով , սրբութեամբ . մինչեւ դամ  
 ես միտ դիր ընթերցուածոց մխիթարու-  
 թեան և վարդապետութեան » : Ի՞ար-  
 ձեալ . « () ձեռս լքեալս և զձունկս կը

Թոռս հաստատեցէք, և զլաւ լից ուղե-  
ղոս արարէք ոտից ձերոց, զև մի՛, որ կազն  
իցէ գլորիցի՝ այլ մանաւանդ բժշկեսցի-  
զեսաղաղութեան զհետ երթայք ընդ  
ամենեսին և սրբութեան, առանց ու-  
րոյ ոչ որ տեսանէ զտէր ։ Վարձեալ .  
“ Եւ այնպէս յանցուցեալ յերջարս ,  
և զխիղճ մտաց տկարացն զայրացու-  
ցեալ , ՚ի Քրիստոս մեղանէ ։ ”

Երանի՛ բեզ, Պօղէ՛, որ այդպիսի  
սուրբ խորհուրդներով իմաստնացած  
ես , և ոչ մեր ժամանակի յիմարական  
ցնորքներով . երանի՛ և բեզ, Տիմոթե-  
ոս , որ այդպիսի անմահական խոր-  
հուրդներով և յաւերժական սուրբ  
սիրով վառուած բարբոքած ուսուցիչ  
վարդապետ մի ունիս , որ կարող է  
զբեզ և բեզ լսողներն փրկել և Վստու-  
ծոյ արքայութեան արժանաւոր ժա-  
ռանդներ ընել . իսկ մեք ըստ յանդի-  
մանութեան Տեառն , թէպէտ չենք  
յաճիր ընդ ծով և ընդ ցամաք եկա-  
մուտ մի , աշակերտ մի որսալու , սա-  
կայն մեր շուրջը եղող և զմեզ տեսնող  
ամենուն ալ չարեաց պատճառ կը լի-

նիմք , և զանոնք որդիս գեհենի կը չե-  
նեմք կրկին եւս քան զմեզ ։ Այլ երջա-  
նիկ հողիներ , եկէ՛ք , և տեսէ՛ք թէ  
մեր ու ձեր վարուց մէջ ինչ մեծ տար-  
բերութիւն կայ , բացէ՛ք մեր այժմու  
սառնասիրտ կրօնաւորացս առջեւ ձեր  
աստուածսիրութեան և մարդասիրու-  
թեան վնեմ զգացմամբ բռնկած սրը-  
տերը , որպէս զի գուցէ նոցա սրտագ-  
րաւ ճառագայթից ազդեցութեամբ  
մերն ալ ջերմանայ ։

Նովեբ Նայոց , աչքերնիդ բա-  
ցէք , մտքերնիդ և սրտերնիդ ալ պար-  
զեցէ՛ք , տեսէ՛ք , թէ նախնիք իրենց սրբ-  
բութեամբ , հաւատքով , արդարու-  
թեամբ և բարի վարքով ի՛նչպէս շարու-  
նակ մեր անարժան կեանքը կը յանդի-  
մանեն . ի՛նչ պէտք է հեռի երթալ ,  
ահա այժմ իսկ ամեն օր կը շտամբանք կը  
տեղան մեր գլխուն . նոյն իսկ անարժան  
ներէն անպամ յանդիմանութիւն կը կը-  
րեմք . մեր քարտուրդները քարասորխոցած  
է զիրքսեր մանուկները ։ Պաշտօնեսայք եկե-  
ղեցւոյ , մեր նախորդներն գրոց վար-  
դապետութեան մտադրութիւն կը-

նեն և այն տեղ մխիթարութիւն կը  
 գտնեն . իրենց իմաստութիւնը սուրբ  
 գրոց ուսումը կը համարին . « Ի ման-  
 կութենէ զգիրս սուրբս գիտես , որք  
 կարողք են իմաստուն առնել զքեզ  
 'ի փրկութիւն 'ի ձեռն հաւատոց 'որ  
 'ի Քրիստոս Յիսուս » : Իսկ մեր ոչ  
 թէ միայն 'ի մանկութենէ չենք գի-  
 տեր , այլ և մեծութեան ատենն ան-  
 գամ , հարկ եղած ատենն անգամ ոչ  
 գիտենք և ոչ կուսանինք . անոր հա-  
 մար է , որ չենք « Բարոզեր Մտուածոյ  
 խօսքը . վրայ չենք հասնիր ժամու և  
 տարածամու . անոր համար է , որ չենք  
 կարող ստատել , յանդիմանել , և ա-  
 մենայն երկայնամիտ վարդապետու-  
 թեամբ մխիթարել . » և ասոր համար է  
 որ ամեն կողմէն ամենայն որ կ'արհա-  
 մարհէ զմեզ . այս պատճառաւ՝ ալ  
 ողջամիտ քարոզութեան մտիկ ընող չի  
 կայ . հայպ « Լինն Տէր իրենց յանկո-  
 թիւն , և իրենց ակնջայ խաբողւոն համեմար  
 վարդապետներ որոշած շիղած են և անոնց  
 յօժարութեամբ կը լսեն » , յորոց օգուտ  
 մի չի շահելէն զատ՝ չարաչար կը վը-

նասին : Լնշուշու մեր ազիտութիւ-  
 նը առիթ տուած է ժողովրդեան՝ որ  
 իւր « Լսելիք ճշմարտութեան խօսքն կը  
 շարժեն էն առապելներո՝ Տէր կիցնայ » ,  
 քանզի մեզմէ շատերը փոխանակ ըզ-  
 գատտ կենալու , փոխանակ ամեն պա-  
 րագայի մէջ հաւատքին համար ճիգ  
 և աշխատանք թափելու , փոխանակ մեր  
 պաշտօնն իւր պայմաններով կտտա-  
 ըեալ հաստատուն բռնելով աւետա-  
 բանչի գործ գործելու . ընդհակառակն  
 մեր մարմինն ու կիրքերը պաշտեցինք ,  
 մեր օրինադանցութիւնքն արգարացը-  
 նելու և մեր խղճի խայթերն մեղմելու  
 համար՝ ստուածոյ խօսքը թիւրեցինք կա-  
 մակորեցինք 'ի կորուստ անձանց մերոց  
 և այլոց . օրէնքը քարոզելու տեղ ժո-  
 ղովրդեան կիրքերը շփեցինք , որպէս  
 զի մերն ալ ծածկուի . փոխանակ Մտ-  
 տուածոյ խօսքը արդեամբ Հոգոյն և  
 յօրութեամբ քարոզելու , ցնորական խօս-  
 քերով և տուտ ու փուճ առասպելնե-  
 րով մեր յիմարական հանճարը ցոյց  
 տալ ուղեցինք և ոչ Մտուածոյ օրէնքն  
 ու ճշմարտութիւնները . անմիտ փա-

առաջընթացքը և յիմար երեւակայ-  
 ութեամբ առաւել մեք զմեզ քարոզելնս  
 քան թէ զՅիսուս Քրիստոս . փոխա-  
 նակ զմեզ Քրիստոսի համար ժողովրդեան  
 ծառաներն անուանելու , թերամտու-  
 թեամբ նոցա պերը , իշխանը , բռնաորը ,  
 հարստահարիչը և հարուստիչը դարձանք . և  
 ահա այսպէս մեր մեր պաշտօնին ան-  
 հնազանդ գտնուելնուս համար , մա-  
 նուկն ընդ ծերոյն , կրասերն ընդ աւա-  
 գին , և անարզն ընդ պատուականին  
 կ'ընդհարկանի : Կամաչեմ ասել տկար  
 օրիորդ մը իրաւացի փաստեր կ'ունե-  
 նայ զմեզ և մեր դիտապետն յանդի-  
 մանելու և խրատելու . և երանի թէ  
 խրատուած լինէինք . սակայն հազար  
 ամօթ մեզ որ այսպիսի պարագայից  
 մէջ ապառուժ կը մնամք . և երբ ու-  
 բիշն զմեզ կը խրատէ , երբ մեր չի  
 գիտցած մէկ բանին վրայ կը խօսի ,  
 փոխանակ բանական խորհրդով միտ  
 դնելու , խոնարհութեամբ ընդունելու  
 և ըստ ճշմարտութեան դատելու , ըստ  
 աչս կը դատենք , և կը զայրանանք . նաև  
 շատերնիս նոցա դէմ յիմարութեամբ

փտուն զէնք մը ունինք , զոր խկոյն կը  
 գործադրենք . այն է , բողոքական կամ  
 անհաւատ ըսել . առանց խորհելու՝ որ  
 այդ անզգոյշ անուանարկութիւնը ,  
 այդ կամապաշտ լեզուի զրպարաու-  
 թիւնը ինչ աղէտներ բերաւ ազգին  
 գլխուն . առանց մտածելու , որ այսօ-  
 բուան աղբիւն կրօնափոխութեամբ ու-  
 նեցած բաղմաճղի պարպատեալ վի-  
 ճակը այդպիսի կամակոր կրօնաւորնե-  
 բու անզգոյշ և թիւրադատ լեզուէն  
 յառաջ եկած է : Պահութիւն Սու-  
 տուծոյ , թէպէտ հիմայ շատերը կըզ-  
 գան եւ գիտեն կրօնափոխութեան  
 վատթարութիւնը , վնասակարութիւ-  
 նը և վրէժխնդրութեան ամենէն ցած  
 ու նուաաստ կերպն ըլլալը , սրով և չեն  
 զնջանիր այդպիսի լեզուաց պատաս-  
 խանելու համար կրօնք փոխելու , սա-  
 կայն միշտ վշտառիթ են այդ խօսքերը  
 և վհատեցուցիչ , զբզբող են և վրդու-  
 վիչ . քանզի ամեն մարդ պատիւ ունի .  
 շատ անգամ այդպիսի անզգոյշ անուա-  
 նարկութենէն կարող է մարդ այնպիսի  
 միջոցներու դիմել , որ կրնայ քան վրօնա-



փոխութիւնն աղետալի լինիլ . արդ ա-  
մեն անոնք , որ այս ամենը գիտնալով  
հանդերձ կը յանդգնին յանիրաւի  
ղայս բողոքական անուանել՝ որք իրօք  
բողոքական չեն , կը նշանակէ թէ  
բաց ՚ի տգիտութենէն , չարասիրտ և  
նենգաւոր ալ են . իրենց յիմարական  
գիտութեան և փտած աստուածա-  
բանութեան նուաստութիւն մի չի  
գալու համար կը զբարտեն , այլոց  
վարկը կը կոտրեն որ իրենք իրենց խա-  
ւարային ծածկութիւն տակը անխղճա-  
բար գործեն . բայց ինչպէս ըսի ան-  
ցաւ այն ժամանակը , Հարք , հիմնց  
այդպիսեաց դաղանիքն յերեւան եկած  
է , ըստ անփոփոխելի վճռոյն Տեառն  
մերոյ՝ թէ « Չիք ինչ ՚ի ծածուկ որ ոչ  
յայտնեսցի » . ամեն մարդ սովրեցաւ  
որ կորստական նարատակներով կրօնա-  
փոխութիւնը որչափ ամօթալի է . մա-  
նաւանդ քրիստոնէին համար բնաւ  
առիթ մը չի կայ կրօնափոխութեան .  
այս , ձեր այդպիսի զբարտութեան  
պատճառաւ կրօնք փոխող չի կայ այժմ  
խելքը գլուխն եղողներուն մէջ , բայց

յայտնի է , որ ձեր բրածն ալ ոչ ար-  
դարութիւն է , ոչ իրաւունք է և ոչ  
խի վայելուչ . այլ է , որ հաստատու-  
ած և ստոյգ տարակրօնի մը թիւր  
կարծիքը հերքելու փաստին մէկն ալ  
նորա տարակրօնութիւնն է , բայց հա-  
մակրօն եղբօր մը մեղ դէմ հակառա-  
կելուն կամ զմեզ խրատելուն համար  
բողոքական է ըսել և չիկրնալ ապացու-  
ցանել՝ ցաւալի է և ամօթ . մանաւանդ  
խորհիլ հարկ է , որ եթէ մեր եղբօր կար-  
ծիքը իրօք թիւր է նորա թիւր կար-  
ծեաց , վնասակար սկզանց և մողորեալ  
գաղափարաց գուցէ դու պատճառ-  
եղած ես , խօսքով և գործքով տեղիք  
տուած ես անդուշաբար . ուրեմն  
փոխանակ անոր յանդիմանութենէն  
խրատուելու օգուտ քաղելու , փո-  
խուելու և անձամբ բարի օրինակ աա-  
լու , ինչո՞ւ կը զայրանաս և կ'անուա-  
նարկես , չէ՞ որ այն ալ մարդ է , չէ՞ որ  
քեզի չափ , և թերեւս քեզմէ աւելի  
անկեղծ ու սուրբ հաւատք եւ փա-  
փուկ զգացմունք ունի իւր կրօնին վե-  
րայ , իւր հոգւով և ճմարտութեամբ

պաշտած ճշմարիտ Աստուծոյն վրայ .  
 ինչո՞ւ կը վերաւորէք յամսու կամա-  
 պաշտութեամբ ձեր եղբօր սիրտը . ու  
 թոյ համար Յիսուս Վրիստոս արիւն  
 թափած է . և որուն միտքը երբեմն  
 կրնայ սլանալ իւր Արարչին քով եւ  
 գանգատիլ ձեր վրայ : Գոնէ ձեր պա-  
 տուոյն խնայեցէ՛ք , մտածելով՝ որ ե-  
 թէ այն մարդիկն ալ ձեզ նման անխու-  
 հեմ և զրպարտիչ լեզու ունենան՝ կա-  
 թող են բիւրապատիկ ամբաստանու-  
 թեամբ զձեզ անպատուել , որ ձեր  
 անվայել գործքերովն աւելի արժանա-  
 ւոր ալ էք . սակայն ես կրտամ , որ ու-  
 թիչն պատիւը չը ճանցող և ըստ ար-  
 ժանւոյն անոր չի խնայողը ինքն պա-  
 տիւ չունի և պատուոյ ինչ լինելը չը  
 գիտեր , հետեւաբար ինչպէս առաջ  
 ալ ըսի , ամեն տեսակ մոլութիւն ան-  
 կէ կոպատուի . ուստի և ըստ իս խիտտ  
 զգուշալի է իւր կենակցութիւնը :

Ի այց սլ յանցաւոր պաշտօնեայ ,  
 այդպէս ընելովդ քու յանցանքդ չի  
 ծածկուիր . ուրիշ բամբաստելով , զըր-  
 պարտելով անուանարկելովդ դու չես

արդարանար , քու յանցանքդ միշտ  
 յանցանք կը մնայ և դու գէշ կը ճանց-  
 ցուիս , եթէ կուզես արդարանալ՝  
 դարձիր . վատութիւններդ փոխէ , քու  
 պաշտօնիդ մէջ ունեցած ագիտու-  
 թիւնդ լուսաւորէ , պաշտօնդ հաս-  
 տատուն բռնէ , խօսէ ինչ որ կը վայ-  
 լէ ողջամիտ վարդապետութեանդ՝ Աս-  
 տուծոյ խօսքը ուսուցանելու մասին  
 հաւատարիմ եղիր , որ ողջամիտ քա-  
 թողութեամբ կարող լինիս մխիթարել ,  
 և ներհակողներն ալ յանդիմանել . ին-  
 չու որ շատեր կան միտք հրապուրող  
 խելք գողող , զրախօս , անհնազանդ-  
 ներ , որք զոչաբաղութեան համար  
 տուներ կը կործանեն՝ պէտք չեղած  
 բաներ սովեցնելով . . . խօսքով ա-  
 տուածապաշտ կը ձեւանան և գործ-  
 քով կ'ուրանան , որք սխիւժ և անհաւան-  
 են և բոլոր բարի գործերու մէջ ան-  
 պիտան . զորս պէտք է պապանձեցը-  
 նել . . . - Ինչո՞ւ . սուրբ և ողջամիտ գի-  
 տութեամբ , ուսմամբ և բանին վար-  
 դապետութեամբ , մանաւանդ գործով  
 . . . : Լսենք , պաշտօնակիցք իմ . մեր

երանելի Հօր Սուրբ Աերսէս Շնորհալուոյն . « Այլ բանք բերանոյն մի անմրտաբար խեղկատակութեամբ կամ աշխարհօրէն զառականս կամ զանկածութիւնս 'ի լեզուն յեղյեղելով աւնարգել զքր . այլ բղխեսցէ սրտիւն զքան բարի . . . յօգուտ և 'ի շահս լինել լտողաց և մի 'ի վնաս և 'ի տաղալիութիւն և պատճառս աղարտելոյ զառաքելականն պաշտօն » : ( Մարգարէական )  
 Վիտեք անշուշտ որ մենք ասոր ներհակն ենք այսօր . . .

Աշխարհի մէջ թագաւորք իրենց աթոռակից պէտք է ունենան իմաստութիւնը , որպէս զև վայելուչ կարգով և խաղաղութեամբ թագաւորեն ,

- Ի՞նչ են թագաւորք ,

- Ժողովրդեան վարուց , կենաց և ընկնց հսկող քաղաքական պաշտօնեայներ , նոցա բարւոյն համար խորհող և արնող ժողովրդէն փառաւորուած շքեղաշուք սպասաւորներ , որք պէտք է իրենց պաշտօնը հաւատարմութիւն և արդարութեամբ կատարեն , ապա թէ ոչ թող սոսկան այն կեցցի՛ կան

չող խաժամուժէն , որ իշխանութիւնն ունի նաեւ անկցի գոչելու . կամ թող սոսկան յաւիտենական արդարութենէն որ կարող է խրատել զանազան ներքին և արտաքին հարուածներով :

Ըստ մասին այսպէս ենք և մէք : Ժողովրդէն իւր պատուոյն և իւր փառաց համար զմեզ կը փառաւորէ կը բարձրացնէ և մէք այն պատիւը մեզ սեպհականելով ժողովրդը կը մոռնանք , այն փառքն ու մեծութիւնը , այն յարգանքն ու բարձրութիւնը բուն մեր արժանիքն համարելով կը խրոխտանք և մեր պաշտօնները բարձի թուի կրնենք :

- Ի՞նչ ենք մենք .

- Ժողովրդեան բարւոյն հսկող , սրբութիւն , արդարութիւն եւ լոյս մատակարարող պաշտօնեայներ . նորա վարուց և բարուց ուղղութեան հրահող պահապան և կրօնական սպասաւորներ , մարդկան սրտերը Մտուածոյ բնակութեան արժանաւոր բնակարաններ պատրաստելու համար որոշուած ծառայներ . իրաւ , ծառայութիւն է

մեր պաշտօնը, այլ իւր տեսակին նը  
կատմամբ մէհ է քան զամենայն իշխա-  
նութիւն. սակայն իւր վեհութիւնը  
խոնարհութեան և քաղցրութեան մէջ  
է. իւր փառքն ու պատիւը՝ իւր պաշ-  
տամանց անթերի կատարման մէջ է,  
իւր պարծանքը՝ իւր գործոց արդիւն-  
քն է, և իւր բարձրութիւնը՝ Մտու-  
ծոյ օրինաց պահպանութեան մէջ է.  
վերջապէս մեր երկնաւոր Հօր անու-  
նը փառաւորել տարու արժանաւոր  
գործոց մէջ կը կայանայ մեր արժանի-  
քը և փառքը. և ոչ թէ տգիտու-  
թեան շաղիխաղիութեան և դատար-  
կաչօջիկ սնտոխբանութեանց մէջ:

Այլ թագաւորին լու թագա-  
ւորելու համար իմաստութիւն պէտք  
է, առաւել եւս մեզ քանդի նա մարմ-  
նոյ՝ իսկ մեր հոգւոյ հետ առնչութիւն  
ունինք. եթէ աշխարհի հազարապետ-  
ները թշնամեաց յաղթելու և ընտիր  
գտնուելու համար իրենց գործոց վե-  
րաբերեալ ուսմանց գիտութիւն, հըմ-  
տութիւն և կրթութիւն պէտք է ունե-  
նան, առաւել ևս մեք, քանզի մեր զե-

նուորութիւնը և մեր պատերազմական  
պատրաստութիւնները մարմնոյ եւ ա-  
րեան հետ չէ, այլ խաւարի իշխանին  
հետ, այլ չար կամաց և կրից հետ, այլ  
մոլութեանց և մոլորութեանց հետ, ու-  
րոց յաղթելու համար խիստ զգուշաւո-  
րութիւն և մեծ հմտութիւն պէտք է:

Այլ հովիւ մը պէտք է իւր հօտը  
արածելու համար խոտաւէտ տեղերը  
գիտնայ, զովաստուեր ուռնեաց տակ  
ակնակիր ջրոց եղբրքը հանգչեցնէ,  
և անոնց բնութեան ու սննդեան յար-  
մար պարարտացուցիչ խոտերը ճանչ-  
նայ, առաւել եւս քանաւոր հօտի  
հովիւք, որ նոցա բանականութիւնը  
խնամելու կարգաւորելու և կազդու-  
րելու հոգն ունին. նոքա պարտաւոր  
են գիտնալ ինչ որ իրենց խնամոցն  
յանձնուած ժողովրդեան օգուտը կը  
պահանջէ որուն համար անշուշտ ի-  
մաստութիւն կը պահանջուի մեզմէ:  
Մեք այո՛, պէտք է իմաստութեան  
հետեւինք, Հա՛րք, մանաւանդ դուք,  
ո՛վ աթոռոց ցանկացող և իշխանու-  
թեանց հետամուտ պաշտօնակիցք իմ,

խմաստուժեան ցանկացէք, որպէս զի  
 աթոռներն իրենց բուն էութեամբն  
 ու որպիսութեամբը տեսնէք ու ճանչ  
 նաք, որ եթէ դժբաղդաբար հոն բարձ  
 րանաք, այլոց օգտակար լինիք և կամ  
 դոնէ դուք չի սայթաքիք. «Յանկու  
 թիւն իմաստուժեան տանի յարքայու  
 թիւն, արդ ո՛վ բռունք ժողովրդեան,  
 եթէ ցանկայք աթոռոց և գաւազա  
 նաց իշխանութեան, պատուեցէք զի  
 մաստուժիւն, զի յաւիտեան թա  
 գաւորիցէք, ո՛վ առաջնորդք ժողովրդ  
 դեան, սիրեցէք զիմաստուժիւն, քան  
 զի բազմութիւն իմաստնոց փրկու  
 թիւն աշխարհի և թագաւոր հանձա  
 րեղ՝ հաստատուժիւն ժողովրդոց » :

Վասն զի ի՛նչ օգուտ ունին այդ  
 խումբը մը կրօնաւորք, որ իրենց նախ  
 կին ունեցած մտրութիւններն ու յի  
 մարութիւնները սոյն պաշտօնին մէջ  
 մտած օրէն ալ անխափան գործադ  
 րած և առուելած խկ լինելով ժողո  
 վուրդը գայթակղեցուցած և ՚ի մտրու  
 թիւն առաջնորդած են, և փոխանակ  
 լստուծոյ անուենը փառաւորելու, ի

րենց անարժան վարքովը և տգիտու  
 թեամբ ազգաց և ազանց մէջ խաղք  
 ու խայտառակ կը լինին և բարձրեւոյն  
 անուան փառքը յինքեանս կը նուաղե  
 ցնեն ... «Վ՛հ և ի՛նչ պիտի լինի երբ Տէ  
 րը նկատելու սկսի » (Նիլեփոս) : Ուրե  
 մին կամ արժանաւոր լինիմք մեր պաշ  
 տօնին և կամ թողուեք այնպիսի պաշ  
 տօն մը որուն անարժան ենք, չըլն  
 նինք հետամուտ այնպիսի գործոյ մը  
 որ մեր կարողութենէն վեր է :

Արդ կարծեմ այս չափով կրցի հաս  
 կացնել որ եկեղեցւոյ պաշտօնէից հա  
 մար տգէտ լինելը ամօթ է, մեղք է  
 և մեծ վնաս թէ իրենց անձին և թէ ի  
 րենց շրջակայիցը . հերիք սեպենք ու  
 րեմն այս չափը և քիչ մ'ալ խօսինք  
 եկեղեցւոյ պաշտօնէից անգործութեա  
 նը վրայ կարճ ՚ի կարճոյ :



Բ.

Ա Ն Գ Ո Ր Ծ Ո Ւ Թ Ի Ի Ն

ԵԿԵՂԵՑՈՅ Պաշտօնէից տգիտու  
 թիւնը թէ իրենց անձին և թէ հա

ւատացելոց համար որչափ որ մնա սակար է և վտանգաւոր, նոյնչափ ալ անգործութիւնը:

Ահասարակ ամեն մարդու համար աշխատութիւնը սուրբ պարտաւորութիւն մի է, և անհրաժէշտ կարեւորութիւն. եթէ բնութեան մէջ ամեն բան գործունէութեան և պիտանաւորութեան կը մղուին ըստ իւրաքանչիւր չափու և պայմանի, առաւել եւս մարդը պէտք է մղուի. իսկ ուր անգործութիւն կայ, հոն պիտանաւորութիւն չի կայ. ուրեմն անգործ մարդը անպիտան է և ծանր բեռ մը մարդկային ընկերութեան:

Ամեն մարդ անդատին 'ի սկզբանէ աշխատութեան սահմանուած է, ուրով իւր գոյութիւնը կը պահէ եւ կարողութիւնները կը զարգայնէ: Աշխատութիւն հարկ է մարդուն, ոչ միայն ապրելու, այլ և զգաստ և անմեղ մնալու համար. ինչու որ միտքն ու զգայարանքներն անգործ չեն կրնար մնալ: Ամեն մարդ պատուաւոր վիճակ մի ընտրելով նոյն վիճակին մէջ իւր

չափովը պէտք է աշխատի անխոնջ, անմեղ և արդար՝ միշտ դէպ 'ի կատարելութիւն դիմելու ճգամբ: Այս անկեղծ շիւքը կըստիպէ զմարդ շարունակ շարժման մէջ լինիլ. և միայր իւր մասնաւոր գործոյն վրայ յառած և ըզբաղեցուցած լինելով մեղանչելէ ազատ մնալ. մտնաւանդ հարկ է որ մարդ ժամանակ չի թողու մեղաց և չար խորհրդոց անձնատուր լինելու. այս կերպով միայն կրնայ վտանգէ ազատ պահել մարդ իւր մարմինն ու հոգին:

Աշխատութիւնը, թողունք որ բը նական պարտաւորութիւն է, այլ և աստուածային հրամանաւ ալ վճռուած և պատուիրուած լինելով, ոչ միայն ընդհանրացած այլ և սրբագործուած է. պէտք է աշխատիլ և աշխատութեան պտուղը վայելել. աշխատոյն է միայն վարձուց արժանի, առանց աշխատանաց ուտելը դողութիւն է և զրկանք. չաշխատողին ապրիլն անգամ ոճիր է: Մը նաւ մէկը չէ կարող այս պարտքէն ազատ լինիլ և անմնաս կամ անպատիժ մնալ. բանդի վայրկեան մը բաւական է

փորձութեան համար, որ համետ աշխատանքէ դատարի գանձ զմարդ. այն ատեն իսկոյն վրայ կը յարձակի և կը վտանգէ զայն բնասէս ու բարոյապէս

Մեքորձ մարդը ծանր բեռն է աշխարհի, մնասակար անդամ մարդկային ընկերութեան, թշնամի և յափշտակիչ հասարակաց աշխատութեան, նրման պիծակներու՝ որ անաշխատ կը յափշտակեն մեղուաց անխնայ աշխատութեան քաղցր սրտուղը, կամ նման վնասակար հեղեղներու, որ երկրագործին աշխատութե նպաստելու տեղ կը բերեն կը քանդեն և աւերակ կը դարձնեն նորա այնքան խնամօք պատրաստած պղին, պարտէզը և կամ սերմանած արտը = Չրկայ վիճակ մի, ուր մարդ ըստիպուած լինի դատարիութեամբ ասորի, և սրդարութեան առջեւ անբասիր մնալ, բայց ՚ի ծանր հիւանդութեանց և հաշմութեանց ատեն. ուր ոչ միայն չէ կարող աշխատիլ, այլ և օգնութեան կը կարօտի, որուն օգնել ամեն մարդու պարտքն է, քանզի իւր ընկերն է :

Մտնը բազմաթիւ դարերու փորձով հաստատուած ճշմարտութիւննք լինելով ոչ կրնան հերքուիլ և ոչ ալ երկար փաստերու կարօտ են, քանզի ամենօրեայ փորձերով և կենդանի ապացոյցներով իսկ շրջապատուած ենք =

Մրդ քանի որ մարդկութեան համար այսպէս է, Վիեղեցւոյ պաշտօնեայք ալ իբրեւ մարդիկ են թակոյ են անշուշտ այս պարտուց, և ազատ չեն երբէք նորա զանցաութեան առթիւ գալիք չարիքներէն, ուրեմն Վիեղեցականն ալ թէ իբրև Մտուծոյ արարած, և թէ իբրեւ մարդ՝ պէտք է աշխատի և իրեն յանձնուած պաշտօնը կատարելու համար գործէ. պէտք է շարունակ գործէ. իւր անձը ընտիր կացուցանելու և իւր կեանքը արդարութի վարած և վայելած լինելու համար ներուած չէ իրեն երբէք դատարի կենալ, հանգիստն անգամ իւր անմեղ զբաղումը պէտք է ունենայ : Իսկ իբրեւ Մտուծոյ եկեղեցւոյն պաշտօնեայ, ինչպէս ամեն լաւութեանց մէջ, նոյնպէս և աշխատութեան մէջ իւր անձը

միտքն ու սիրտը սուրբ պահելու, ար-  
դարութեամբ աստիճան, հաւատացե-  
լոց օրինակ լինելու համար պէտք է  
գործէ և առաւել ևս գործէ, աշխա-  
տի անխոնջ և շատ անգամ անբուն: Չը  
դիտնալու բան չէ այս վասն զի, թող որ  
Յիսուս Քրիստոս օրինօք պատուիրած  
և օրինակով ալ ուսուցած է, այլ և  
բանականութեան լոյսը ըսել տուաւ  
երբեմն հեթանոս փիլիսոփայ բանա-  
տուեղծի մը թէ « Հասարակաց վրայ  
հոգ ու խնամք տանելու պաշտօնն ու-  
նեցողին չի վայելք որ դիչերն 'ի լոյս  
ննջէ »: Հապա դու քեզ համար ի՞նչ  
պիտի ըսես ո՞վ եկեղեցւոյ պաշտօնեաց  
որ ոչ թէ միայն դիչերը, այլ և ցերեկն  
'ի բուն դատարկ անցրնելէ զատ շատ  
անգամ քնով կը դանդաջիս, կամ դա-  
տարկաբանութեամբ և կամ խաղերով  
ու զբօսանքներով կը զբաղուս, որք չեն  
վայելք քեզ, վասն զի քեզ յանձնուած  
է ժողովրդեան հոգւոյն փրկութեան  
ամենամեծ հոգը: քու մէկ փոքրիկ  
զանցառութիւնդ, անդգուշութիւնդ  
և անհոգութիւնդ կրնայ ժողովրդեան

սրտին մէջ անբուժելի վէրքեր բանալը  
Սորա ճշմարտութիւնը միթէ չէք տես-  
ներ ժողովրդեան մէջ ամեն օր, չէք  
համոզուիր, որ ժողովրդեան գայթակ-  
ղելոյն, 'ի հաւատոս տիրոջնալուն և  
շատ անգամ մեծամեծ մեղքերու մէջ  
լինինելուն պատճառը դուք էք, ուրիշ  
ոչ դուք և ոչ այլ որ կարող է հանել:

Եկեղեցւոյ պաշտօնէին չի վայելք  
դատարկ մնալ. իւր հոգեւոր պաշտա-  
ման մէջ յեղգութիւնը իւր քրեական  
յանցանքն է: Անհնար է որ մարդ հո-  
գեւոր պաշտաման մէջ զբաղել ուղէ,  
և գործ չի կայ ըսէ, քանզի շարունակ  
գործելու առիթներ ունի՝ քանի որ  
ժողովուրդն յաջորդական է, և մէն մի  
հոգւոյ փրկութիւնն անգամ մեծ խը-  
նամոց և հսկողութեան կը կարօտի.  
Իսկ եթէ լինի որ իրօք իւր յատուկ  
պաշտօնն ու վիճակը հանապազ աշ-  
խատելու չափ զբաղուամն չի մատակա-  
րարեր, (որ անհնար է,) պէտք է հոգ  
տանի և իրեն զբաղելու և հաւատու  
ցելոց օգտին համար գործ գտնէ և ան  
գործ չի կենայ:



Ինչպէս յառաջալ ըսինք, մեր պաշտօնն է Մատուցոյ աւետարանն ու անոր փրկաւէտ օրհնքները քարոզել հաւատացելոց և անհաւատից, ուսուցանել զնոսա, մխիթարել, քաջալերել, յանդիմանել, բժշկել զտկարացեալսն ՚ի հաւատս և հաստատել, այս գործերու վերայ մտածող անկեղծ և հաւատարիմ պաշտօնէին գործ չի պակիր։ Աս շարունակ կը զբաղէ սուրբ Վիբբ ընթերցասիրելով, նախնեաց ողբամիս վարդասրետութեանց մէջ յածելով, որովք զաշարհ աշակերտեցին. կը խոկայ ժողովրդեան վիճակին վերայ, անոնց ախտերը և փաստակար հակա միտութիւնները կը նշմարէ, միշտ ժամանակին կը հասնի ախտից վերայ եւ դեռ հօտին մէջ չի ձարսկած՝ դեղն ու դարմանը կը հօգայ, կը խնամէ կը կաղըութե և կ'ուզուէ, նա իւր հօտին մէջ կը ծաւալէ մտաց լոյս և անարատ վարուց կենսաբոյր անուշահոտութիւն, և այս ամենը կը յաջողի հեղութեամբ, խոնարհութեամբ, քաղցրութեամբ, սիրով և երբեմն աստուածային օրինաց

նախանձախնդրութեամբը վառուած բորբոքած, ու չէ թէ կասաղի կրկն բորբոքմամբ, ամբարտաւանութեամբ եւ անհատական վրէժխնդրութեան վառ ոգւով։

Սրբա այնպիսի գործեր են, որովք շարունակ զբաղած կրնան լինիլ եկեղեցւոյ պաշտօնեայք, հովիւք և այն, — Տէր, Հայր սուրբ, Սրբալին, Վերապապի, Մեծնապապի, Վեհաբառ, — և այն խոջոր անուններով փոքրիկ սպասաւորներն ու անպիսան ծառայիքը. բայց չի մոռնանք ըսելու որ այդ գործերով ըզբաղելու համար կամք և ձեռնհասութիւն կուզէ. նոյա պժմեան անգործութեանց բուն պատճառն անձեռն հասութիւնն է, և եթէ ձեռնհասներ ալ կան, ամբարտաւանութեամբ կամք և յօժարութիւն չունին, քանզի կը կարծեն, որ իրենց վեհութիւնն ու փառաւորութիւնը անգործ ու դատարկ բաղմելով կը լինի, կամ ժողովրդեան մէջ շքեղ և ահաւոր երեւնալով, որ խիստ սխալ է եւ թերամիտ սղորմելիներու անոտի կարծիք. քանզի

իրաւ է , որ ժողովուրդը շատ ան-  
 դամ այդպիսի ճնշին երեւոյթներէ  
 կը շանայ , բայց այնչափը հերքը չը  
 տեսեր . ամենէն տկարամիտն անգամ  
 երբեմն կը դատէ , ու կը դատապարտէ ,  
 շատ տեսիլներ , գործեր և փառքեր  
 կարող են ժողովուրդը զարմացնել ,  
 բայց չեն կարող նորա ուշքն ու սիրտը  
 միանգամայն գրաւել : Պարտաւոր ենք  
 յիշել , թէ մենք այս պաշտօնին մէջ չի  
 մտած ի՞նչ կը լսէինք և ինչ կը խօսէինք  
 անգործ և դատարկատուն պաշտօնէից  
 վրայ , և կամ ընդհանրապէս ի՞նչ կը  
 պահանջէինք եկեղեցւոյ պաշտօնեայ-  
 ներէն . անշուշտ նոյնը և ալ աւելին  
 պիտի խօսին մեր վրայ և պիտի պահան-  
 ջեն մեզմէ , քանի որ մենք նախապէս  
 արդէն եղածներուն չէինք հաւնիր և  
 կանոններ կը տայինք նոցա :

Ժողովուրդն զմեզ անգործ կուռ-  
 քեր շինելու համար չէ որ կը որոշէ ,  
 կ'ընտրէ , և երկրաքարչ վիճակէ մը կը  
 հանէ կը բարձրացնէ և իւր վերայ  
 հսկող կը դնէ . այլ հարկաւ ակնկա-  
 լութիւն մի ունի , տկարութիւն մի , կա-

րօտութիւն մի ունի , և անշուշտ կրա-  
 պասէ , որ մեր գործունէութեամբը  
 լեցնէ իւր կարօտութիւն ու ակնկալու-  
 թիւնը , և զօրացնէ իւր տկարութիւնը ,  
 գոհ և ուրախ լինի իւր վիճակին մէջ ,  
 խաղաղ և մխիթարեալ լինի ըստ հոգ-  
 ւոյ և ըստ մարմնոյ . և ահա այն ատեն  
 կականածի , այո՛ , կը փառաւորէ , և կը  
 սրանչանայ : Վակայն այս ականածութիւնն  
 ու յարգանքը ներսէն , սրտէն , հոգւոյն  
 մէջէն կուգայ և հաճոյք ու բերկրանք  
 կառթէ , այս ականածութիւնը 'ի Հայրա-  
 կան քաղցր սիրոյ և յերախտեաց ազ-  
 դած կը լինի որ ամենաքաղցրն ու ա-  
 մենասիրեկին է , և չէ թէ 'ի բռնական  
 խրոխտմանէ և անխիղճ հարստահա-  
 րութենէ , զրկանքէ և կեղեքումէ . ու  
 բուն սկիզբը երկիւղ , տագնապ և սրը-  
 տի վրդովումն ու վախճանը վրէժիանդ-  
 րութիւն և հատուցումն է . . . :

Այո՛ , Հայրք , գործելու կոչուած  
 ենք , չէ թէ դատարկութեան . գործելը  
 յանձնած է մեզ Աստուած , և ժողը  
 փուրդը . ժրութիւն և արթնութիւն  
 կը պահանջէ մեզմէ Ռարձրեալը , օգ-

նութիւնն կ'աղաղակէ ժողովուրդը. ինչ  
չաւ տակաւին անշարժ և խուլ կը մնամք  
այս անդիմադրելի պահանջմանց և հը-  
զօր ձայնից առջեւ, որք կարող են ի-  
րենց հատուցումը փութայնել. մին  
իւր փառաց անարգութեան և միւսը  
իւր յուսոյն ՚ի դերեւ ելնելուն համար:

Մէր էք, Հովիւք Հայոց, զձեզ  
փնտռող թշուառն ուր պիտի գտնէ.  
մէկերնիդ սենեակնիդ քաշուած՝ ցերեկ  
ատեն կը ննջէք և պատուիրած էք որ  
քովերնիդ մարդ չի մտնէ. բայց դուք  
գործ ունիք, եկող խեղճին խնդիրն ստիւ  
պողական է, կամ հողուով և կամ մար-  
մնով փոանգեալ է. ձեր հայրական օգ-  
նութեան դիմած է, եթէ դուք զձեզ  
կը պահէք, նա որո՞ւ դիմէ. այլ ձեր  
հող չէ. խորդացէք ուրեմն դուք՝ ձեզ  
համար այդ փոանգաւոր քնոյն մէջ ձեր  
փոանգն ալ Աստուծոյ և ժողովրդեան  
հոգը պիտի չ'լինի, դուք ալ ձեր կա-  
րօտութեան օրը լքեալ պիտի մնաք...

Ուրիշ մը իրեն անձին անվայել շք-  
քեղութեամբ զարդարուած գեղանր-  
կար և ոսկեզօծ կառքի մը մէջ պինդ

կութնելով հարուստի մը թեւին նըս-  
տած է ահաւոր կերպով. սրտը շաւ նը-  
ժողդները արագութեամբ կը քաշեն  
կառքը. աղքատը կամ յառաջուց կը  
ուահելով, կամ հեռիէն նշմարելով, որ  
իւր բարեխնամ Հայրը, Աստուծոյ կող-  
մանէ կարգուած իրեն տնտեսը այն  
կողմէն կ'անցնի՝ ճանապարհին վերայ  
կանգնած, ճիտը ծռած, ձեռները բա-  
ցաց կողկողագին կ'աղերսէ. բայց  
Հայր, դու գիտես ի՞նչ կ'ընես, մի  
կարծեր որ թաքուն կը մնայ, գիտես  
քեզ աղերսող զաւկիդ դէմ՝ ինչպէս  
կը վարուիս. — Մհ, երեսդ կը դարձը-  
նես, որ չի տեսնես քովնիդ հետ խօս-  
քի կը բռնուիս, որ սյդ քու սրտիդ  
ատելի տեսարանն անցնի, և այն խեղճը  
խաբուի և կարծէ թէ չ'տեսար և քու  
վրայ միշտ նպաստաւոր յուսով ապրի,  
առանց օր մը իւր ակնկալութիւնը պա-  
կուած տեսնելու. բայց գիտցիր որ քու  
այդ փառքիդ մէջ յայնժամ խիստ ցած  
ու նուաստ երևոյթ մի ունիս, պժգալի է  
այդ ժամանակի քու տեղը, նողկալի և  
արհամարհելի ես ամենուն. ամօ՛թ է

Հայր, այդ չէ բու գործդ . . . :

Թշուառ, տգէտ և հարստահարեալ ժողովրդեան մը վերայ կարգուած կարծահասակ հովիւ մը գիտեմ, որ Թէսի տէտ երխտասարդ էր, Թէսիտ բընու-Թեամբ աշխոյժ, վառվռուն և գործունեայ էր, և իւր յախուռն համարձակութեամբը եթէ ուղէր շատ բարբարոս հարստահարիչներ կը ստակացընէր ու զսպել կուտար, սակայն իւր այս յատկութիւնքը չարաչար 'ի գործ դնելով խաբէբայութեամբ և հայհոյիչ լեզուովը չիկայ տեղ մի ուր նա իւր դիւլական սպերով կոխած լինի և գայթակղութեան հետք մը թողած չը լինի: Այս անարժան անձին կեանքը համարեայ Թէ չարեայ շղթայ մի է որոյ և ոչ մէկը արժան կը համարիմ այս տեղ յիշել, բայց միայն ինձ ըսած մէկ խօսքը, ուրիշ կրնայ հասկցուիլ իւր գգայմունքը: Մի օր երբ իւր առաջնորդարանի բակին մէջ կը շրջէինք, այս անձը պանծանօք իւր քաջագործութիւնները կը պատմէր ինձ, առանց միջոց թողլու, որ դիտողութիւն ընեմ:

բայց իւր պատմութեան վերայ ինքն սքանչացած, մէկէն որտանց բացագանչելով մը սա խօսքերն ըսաւ, — «Այս, ախտս չէ ինձ նման քաջասիրտ մէկու մը, որ այսպիսի անկիրթ ժողովրդեան մը մէջ աննշան կեանք մը կը վարեմ, եթէ ես Պօլես ամիրայի մը տուն զիւր ֆէթի երթամ, փառաւոր պատիւ, համարամ կերակուրներ կը վայելեմ և լիւռամ 'ալ փիչիբախի կառնեմ. բայց ախտն, իմ յարգս չեն դիտերոյ, ըսաւ և բու վէս սահեցաւ առանց ժամանակ թողլու, որ բան մի ըսեմ, Թէսիտ ես ապշած կեցած էի, չէի հաւատար ականջիս, որ այսչափ պանծալի գործեր ընողն այսպիսի նուատտ ակնկալութիւն ունենայ: Արդ ի՞նչ կարող է յուսալ ժողովուրդ մի իւր առաջնորդէն երբ այսպիսի սիրտ կը կրէ և դեռ չ'գիտեր Թէ ի՞նչ է իւր կոչումը. իւր անձին նշանակութիւն տալ կուղէ և ամիրայի մը թեւին տակ ամբիլ կը ցանկայ, ինքզինքը քաջ կ'անուանէ և գործելու ասպարիսէն խոյս կուտայ, մինչդեռ հաղաբաւոր ժողովուրդք իւր շուրջը բոլոր

րած իրեն յարած են, (քանզի դեռ նոր էր և յաջողած էր խաբել)։ Ուր փառք, սրտակ, անմահական պատիւ, մշտնջենաւոր յիշատակութիւն իւր շուրջը կը թռչտին եւ ոտից ներքեւ կը թափին, ինքը շացած դէպ ՚ի Վոստորի ափուկքը աջոյն մէջ սեղմուելիք ոսկւոյն կը հայի և բերնին ջուրերը կը վազէ։ Ափսոսքեղ ոտ ան փառացու անմահութեան կեանքը ան նշան համարելով՝ զըկուեցար և բոլորովին մատնուեցար իրօք աննշան կեանաց. սակայն երանի՛ այն ժողովրդեան և Հայոց սպիտակ, որ քեզմէ ազատուցաւ, քանզի բարեբաղդաբար ալ պաշտօնեայ չես, և երանի՛ թէ բնաւ եղած չըլլայիր, որ քու անխայել գործոցդ պատճառաւ եղած գայթակղութիւնները տեղի չէին ունենար, և սրչափ մեծ երջանկութիւն էր աղբին եթէ քեզիպէսներն ալ քու բաղդիդ հանդիպէին։

Տակաւին ուր կը գտնուէք, Հարք. բարձր ու շքեղազարդ ապարաններու մէջ, ուր աղբատը չէ կարող մտնել. քան

զի դրան սեմոց վրայ կոխելն անգամ պղծութիւն կը համարուի և թշուառը գանակոծ կ'արտաքսուի անկէ. հասլա դու, ո՛ր վաշտօնեայդ եկեղեցւոյ, դու անողնական թշուառին պաշտպանը, դու որո՞ւ համար զգեցած ես այդ ուրոշեալ ձեւդ, ինչո՞ւ մտեր փակուեր ես այդ տեղ, դու գործ չունիս. Այս, կըլսէ, գործ ունիմ,

- Եւ ի՞նչ է գործդ .
- Հիմա նարա կը խաղամ, յաղթութեւս վերայ եմ, միտքս մի՛ շփոթէք .
- Ի՞նչ չ'այր՝ այդ քու գործդ չէ...
- Քիչ մը ետքը աղային հետ ըլլ բօնիլու ալ սխտի երթանք .
- Ի՞նչ պաշտօնդ դքեզ կը կոչէ .
- Ի՛յ, հիմա խօսելու ժամանակ չունիմ, ըսինք ես։

Ափսոս, դեռ այդ տեղումնքը կը դեգերիք, անձնուրած Հովիւներ, դեռ ձեր կոչման վերադառնալ չէք զիջանիր, տակաւին այսչափ աղղեցութեան փղղերը ձեզ լսելի չեղան. նախատուեցաք, գանակոծ եղաք, արքորեցաք և շարունակ հրապարակաւ կը խայտա

աւիուիք և դեռ չէք զգար. չէք տեսներ որ Տիրոջ ահաւոր սուրբ պատենէն ելած է, և ձեր ու ձեզմով ալ ժողովը դեան գլխուն վրայ թերաքամ կը կենայ : Հովիւք եկեղեցւոյ, մեր մեղաց համար ժողովուրդը կոտորածի մասնուած է, կոտորած աղետալի, մեռելու թիւն բարոյական. մեք հովիւքս մեղանչած եմք, անմեղ ոչխարաց կոտորածը մեր սիրտը տակաւին չի սլախ շարժէ . ախանս . . . :

Անգործ հովիւներ, եկեղեցւոյ փառքն ու պարծանքն բըլբու տեղ ինչ ջու նախատոններն ու անարգանքը կը լինինք. եթէ մեք զայն անարգելու ջեր խղճեր, միթէ շատ բան է որ նա եւս զմեղ անարգէ, մեծ պատիժ մը տուած կը լինի երբ նախասանօք անպատիւ կ'ընէ զմեզ. Այո՛, խիստ մեծ է, խիստ անտանելի է այս՝ զոր մեք կը կրեմք, բայց բազդատելով մեր իրեն հասուցած վշտին, տակաւին նա խիստ գըթու թու թեամբ կը վարուի, մեղմ է դեռ իւր խրատու հարուածը, որով եթէ չզգաստանտք ու տակաւին անհոգու-

թեան, անգործութեան և անտարբերութեան մէջ մնամք, գուցէ աւելի շարագոյնը գործադրել ստիպուի իւրեւամբք : Ուրեմն Հարբ իմ, գուր ձեզ պէտք է որ անբասիր մնամք. գործել պէտք է, որ Արքայան Առաքելուն և ժրպան մշակին պէս ըսելու կարող լինինք, « Գործ իմ գուր էք ՚ի Քրիստոս . . . » : Գործել պէտք է որպէս զի Աստուծոյ ժողովուրդը իւր սահմանուած սրբութեան մեծութեան և փառաց հասնի : Ահ, որչափ սրտաւուչ է Առաքելուն սա խօսքը, « Ա երատին երկնեցից մինչև նիարեացի ՚ի ձեզ Քրիստոս » : Արդարեւ գործել պէտք է, միանգամայն Աստուծոյ ժողովուրդն Աստուած ճաններու համար երկունք կրել պէտք է :

Միթէ ծանր բան է, որ մեր պարտուց պահանջածը գործենք, ոչ, այդ բան մի չէ, մեք սրտաւուր ենք գործել, եթէ հարկն առիպէ մինչև անգամ ասրելու համար ձեռադործ մը, արհեստ մը ունենալ և գործել հաց ձարելու, ժողովողեան վրայ չի ծան-

րանարու և աշխատութեան մէջ ալ  
անձամբ օրինակ լինելու համար = Աւշա-  
դրութիւն դարձնենք անգամ մի Ա-  
ռաքելոյն հետեւեալ խօսքերուն եւ  
տեսնենք թէ ի՞նչ սուրբ վատահու-  
թեամբ և խղճի քաղցր հանդարտու-  
թեամբ մը կը խօսի. «Արդէս դայեակ մի  
որ սնուցանիցէ մանկունս, նոյնպէս և  
մեր գթայար ՚ի ձեզ. հաճոյ թուէր  
մեզ տալ ձեզ, ոչ միայն զաւետարանն  
Աստուծոյ, այլ և զանձինս մեր. քանզի  
սիրելիք մեր եղէք: Յիշէք եղբարք բոլ-  
ր լատտակն մեր և զճան. զի զայս և զե-  
րեկ գործեալ վասն լծանրանալոյ ումեք ՚ի  
յէնջ և քարոյէսք ձեզ զաւետարանն  
Աստուծոյ. դուք ինքնին վիսյք էք և  
Աստուած, որպէս սրբութեամբ եւ  
արդարութեամբ եւ անբծութեամբ  
ձեզ հաւատացելոյդ եղեաք»: Աւրիշ  
տեղ մը նորէն կ'ըսէ. «Դուք ինքնին  
գիտէք զի զպէտա իմ և սրոյ ընդ իսն  
էին պաշտեցին յեռա այս»:

Կը տեսնենք, Առաքեալը իւր անձն  
անգամ չի ինայեր, իսկ մեր ժողովու-  
րեան հոգւոյն կերակուրն ալ կը խր-

նայենք. որպիսի պարզութիւն, ի՞նչ  
անկեղծութիւն և ճակատաբաց հա-  
մարձակութիւն է Առաքելոյնը որ գի-  
շեր ու ցերեկ աշխատեցայ, կ'ըսէ, ձեզմէ  
մէկուն վրայ չի ծանրանարու համար =  
Դարուս մէջ կը գտնուի՞ արդեօք մե-  
կը որ ժողովուրդեան վերայ ծանրացած չը  
լինի և որ զժողովուրդը սիրած ու  
ժողովրդէն սիրուած լինի. այս չըլլալէ  
զատ ցաւալի է, որ կղեր բառն առակ  
նշաւակի եղաւ հրապարակի մէջ, յա-  
մօթ անարգելոյ՞ և յանարգութիւն  
անարդողոյ. ՚ի նախառինս ներկայիս,  
՚ի սարսափ և ՚ի զղուանս աղագային =  
Այսօր հաղուագիււս կը համարուի եւ  
կեղեցւոյ պաշտօնեայ մի որ ամբաս-  
տանութեան ենթարկուած չը լինի.  
այնու ամենայնիւ ժողովուրդը իւր կա-  
րօտութիւնը կը դգայ, դարձեալ զմեզ  
կ'ընդունի, զմեզ կը խնամէ, կը կերակրէ  
և մեր պէտքերը ըն ու լի կը հոգայ,  
առանց կարօտութիւն թողելու, որ  
մեր ձեռագործով զբաղինք. իսկ մեք  
առանց գործելու կը գիղենք կը կու-  
սակենք ժողովրդեան արիւնն ու քրո-

տինքը . ս'հ , և ինչ սրտով , ինչ խղճ  
 ճով պիտի վայելէնք այն սնունդը , զոր  
 ժողովուրդը շատ անգամ կը տայ , ա  
 ռանց բան մը ընդունած լինելու . ինչ  
 բարբարոս և անագորոյն սիրտ է այն  
 և ինչ վայրենական անմարդասէր ըզ  
 գացումն է , որ չբաւոր ժողովրդէն պա  
 հանջէ իւր պահանջքը իբր իրաւունք ,  
 իսկ իւր հոգեւոր սպարտուց մէջ թե  
 բանայ , իւր հովուութեան գործը , ու  
 սուցչութեան պաշտօնը , խնամակա  
 լութեան հոգն ու որնութիւնը և մա  
 տակարարութեան աշխատութիւնը և  
 բնախի վրայ թողած . քնով և անպատշաճ  
 խաղերով պարապի : Ինչպէս սնունդ  
 պիտի ստանայ մարդ այդպիսի անար  
 դար վատակէ մը , որչափ մեծ չարիք է  
 և անթողլի յանցանք , երբ մէկը աղքա  
 տին հացը յափշտակէ , մանաւանդ երբ  
 նորա տեղ ուրիշ բան մի չի գնէ , որ  
 այն թշուառին քաղցը յագեցնէ . պէտք  
 է գիտնաք որ նոցա մէկ կաթիլ ար  
 տասուքը ձեր բոլոր գոյութենէն աւելի  
 արժէք ունի , անմեղին հառաջանայ  
 մօտ ամբարիշտ պաշտօնեայ մի ( ինչ

աստիճանէ ալ որ լինի ) դիւրացնողելի  
 փոշի է : Այլ ինչ իրաւամբ , որ ար  
 դարութեան օրէնքով առանց աշխա  
 տելու պիտի ուտենք , քանի որ չաշխա  
 տողին հայ չի կայ , ինչ է մեր առաւե  
 լութիւնը կամ արժանիքը որ նա աշխա  
 տի և զմեզ կերակրէ , հոգայ և խնա  
 մէ . յիրաւի մեծ է մեր արժանիքը ,  
 անչափ է մեր առաւելութիւնը . բայց  
 մեր պաշտօնին մէջ գործելով , ու չէ  
 թէ փափկութեանց մէջ յօրանալով ,  
 արդեամբ , ու չէ թէ բանիւ լսկով .  
 այնպէս որ առանց մեր գործոց քա  
 ըողը մենք լինելու կամ ցածութեամբ  
 խրատելիակներ , գովելներ որալու , ժո  
 ղովուրդն ինքնին զգայ , ճանչնայ և  
 սիրով ու կամօք տայ ինչ որ պիտի տայ ,  
 տուածը տուգանք չի համարի , այլ  
 տալու ատենն հաճոյք զգայ , բայց հէ  
 մայ երկիւղած պաշտօնեայ մը ժող  
 վուրդէն բան մը առնելու կը խղճա  
 հարի , քանզի գիտէ թէ դժգոհու  
 թեամբ պիտի տայ , վասն զի ծանր  
 բեռներու պէս եղած են կրօնաւորք  
 իրենց անգործութեամբը , որչափ ա



գլետարի է այս վիճակը , յորում կը տազնասպիմք այսօր . ինչեր կը խօսի ժողովուրդը երբ առաջնորդ մի պողի ժողվելու կ'ենէ . ինչ մեղքեր , ինչ հայհոյութիւններ 'ի պատճառս մեր անհոգութեան կը գործէ ժողովուրդը , երբ տաներեց մի սահմանեալ ժամանակներ իւր ժողովուրդին այցելութեան երթայ կամ երթալ դառնալէն վերջը . մարդու սիրտ չը վերցնէր մանր նկարագրել և զգայուն սրտեր չէն կարող առանց մեծ վիտի բել , քսածներուս բորբին ալ ներկայ օրինակներ ունիմ բայց անձնականի չգտելու համար ընդ արօտ անցնիլը բաւ է :

Սեղմէ ո՞ր մէկը պիտի կարողանայ համարձակ և ճշմարտութեամբ ասել թէ գիշեր ցերեկ աշխատեցայ և մանուկ անուցանող դայեկի մը պէս ձեր վրայ գութ և սէր ունեցայ և կամ որո՞ւ համար պիտի կրնանք ասել թէ “ Բրիտոստով իմ գործս դուք էք ” : Ինչ անոյշ վստահութիւն , ինչ երջանիկ ակնկալութիւն է որ սրբազան Առաքելոյն հոգին կը տածէ և ինչ ան

կեղծ ու խղճի կատարեալ հանդարտութի է , որով կը համարձակի ասել . “ Օ ընթացսն կատարեցի , զհաւատան պահեցի , այսուհետեւ կայ մնայ ինձ արդարութեան պատկն ” : Թող ամեն պաշտօնեայ ինքնիրեն գայ , խորհի , իւր կեանքը անաջառապէս քննէ , պիտի կարողանայ արդեօք անկեղծ վստահութեամբ բսել հաւատարիմ՝ աշխատող պաշտօնէի մը բերնին արժանաւոր այս խօսքը : Սակայն եթէ համարձակի մէկն բսել , չէ՞ որ իւր անարժան գործոց ցանկը 'ի յանդիմանութիւն իր կեղծ ու պատիր խաբէութեան իրեն պիտի կարգացուի . իւր կոչմանն արժանաւոր ընթացքի մէջ չի գանուիլը երեսը պիտի զարնուի . իւր ծուլութիւնը և անհոգութիւնը իրեն դատաւոր պիտի լինի , և իրեն յանձնուած հոգաբարձութեան կամ տեղը մնալը կամ անկարգ խառնաշփոթութեան մէջ լինելը իւր ստութիւնը պիտի խայտառակէ , անոր համար չի պիտի կրնայ վստահիլ գեթ բսելու թէ՛ “ Օ առայք անպիտանք եմք , զոր ինչ

սյարսն էր առնել արարաք » : Ինչպէս ,  
 — վասն զի սյարոք եղած բանէն բան  
 մի ըրած չէ , այլ ամեն պէտք եղած  
 ները երեսի վրայ թողած է անհոգու  
 թեամբ , որուն համար այսպէս կը խոս  
 սի Յովհան վարդապետ . « Քանզի ար  
 տաքոյ իրաւանց է և անտեղի բոլոր  
 վնն , ոչ ըստ արժանի իշխանութեանն  
 Գնալ կոչման , կամ պղերգաբերիլ , և  
 թերահոգ առ դնել յոր հաւատացաւն  
 հոգաբարձութիւն նմա » :

Եւ արդարեւ անտեղի և անիրա  
 ւութիւն է , չը գործել եւ ապրիլ ,  
 իրեն յանձնուած պաշտօնը հաւատար  
 մութեամբ չի կատարել , և տակաւին  
 բաղդաղանօք մարդկան մէջ երեւերու  
 համարձակիլ . չը գործել , արգիւնք չը  
 տալ և իբրեւ յախշտակիչ այլոց վաս  
 տակն ուտել , ինչ կրնայ անուանիլ այս  
 պիտի գործ եւ գործող մը . թերեւս  
 խիստ դատած չենք լինիր երբ գործը  
 սձիր և գործողն եղեո՞նադործ անուա  
 նենք , քանզի այնպիսիք ուրիշ անուն  
 չունին :

Սի վշտանաք պաշտօնակիցք իմ ,

դեռ ամենքը չըսի և չը պիտի կրնամ  
 բսել . քանզի կը խնայեմ ձեր տկարու  
 թեանը՝ գիտնալով որ չը պիտի կրնաք  
 սանիլ : Թողու՞նք ուրեմն որ Մու  
 քեայը իւր միւս վտտահութիւնն ալ  
 պարճանօք յայտնէ , և ինչպէս Թեաս  
 զննիկեցւոց ստահակութիւնը կը յան  
 գիմանէր , թող իւր օրինակովն զմեզ ալ  
 կշտամբէ , թերեւս ամաչեմք . « Եւ ոչ  
 ձրի ուրուք դճաց կերաք , այլ ջանիւ  
 և վաստակով զցայդ և զյերեկ գործէաք՝  
 վասն ջճանրանալոց ումեք ՚ի ձէնջ . ոչ  
 թէ չունէաք իշխանութիւն , այլ զի զան  
 յինս օրինակս արտադրուք յեղ՝ նմանողս լինել մեզ  
 քանզի մինչդեռ առ ձեզն իսկ էաք՝  
 զայս պատուիրէաք ձեզ , թէ որ ոչն  
 կամիցի գործել , և կերիցէ մի » :

Կը տեսնէք , պատուական Հաճք ,  
 որ սրբազան Աստղեայր իւր ունեցած  
 իրաւունքը ամեն տեղ չի գործադրեր ,  
 իւր իշխանութիւնը միշտ չի բանեցնէր ,  
 միանգամայն և իւր պատուիրածը ու  
 րինակով ցոյց կուտայ . կը գործէ եւ  
 գործել կըտայ , և ահա այս է Քրիս  
 տոսի ճշմարիտ աշակերտին մէկ յատ

կութիւնը, առնել և ուսուցանել. այս տեղն է իւր մեծութիւնը, « Եւ որ արատցէ և ուսուցցէ, նա մեծ կոչեացի »: Արով 'ի պահանջել հարկին կարող կը լինի նոցա ատահակութիւնը սանձել. և ահա ասկէց յայտնի է որ ինչու մեր ժամանակի ժողովրդականք անուղղայ կը մնան և ինչ է մեր անհամարձակութեան պատճառը, որ չենք կարող նոցա գործերը երեսնին դարնել, յանդիմանել և ուղղել. քանզի կը տեսնեմք, որ նոյն յանցանօք մեղակից եմք այնմ, զոր կը յանդիմանեմք, և երբ փոխադարձ անկէ ալ կը յանդիմանուինք իսկոյն կը խուովինք, սրտերնիս կը վշտանայ և իբր թէ եթէ նա չփսօսէր կամ թարգման մնար մեր յանցանքը, մենք յանցաւոր չի պիտի համարուէինք. այս յիմարական ցնորքով նոցա զմեզ յանդիմանելը անարգանք մը և իբր եղեւնական մատնութիւն մը համարելով անզուսպ և անհանդուրժելի բարկութեան կրիւք վարակեալ՝ կառաղութք կը խօսիմք և ալ անձնական վրէժխնդրութեան կը դարձնեմք գործը, որով

նորա հոգին կը վերաւորեմք, քան թէ կը բժշկեմք. չար օրինակ կը լինիմք քան թէ յուղղութիւն կ'աճեմք. ուստի գիտնալով որ մեր ասարդիւն խօսքը ազդեցութիւն պիտի չընէ, սկսած ենք շատերնիս անարգ ցածութեամբ մեր կիրքերն ու կամքերը պաշտելու համար ժողովրդեանն ալ շղթել, բրածը պահասութիւն չի համարիր. սուս ու փուս պատճառարանութեամբ արդարացընել, որ նա ալ մերինն աչք գոցէ. շատ անգամ ոմանք կրօնաւորք իրենց ստութեան, չարութեան եւ խաբէութեան գործիք կ'ընեն ժողովրդական մի, որպէս զի իրենք արդարանան. և ահա այս ցաւալի միջակին մէջ է եկեղեցւոյ պաշտօնէութիւնը. մինչեւ անգամ պաշտօնեայ մի եթէ երնէ ատեան և ժողովրդեան մէջ տեսնուած պակասութիւններն պարզմտութեամբ յայտնէ, ոմանք ուղղակի իրենց վրայ առնելով, փոխանակ զքրտու և շնորհակալ լինելու, կը ցաւին քարոզէն և զինքը փոխել կուտան, և կամ 'ի պատճառել զպատճառս մեղաց ընելով, այս

ինչ ալ կ'ընէ, Դոն ալ կ'ընէ, կ'ըսեն .  
ցաւալի է այս արգարեւ, բայց պատ-  
ճառ նոյն իսկ պաշտօնեայք են :

Ի՞նչ պիտի յուսայ այն պաշտօնեայն  
որ եպիսկոպոսանալու համար իւր վե-  
կայսկանն ինքը կը գրէ և զինքն Յե-  
տուս Քրիստոսի հետ բաղդատելով  
նորա նման և հաւասար կը համարի,  
իբր թէ իւր երկնային քարոզութեամբն  
եւ լուսաւոր վարդապետութեամբը  
անհաւատներն ու անկրօնները 'ի լոյս  
աստուածգիտութեան դարձուցած է,  
իբր թէ իւր եղած տեղերէն հոգեւոր  
ու մարմնաւոր ախտերը հարձական  
ըրած է, և վերջապէս ինչ որ ըրած էր  
Յիսուս՝ գուցէ բան մի ալ աւելի ինքն  
ըրած է, (միայն խաշուիլը և յարու-  
թիւն առնելը կը մնայ, գուցէ այդ ալ  
եպիսկոպոսանալէն վերջը կատարելու  
համար պահած է) :

Եկեղեցեաց բեմերէն անվայել գո-  
վեստներ շուայել մասնաւոր անձանց,  
որք իրօք արժանաւորութիւն չունին,  
և այս կերպիւ կողմ որսալ որ իւր վե-  
կայականին ստորագրութիւն դնեն .

վկայականն առնուլ և աստ և անդ  
շըջիլ, մարդիկներ հրաւիրել, իւր ան-  
ձին ջատագով կանգնիլ, չի գործած  
գործքերը թուել և մեծցնել, որպէս  
զի յօժարին ստորագրել . այսպիսի ան-  
սիրտ, անհոգի և անգործ պաշտօնեայ  
մը ի՞նչ պիտի յուսայ կ'ըսեմ իւր ժո-  
ղովուրդէն, եթէ ոչ անհնազանդու-  
թիւն, անարգանք, նախատիկք և ար-  
տորանք :

Ի յարգիրներէն ոմանց ալ այսպի-  
սեաց անոցեան և ջատագով կանգնիլը  
բիչ զարմանալի չէ. մանաւանդ երբ նոյն  
լրագիրը ուրիշ նուազ յանցաւոր եկե-  
ղեցականներ կը նախատէ և կ'անարգէ,  
որով լրագրական պաշտօնեութեան  
մէջ իւր արժանիքն ալ չափել տուած  
կը լինի . սակայն աւելի աղէկ կը լինէր  
երբ ինքն լրագրական ասպարէզը թո-  
ղուր և իւր գովածն ալ աւաքելութեան  
պաշտօնը թողուր . այն ատեն գոնէ  
գայթակղութիւն չի տարով՝ գուցէ  
ազգին աւելի օգտակար կը լինէին :

Հարբ, պատուական Հարբ, մեզ  
յանձնուած գործոյն պարապիկք հա-

ւատարմութեամբ, գործենք շարունակ, տքնինք անդադար, որպէս զի թուլութեամբ թէ մեր գործն ու սրաշտօնը աղարատած ու արդիւնքէ և վարձքէ զրկուած չըլանք և թէ չարին ծուղակը չի բռնուիք. քանզի անգործութիւնը աղբիւր է մեղաց և մոլութեան, թելադիր է չարութեան և անկարգութեան, վերջապէս ծնող է հիւանդութեանց և մահու:

Անգործ սրաշտօնեայն արդարութեամբ ասքերու յոյս չունի, Աստուծոյ վրայ հաւատք ալ չունի, քանզի նորա օրինաց հնազանդած չունի, իւր յոյսը բոլոր իւր անձին վրայ դրած է, այս պատճառաւ ԱԳԱՀ ալ կը լինի:



Գ.

ԱԳԱՀ ՈՒԹԻՒՆ

Ահ, ինչ դժբաղդ պատեհութիւններ են որք ստիպած են զմեզ խօսիլ այնպիսի նիւթերու վերայ որոց յաւիտեան անձանօթ մնալը երջանկութիւն

էր. այնպիսի ստորագելիներ կամ անուններ են տքա, որ մարդու վերայ խիստ անվայել երեւոյթներ կը տուաւորեն, մանաւանդ եկեղեցւոյ սրաշտօնէին վերայ: Աստ մը փնասակար գաղաններու միութենէն կազմուած հրէշային գաղան մի եթէ իրութիւն ունենար՝ ի՞նչ այլանդակ տեսիլ և ի՞նչ փնասակար յատկութիւն որ կրնար ունենալ, նոյնն սենի այսպիսի այլանդակ մոլութիւններով վարակեալ անձը. և ահաւասիկ գործուած և հրապարակու գուժուած ամբարշտութիւնները կը հաստատեն այսպիսի հրէշներու գոյութիւնը:

Եկեղեցւոյ սրաշտօնեայն ըստ ամենայնի անարատ պէտք է լինի. այլ ափո՞ս, ահա կը տեսնեմք որ այսպիսի սոսկալի արամներով շարուած ու տոգորուած են, եւ ցաւալի է որ այս նուազ ու ցած անուններն իրապէս ստորագուած են նոցա վերայ: Երբեմն փոքրիկ զգուշութիւններ կը լինին ընտրելի եկեղեցականին արտաքին մարմնաւոր արատներու մասին,

այլ հողեկանին, ոչ երբէք. բարոյական արամները՝ որ աւելի մեծ են և ազեղ, աչքի չեն զարներ, և ամենափոքր քրննուծիւն մի, թեթեւ զգուշութիւն մի անգամ չեն լինիր նոցա համար. ուստի ուրիշ արամներէ և աստերէ զաա ահա Ագահութիւն ըսուած չար ու խիստ վնասակար աստուով վարակեալ կը հրուչախուին եկեղեցականք, ոչ ստուծք այլ բուն իրենց գործերով և ներկայ կենդանի օրինակներով ապացուցուած:

Ագահութիւնը, որ առանց օգտակար գործածութեան ինչք ստանալու անյադ բաղանք բտել է, խիստ ազեղ շարժառիթներ և անհամար չար հետեւութիւններ ունի: Ագահութեան կը շարժի մարդ կամ մահկանացու լի ներք չը յիշելով, կամ նախախնամութեան վրայ հաւատք չունենալով կամ ծոյ, անգործ և անպիտան լինելով, և կամ իւր ճշմարիտ սիրոյ առարկայէն, Աստուծմէ հեռացած՝ նիւթին եւ ապականութեան յարելով:

Իսկ ագահութեան հետեւանքն ո՞վ կարէ թուել, Ագահութիւնն զմարդ

խարդախ, նենգամտ եւ խաբէբայ կ'առնէ, ագահ եղողը ստուծիւնը ճշմարտութիւն կը համարի. գողութիւնը իւր իրաւունքը կը սեպէ. զըրկանքն արդարութեան տեղ կը դնէ, երբեմն քծնող ու շողքորթ է. ուրիշ անգամ յանդուգն, խրոխտ և կատաղի. գործ մի ընելու կամ նոյն իսկ իւր պարտքը կատարելու համար մեծամեծ պահանջք և չափէ դուրս փոխարկնութիւն կուզէ. բազմիցս իւր պահանջած վարձքն աւելորդովն հանդերձ ընդունելով՝ պարտազանց կը գտնուի. և կը սրտածառէ թէ աղետութեան յարգ ճանչցող չէ կայ, արժանեաց համեմատ չ'առարկնութիւն չէ կայ. սակայն լի ու լի փոխարկնութիւնը գրողանը զետեղելէ վերջը կամ կը մոռանայ և կամ քիչ կը համարի. վերջապէս իրաւունք, պարտք, արդարութիւն, ճշմարտութիւն ագահին համար նշանակութիւն չունին. լսկ խաբէբու համար իբր պատրուակ սոյն բառերը բերնով միայն կը գործածէ:

Ագահը յուզմունքն ու խռովու

Թիւնը կը սիրէ . շատ անգամ ինքն իսկ կը սերմանէ դայնս , ուրիշ կը յուսայ իւր ագահութեան ճարակ տուող սրտուղ քաղել :

Այսչափ եւ դեռ եւս ասիկէ շատ աւելի չարութեանց ծնող է ագահութիւնը , ինչպէս եւ Առաքեալն իսկ , մայր ամենայն շարութեանց եւ կոտորուածութեան կ'անուանէ դայն : Այլ յիրաւի պիտի իրազատութենէ զատ ինչ կրնայ անուանիլ ագահութիւնը , քանի որ 'ի սէր անձնական շահու վառեալ' կը զոհէ ամեն բան , ոտնակոխ կ'ընէ բոլոր օրէնք , սրբութիւն , քաղցրութիւն , խաղաղութիւն եւ արդարութիւն , եւ իւր մէկ վատ հաճոյիցը կը զոհէ ամեն բան , կը զոհէ ընկերին իրաւունքը եւ նոյն իսկ ընկերը :

Արդ՝ ո՞վ Հարք , կուղեմ հարցնել ձեզ խոնարհաբար թէ՛ որ շարժառթիւ կը կրէք դուք ագահութեան ախոր . ինչ բանի համար աւերորդներու կը ցանկայք եւ ինչք կը դիպէք . մի թէ թշուառին օգնելու համար , սուտ էք . զայդ չէք ընեն որ ձեր բուն սխարտքն է .

հասար ինչ է պատճառը որ չէք յագենար ժողովելով եւ չէք բաւականս նար ամբարելով . - ձեր ապագային համար . - Այն , բայց չէք գիտեր որ ձեր դանձարանը ժողովարդն է . ինչո՞ւ այն պէս չէք վարուիր որ ձեր բոլոր կենաց ամեն վիճակին մէջ ալ ժողովարդը գուրգուրայ ձեր վրայ : Հեթանոս թաւաւոր մը ձեզմէ աւելի լաւ չի խորհեցաւ , երբ իւր գանձը ուր լինելը հարցուած ատեն բարեկամները ցոյց տուաւ : Այնորհի փոփոխական դէպքերը ձեզ խրատ ընելու չափ ալ իմաստասիրութիւն չունիք , չէք տեսներ որ այդ նիւթական ինչքերն միշտ սրաւ մաղբուած նորասակներուն չեն ծառայեր . կամ կրտսառնին , կամ կը կորչին , կը գողցուին եւ կամ արկեղներու մէջ անօդուտ կը բանտարկուին եւ հուսկ ուրեմն ձեզմէ կը բաժնուին :

Իսկ չէք յիշեր , որ մահկանացու էք եւ օր մը պիտի թողուք այդ ամենը այլոց ձեռքը , որովք շատ անգամ նոյա չարեաց ալ պատճառ պիտի լինիք ձեր մահուանէն վերջն անգամ . քանզի

այդք անաշխատ տիրելով ձեր ընչից՝  
կամ ծոյ պիտի լինին և կամ զեղև ու  
չռայլ :

Դուք՝ ննջեցերոց դագաղին առջեւ  
կեցած նուաաստ անկաղուժեամբ նրև  
ջեցեալին անարժան գովեստներ հիւ-  
սած ատեննիդ ալ չէք յիշեր որ օր մի  
դուք ևս նորա պէս պիտի անշնչանայք  
և ձեր հոգին արդար դատաւորի մի  
առջեւ պատասխանատուութե պիտի  
ներկայանայ, և այն ատեն ձեր դիղածն  
ու պատրաստածը ինչ պիտի լինի և ինչ  
օգուտ պիտի ընէ ձեզ : Մեր Տէր Յիս  
սուս Քրիստոսի պատուէրը ձեր սրբ  
տին չէ՞ ազդած . « Ծայխէ քու ունե-  
ցածդ , աղքատաց տուր և իմ ետեւ  
ւէս եկուր , եթէ երկու ունիս , մին  
աղքատին տուր » . միթէ ասոնք քեզ  
համար չէ՞ն , որ եկամուսներ ու կալ  
ուածներ կը պատրաստեն . ինչո՞ւ կը  
վախնաս , մի գուցէ կը կասկածիս որ  
անօթի կամ մերկ կը մնաս . խեղճ հո-  
գի : Ուրիմն քու տգահութիւնդ՝ Նա-  
խախնամութեան վերայ հաւատք չու-  
նենալէդ յառաջ կուգայ :

Սակայն այս եւս վճռաբար ըտերու  
կը վարանիմ . քանզի տեսնել ամեն բան  
որ իրենց սահմանին մէջ ընթանալով  
Նախախնամութեան շնորհիւ կը վայ-  
ելեն առատօրէն ամեն օրհնութիւն ,  
ամեն վայրկեան նկատել , զգալ , խնա-  
նալ եւ վայելել Նախախնամութեան  
պարգեւները , և նորա վերայ հաւատք  
չունենալ . անլուծանելի հակասու-  
թիւն մի կը լինի . ասով ինքնին ապա-  
ցուցած պիտի լինիք ձեր ծայրայեղ  
տգիտութիւնը եւ կամ բնութեան  
օրէնքէն դուրս անզգայութիւնը :

Հեթանոս փիլիսոփայն տիեզերաց  
նախախնամական օրէնքը քննելով Մա-  
տուածութիւնը կը տեսնէ և չի վարա-  
ներ նոյն իսկ զՄատուած նախախնա-  
մութիւն կոչելու . դուք , մարդ Մա-  
տուծոյ , քրիստոսնեայ , աստուածային  
գթութեան ու ինամոց մէջ ողորւած  
անոր չի հաւատալնիդ , զայն չի ճանչ  
նալնիդ անհասկանալի բան է : Նա մա-  
նաւանդ չէ՞ որ դուք նոյն նախախնա-  
մութեան պաշտօնեայներն էք , չէ՞ որ  
նորա գթութիւնը և ողորմութիւնը



քարոզելու փառքն ու պատիւն ունիք,  
 չի հաւտացած բաներնիդ ինչպէս կը  
 քարոզէք, և եթէ քարոզէք ալ ինչ  
 արդիւնք սիրտի ունենաք: Բայց միթէ  
 դուք ձեր բոլոր կենաց մէջ չէք պա-  
 տահած այնպիսի ստիպողական վայր-  
 կենի մը՝ ուր պարզապէս նշմարած լի-  
 նիք Նախախնամութեան մատը: — Ան-  
 կարելի է որ պատահած չը լինիք. բայց  
 այնպիսի պարագայներու մէջ ձեզ ե-  
 դած խնամքն ու օգնութիւնը գուցէ  
 ձեր աչալըջութեան և հանճարին ար-  
 գիւնքն համարելով ուրացած էք նորա  
 խնամքը եւ հաւատքնիդ պակասած է  
 նորա վերայ: Բայց կ'աղաչեմ, գոնէ  
 լսեցէք ձեր Վարդապետին, եթէ նորա  
 ճշմարիտ աշակերտներն էք և եթէ կը  
 հաւատայք անոր. — Յորժամ առաքե-  
 ցի դձեղ քարոզել միթէ կարօտացայք  
 իմիք. — Ասեն յնա ոչ. — Արդ՝ ընդէր  
 խորհիք ՚ի սիրտս ձեր, թէ հայ ոչ  
 բարձաք: Մի հոգայք վասն վաղուեան  
 վաղիւն վասն իւր հոգացի, զի շատ է  
 աւուրն չար իւր:

Այսպէս ահա քու վարդապետդ,

ով ագահ պաշտօնեայ, բեղ չափաւո-  
 րութիւն, բաւականասիրութիւն եւ  
 աւելորդաց արհամարհութիւն սովորե-  
 ցուց, դու այդ հեթանոսական մորու-  
 թիւնը ուրիշ սովորեցար: Յիսուս ըզ-  
 քեզ գործելու կը կանչէ. և անով քու  
 կարեւոր պիտոյքդ ամեն տեղ պատ-  
 րաստ կը ցուցնէ. հաւատարիմ ու  
 գործունեայ մշակին համար ոչ վարձք  
 և ոչ պիտոյք կը պակսի. ուրեմն ագահ  
 պաշտօնեայն ծուլութեան համար ա-  
 դահութիւն կ'ընէ:

Այո, ագահը կը արնի ինչք դի-  
 ղել, որպէս զի անգործ, ծոյլ և դա-  
 տարկ մնայ. ունայնութիւնը պաշտէ  
 և մարմինը պարարէ, սակայն իւր բը-  
 նութեան օրէնքով ինքը կը պատժուի,  
 և չարաչար տանձանօք իւր նպատակին  
 չի հասնիր. քանզի նախ իւր ագահու-  
 թիւնն յագեցնելու համար ստիպուած  
 է չարաչար աշխատիլ ու տանջուիլ՝  
 թէպէտ և ապօրինի. մտօք եւ մար-  
 մնով յուղուիլ եւ վաստակիլ թէ  
 եւ անտախ: Արկրորդ՝ քանի ինչ-  
 քըն աւելնայ նոյնպէս մտաց հոգը,

մարմնոց վիշտը և հոգւոց տագնապն ու վրդովմունքը այնչափ կ'աւելնայ . միշտ իւր պաշտած կուռքը մեծցնելու եւ իւր տանջանքը բազմապատկելու բաղձանքը տիրելով վրան՝ մշտապարզաբ ծառայ մի կը լինի, վատ եւ կաշկանդեալ գիրի մի կը դառնայ անոր . սրբտով մտօք և կամօք կը յարի այն բանին, կը սիրէ և կը պաշտէ զայն՝ որ իւր թշնամին ու դահիճն է . և ահա այն ատեն ամեն բան կը մոռանայ, պարաք, պաշտօն, ժողովուրդ, կրօնք, օրէնք վերջապէս Մտուած , որով և ամենայն նուիրական ու սուրբ բաներ, և իւր մըտաց առջեւ բոլորն ալ ունայնութիւն կը դառնան, իւր սիրած ու պաշտած արծաթը միայն հաստատուն էութիւն կը համարի, անկէ դուրս ամեն բան նախապաշարումն է . բայց առ հարկի երեքեմն խաբելու համար ինքն ալ շատ բանի հաւատալ և ընդունիլ կը կեղծէ . այս կեղծիքը երբեմն ասոր անոր իրեն գաղափարակից կարծածներուն պարծանօք կը յայտնէ , եւ ալ չեղի պէտէմ, այնպիսի բաները չեմ ընդունիր, և չեմ

կասար կ'ըսէ . այսպիսիներէն մէկը գիտեմ, որ անգամ մի բարեբաղդաւ բար իրօք գիտնական և ճշմարիտ աւտուածապաշտի մը կը հանդիպի, եւ կարծելով որ նա ալ իւր յիմարական գաղափարէն է, իւր գիմակը կը մերկանայ, կը յայտնէ անոր իւր ոգին և կը բանայ իւր սեւ սիրտը, բայց իւր ակնկալութենէն դուրս արժանաւոր յանդիմանութիւն կը կրէ եւ խախք ու խայտառակ կը լինի, բայց ամաչողը ո՞վ է :

Ինչու այսպէս կ'ընէ այս անովը սր, թերեւս սին ակնկալութեանց համար, որով կը յայտնէ թէ ինքն եւս ունայնամիտ և անպիտան մէկն է, լաւ գործեր ընելու անյարմար, շատախօս, ինքնագով և խաբեբայ է, որ և իբրեւ զգուելի և ատուելի հրէշ մը բարոյական աշխարհէն արտաքսուած է (\*) :

(\*) Այս անձը անարժանապէս եպիսկոպոսացած և առաջնորդութիւն չըթած օրէն ի վեր իւր հետին մէջ խռովութիւնն ու երկպառակութիւնը գաղթած չէ բուն իսկ իւր պատճառաւ . և չի պիտի դատրի բանի որ նա է այն տեղի առաջնորդը :

Քեզ համար ագահ կ'ըսեն, Հայր, չէս պատկառիր այս անունէն. դու ճշմարտութեան աշակերտ, դու մըշտադոյ անխորհիս լին պաշտօնեայ, ա մօթ չէս համարիր փոխել զհառու միոյն լստուծոյ քու չնչին բաղձանայդ դիւր եղճանելի առարկային հետ, և նուի բել աստուածավայել սէրը, պատիւը եւ տքնութիւնը այնպիսի իրաց որք պատիր են և ասպականացու: Գու ա գահ ես, ուրեմն անիրաւ ու խաբէ բայ ես, հետեւաբար անարժան ճըշմարտութեան պաշտօնեայ լինելու, պէտք է կամ դու ինքնին կամաւ հրա ժարիս, կամ զքեզ արժանացնես, և կամ արդարութիւնը զքեզ պիտի խաչ տառակէ և հալածէ:

- Ի այց ո՞վ ըսաւ թէ ես ագահ եմ:

- Ի բազիրներն՝ երբեմն, իսկ ժողովուրդն ամեն օր կ'ողողակեն, կը գռ չեն, կը բողբեն չէս լսեր. անարգութեան ցեխն ալ չէս տեսներ, որոյ մէջ անձնովին թաղուած ես. բայց զար մանք չէ, բանդի այդպիսի ցանկու-

թիւններն ու սէրը մարդս կոյր եւ խուլ կ'ընեն:

- Լնոնք սուտ են, և տարապարտ տեղը զիս կանարգեն. ես գթած, մարդասէր ու բարեսիրտ մէկն եմ, իմ դուռս և ձեռքս բաց է որբոց և այրեաց, պանդուխտներն ինձմով միւթ թարուած են, ոչ երբէք առ իս զի մողներէն մին ունայնաձեռն հանած եմ, թշուառը միշտ գորովագութ հայր մի գտած է յիս, դուն ալ կը զըպարտես այդպիսի անարդար յանդի մանութիւններ ընելովդ. ագահը դիւրւած ինչք կունենայ, ո՞ւր է իմ աւերորդ ինչքս:

- Սեծախօս Հայր, ինքնագովու թիւնդ ապացոյց է նախ՝ որ սուտը դուն ես և արժանի տակաւին բիւր անարգանաց. երկրորդ՝ այդ բերնուց սովրած պարճանաց խօսքերդ լոկ իրարու ետեւէ շարուած աննշան բառեր են քեզ համար և լոկ խաբելու եւ թմրեցնելու միջոց. երրորդ՝ ես չեմ զըպարտեր Հայր, այլ խրատ կուտամ որ զգոյշ կենաս, հեռանաս մոլութիւն:

ներէ, բայց դու այնչափ ջնտրած ու բանականութիւնդ կորուսած ես, որ խրատն ու յանդիմանութիւնը զրպարատութիւն կը սեպես. և փոխանակ գործով ստեղծ ամեն ըսուածները և իրօք արդարանալու, անպատկառ համար ձակութեամբ անձիդ ներքողեաններ կը հիւսես կամ հիւսել կուտաս. չորրորդ՝ և իբր անհերքելի ասպացոյց ինչք չունենալդ յաւաջ կը բերես. լաւ, կը խոստովանիմ, որ այդ չափ անպագաբար ժողովելէդ յետոյ պետք է իր գիղուած ունենալ, ինչպէս քեզ նմաններուն շատերն ունին, և ինամով կը պաշտպանեն բարկութեան աւուր մէջ իրենց դատապարտութեանը համար, բայց դու բան չունիս և դարձեալ ագահ կը կոչուիս այնպէս չէ՛. ախոս, այդ մեծ զրկանք և անտանելի զրպարտութիւն է. բայց կեցիք, շուտով չի դատենք. բանդի կերեւի թէ դուն ալ ուրիշ ախտով ախտացած ես, ուստի զքեզ ալ աղէկ մը նկարելու համար բարոյականին տուած սահմաններուն մէջ փոքրիկ փութութիւն մը ընելով ագահութեան

փոյ երկու ազօք նայինք. Ագահութիւնը, իրաւ է, որ ինչք գիղել է՝ առանց օգտակար գործածութեան, բայց մի թէ այս, առանց օգտակար գործածութեան, խօսքը պարանոյ տեղը դրուած է, ո՛չ. այլ զքեզ մատնանիչ խայտառակելու համար՝ իմաստունը նախատեսած, կամ թէ ըսենք փորձառու եղած և դրած է. Արդ ագահ մը կը ժողովէ և կը գիղէ, ագահ մ'ոյ կը ժողովէ և կը վատնէ. մէկը կը ժողովէ անօգուտ պահելու համար, միւսը անպագաբար կը ժողովէ անօգուտ վատնելու համար, և ահա դու այս երկրորդ տեսակէն ես, որոյ ասպացոյց կը ներկայացնեմ քեզ քու հաճոյիցդ, կամացդ եւ կրիցդ բոլոր թելադրութեանց անխափան կատարուիլը: Խընջոյքներ ընել, տեսարաններ երթալ ծպտած, անօգուտ և անպիտան ծախսեր ընել, խռովութիւններ յարուցանել, մէկ կողմէն քաշել, գողնալ, կողոպտել, և միւս կողմէն դատ վաստելելու համար կաշառներ և ընծաներ տալ, վերջապէս մոխել, ուր որ քու կամքդ կուղէ. հերիք է որ խելքդ

վիչէ բանի մի ծախք ընել . անօգուտ և վնասակար իսկ լինելն ալ ըսենք քեզ՝ չես համողուիր , կամացդ և անձնիչ խանութեանդ դէմ բռնաբարութիւն կը համարիս . իսկ օգտակարին՝ ոչ երբէք , զրկեալին չես օգներ , խնդրողին չես տար , կարօտը չես յագեցներ , իսկ դու միշտ ջանիճ , ըսելով կ'առնուս . այս քու մողութեանդ նոր անուն մի տարու համար կը վարանիմք , քանզի մի չէ , այլ բաղադրեալ է . ուստի առնելու համար ագահ և վատնելու համար շայլ կ'ըսենք , և տակաւին մանրանը կարդ ամբողջ աւարտած չենք լինիր :

Աղէ՛ ըսէ տեսնեմ , այսպիսի վարմունքով քովդ ստացուածք կրնայ մը նալ . և միթէ չը լինելը սպաւոյժ մի է քու առատաձեռնութեանդ , քան լըցի . ամեն առաքինութիւն կամ մղութիւն իրենց սահմանն ունին . նպատակ , գործ և արդիւնք , ահա ասոնք կ'ապացուցանեն ամեն բան . անօգուտ է քու բերնովդ զքեզ գովեստիւ արդարացնելու ճգնիդ , քանզի կեանքդ կ'ապացուցանէ որ մոխելու , վատնելու ,

ուտելու , խմելու . հագուելու և շքուելու համար շույլ ես . իսկ այդ կիրքերդ յագեցնելու համար ժողոված ատենդ ագահ ես , ագահութեան բուր չարագոյժ նշանները իբրեւ պրժգալի միանգամայն և ստկալի պալարներ երեւցնելով դէմքիդ և բոլոր մարմնոյդ վերայ :

Ո՛վ պաշտօնեայ , ըսէ տեսնեմք ի՞նչ կը նշանակէ հովուական պաշտօնիդ մէջ միշտ թերի գտնուել և շարունակ ժողովուրդն ամբաստանել իբր թէ չեն հոգար . ի՞նչ կը նշանակէ շարունակ ապրուստեդ դժգոհ լինելը , ժողովրդեան օգտին համար կատարելք մէկ գործոյդ , կամ առաջնորդութիւն ընելու և կամ , մինչեւ անգամ գիւղի մը քահանայն իւր քահանայութիւնը կատարելու համար սակարկութիւններ ընել , փոխ առնուլ եւ չը վճարել , պարտք զանալ , մեծագումար պարտքեր ընել եւ ժողովրդեան վճարել տալ , ու դարձեալ ժողովուրդն ամբաստանել , դարձեալ ինքզինք կարօտ ցոյց տարով գանդատիլ ժող

վրդէն և արհամարհել զայն . դրամ  
տալ այոց , մանաւանդ կարօտելոց և  
տոկաս պահանջել . կ'աղաչեմ , Հայր ,  
բսէ ինձ , այս ամենը ազահաւթիւն ,  
ընչաքաղցութիւն , արծաթսիրութիւն ,  
զշաքաղութիւն կամ անարդ ու ցած  
շահախնդրութիւն չէ , ի՛նչ է : Ի՛նչ է  
նպատակդ , ո՞չ ապաքէն ապրիլ . ողոր  
մելի՛ մարդ , դու քեզ յանձնուած գոր  
ծը հաւատարմութեամբ կատարէ , այն  
ատեն ոչ անօթի կը մնաս և ոչ ալ մերկ .  
ժողովուրդն իբրեւ Հայր կը նկատէ  
զքեզ , և ամեն կողմէ խնամք և ձեռքն  
տուութիւն չեն սրտիս : Սակայն քու  
աչքդ աւելորդ ցանկութեամբ կը մար  
մանի , անոր համար արդար վատու  
կով և չափաւոր կենսքով չես կարող  
գոհ լինել , և այդպիսի սրտով բնաւ  
գոհ լինելիք չունիս :

Պաշտօնեսայդ Այկեղեցւոյ , հացի  
և չափաւոր դպեստէ զատ ուրիշ ի՛նչ  
պէտք ունիս . և մի թէ աւելորդովն  
հանդերձ ժողովուրդը հատուցած չէ .  
խեղճ աղաչնորհ , դու ժողովուրդը  
կը քամահես . զայն հովուելու չես .

ղիջանիր , կամ սակարկութիւն և չա  
փաղանց վարձք կ'առաջարկես եւ կը  
կարծես թէ գոհ պիտի լինիս , բայց  
մի խաբուիր քու աչքդ . Տանտաղը  
սի ծակ կարան է , որչափ լեցուի ,  
միշտ դատարկ պիտի լինի , միշտ կա  
րօս , շարունակ դժգոհ . և այդ քու ան  
յագուրդ բաղձանքէդ սովաղուկ պիտի  
տանջուիս ամեն օր . այդ կեղեքիչ բաղ  
ձանքդ շարունակ պիտի կրճէ սիրտդ  
ու լեարդդ , պիտի գրաւէ հոգեկան  
կարողութիւններդ և ամեն բարեմաս  
նութեանց անբնութեան պիտի ընէ ըլ  
քեզ . որով ոչ երբէք կարող պիտի լը  
նիս խորհիլ պաշտօն , պարտք , ժող  
վուրդ , հոգի , եւ Աստուած . քանզի  
քու այն ազահաւթեան տենջդ կեղ  
րոնացուցած է . այս ամենը մէկ բանի  
վերայ , այսինքն հարստութեան , որ  
ունայնութեան մէկ պարզ գաղափարն  
է , եւ զինքն ստացողն ալ իրեն պէս  
կ'ունայնացնէ :

Մարգարէութիւն չեն ըսածնե  
րըս , Հարբ , եղած կատարուած  
և ամենուն յայտնի եւ ամեն օրեայ

կրողութիւններ են պատմածս , զորս որչափ խօսիմ , ինչ կերպիւ ալ բացատրեմ չեմ կարող այն սոսկալի և խոր շերի կերպարանքը տալ , ինչ որ պաշտօնեայ մը ազահուլթեամբ համակրւած ատեն կը տեսնուի . սակայն այս պիտի հրեշներ՝ բազմաթիւ փորձերէ , անարդանքէ և զրուանքէ վերջը ցաւալի է որ տակաւին ժողովրդեան մէջ իբր պաշտօնեայ անպատիժ կը չըջին և մեծամեծ պաշտօններու ալ կը հասնին :  
 - Բայց ո՞վ պիտի պատժէ զանոնք , մեր պիտի գտնուի այն անմեղը որ առաջին քարը ձգէ յանցաւորին վերայ , կամ մեր պիտի գտնուի այն արգարը որ կարող լինի քաւել պատժապարտը և հրամայել - Ե՛րթ այսուհետեւ մի մեղանչեր . - Ո՞վ պիտի կրնայ արգար ցատման խարազան ՚ի ձեռին՝ համար ձակութեամբ ասել . - Տուն իմ ատեն ազգութից կոչեցի և դուք արարիք ըզգա այրս աւազակաց . - Եւ այսպէս ո՞վ պիտի կարողանայ սրբել և մաքրել Մատուծոյ տունը , հաւաքաօցեալ ժողովուրդը ամեն տեսակ օտարականու

թենէ ու գայթակղութենէ . քանզի արդարեւ այսօր Մատուծոյ տաճարը այսինքն ժողովուրդը այն հին ատենէն աւելի աղարտուած եւ իւր նըպատակէն շեղած է , այսօր ոչ թէ առնանոց երամներ կը խռնին հոն , այլ դիւաց բանակներ և դժոխոց լեգէօններ . ոչ թէ հատաւիաճառներու եւ լուսնայափոխներու միայն տեղի . . . . այլ և ամենատեսակ ախտից և մոլութեանց բնակարան եղած է , ուրկէ զոքուանօք կը հեռանայ սրբութիւնը . իսկ սրբութիւն չեղած տեղն Մատուած չի կայ . և Մատուծոյ չեղած տեղն ի՞նչ ուղղութիւն ի՞նչ բարիք , ի՞նչ յաջողուած և ի՞նչ կենդանութիւն պիտի գտնուի :

Արդ՝ չիկայ արդեօք մէկը որ կարողանայ սրբել , մաքրել եւ ՚ի բայ հաղածել այս ամեն վնասակարութիւնները , Մատուծոյ ատելի և մարդկան բարւոյն թշնամի բոլոր այս անօրէնութիւնները . ո՞հ , արդարեւ կերեւի թէ չի կայ , քանզի . « Զոտից մինչև ցգլուիչ չիք առողջութիւն » . և քանզի « Մե-

ներքին խտորեցան ՚ի միասին և անայի-  
տանացան ։ ։

Դասաւորը մեղսակցութենէ ա-  
զատ պիտի լինի, որ յանցաւորը օրի-  
նօք պատժած ասեն՝ նոյն օրինօք ինքն  
ալ շի յանդիմանուի . բայց սոսկալն է  
արդարեւ հասարակութեան գայթակ-  
ղելոյն պատճառ լինիլ ։ Վայ անոր որ  
ուղղութեան պաշտօնն ունի և այլ և  
այլ նկատումներով թիւրութիւնները  
չը տեսնելու կը զարնէ կամ իւր անհո-  
գութեամբը և կամ որ աւելի ճիշտն է,  
գործակցութեամբը թոյլ կուտայ զեղծ-  
մանց որ յառաջանան . մոլութիւնը կը  
քաջարերէ, արծաթսիրութեան ախ-  
տով կուրցած պատժապարտները ՚ի  
պաշտօն և յիշխանութիւն կը կոչէ, և  
չարութեանց արմատանալուն գործա-  
ղիր ու հեղինակ կը լինի . . . ։

Ո՛վ պաշտօնեայք Նիկեղեցւոյ, այս  
չէ մեր կոչումը ։ Նոյն նուիրական պաշ-  
տօնը, ուր մէք կը կոչուինք, պահանջը  
ներ ունի . Նիկեղեցին, այսինքն ժողո-  
վուրդը կամ նորա սէտքը կը կոչէ լու-  
մեզ այս առարկնութեան ասպարիզին

մէջ ոչ թէ սուտ ու սնտախ հնարքնե-  
րով փառք որսալու համար, որ աւելի  
անարգանք է, այլ մրձելու, տքնելու  
նահատակուելու և սահմանուած նը-  
պատակին հասնելու համար . բայց ա-  
հա այս մեր զեղծեալ ժամանակիս մէջ  
կը տեսնեմք պարզապէս, որ շատերնիս  
հետամուտ կը լինիմք սուրբ Նիկեղեց-  
ւոյ պաշտօնէութեան՝ զանազան խո-  
տորնակ նպատակներով . սակայն, ինչ  
պէս ըսինք, այս պաշտօնն արատ չի վեր-  
ցրներ, արատաւոր պաշտօնեայն մատ-  
նանիչ կը հրապարակուի . և կը խայ-  
տառակուի, ինչպէս սպիտակ առար-  
կայի վերայ սեւ բիծը կամ լուսոյ ձօտ  
խաւարը, նոյնպէս և կրօնից սքեութե-  
տուցեւ զեղծ ու մոլի պաշտօնեայք  
աննշմարելի և առանց արհամարհա-  
նաց չեն մնար . ապացոյցը ազահու-  
թեամբ ակտուացող աշակերտ մատնիչ  
Յուդայէն սկսեալ մինչեւ մեր օրերը,  
մանաւանդ այս դարուս մէջ, այնչափ  
շատ են . որ այս տեղ նորէն նշանակե-  
լու հարկ չենք անեսներ, քանզի զշա-  
քաղութեան համար այս պաշտօնիս



մէջ մտնող եւ հետզհետէ անարժան միջոցներով բարձրացող ո՞ր եկեղեցա-  
կան պաշտօնեայն չի խայտառակուե-  
ցաւ. այլ ի՞նչ օգուտ որ ՚ի քաջալե-  
րութիւն այնպիսեաց և յօրինակ այլոյ  
դեռ կը շարունակեն նոքա պաշտօնե-  
ութիւնը և կը յարգուին ու կը փա-  
ռաւորուին, թէ որ փառք կրնայ հա-  
մարուիլ: Ահաւասիկ սուրբ Ներսէս  
Շնորհալի իւր ժամանակի մէջ գրու-  
նուող մեզ նման անարժան պաշտօնե-  
ից զեղծեալ վարուց վերայ ցաւելով  
կը գանգատի. «Իսկ այժմուս թշուա-  
ռութեան ժամանակի այնքան հեռա-  
ցաք ՚ի բարեաց նոցին նմանութենէ,  
մինչ զի ոչ այլ ինչ գործոյ պատճառ  
գիտել զեպիսկոպոսութիւնն որք յօ-  
ժարին ստանալ զայն, բայց միայն զա-  
նազան հնարիւք ինչս ժողովել ՚ի հնա-  
զանդերոցն և փառս որսալ ՚ի փառա-  
ւորչացն, զոր անարգանս պարտ է ա-  
սել և ոչ փառս »:

Ի՞նչ է այս մեռելութիւնը, Հարք,  
ինչո՞ւ չենք զգուշանար, ինչո՞ւ դար-  
ձեալ մեր բոլոր արատաւոր կիրքերու

վրն հանդերձ կը մղուինք ՚ի պաշտօն  
սրբութեան և այն տեղ յագեցնել կը  
ճգնիմք մեր ազահութեան տենչը -  
ախոսս, կ'երեւի թէ Ակեղեցական  
պաշտօնի ինչ լինելը չենք բմբռնած,  
անոր համար զայն մեր շահուց և ա-  
պօրինի թցանկութեանց միջոց համա-  
րած ենք, հեռանալով ՚ի սպառ սոյն  
ասպարիզի դիւցազանց շաւղէն, նախ-  
նի ընտիր Հարց անստերիւր ընթաց-  
քէն, որք արեամբ չափ ճգնեցան ե-  
կեղեցին անարատ պահելու և իրենց  
սուրբ վարուցը մէջ զԱստուած փա-  
ռաւորելու: Սուրբ Գրոց բազմաթիւ  
օրէնքներէն և պատուիրներէն չը գի-  
տեմ ո՞ր մէկն յառաջ բերեմ. այլ Սրբ-  
բազան Առաքելոյն սա մէկ պատուէրը  
յիշել հերիք կը սեպեմ որուն մէջ հա-  
մառօտ բովանդակուած է պաշտօնէին  
պարտաւորութիւնը. «Արածեցէք որ  
՚ի ձեզ հօտդ է Աստուծոյ՝ վերակացու  
լինել, մի իբրեւ ակաժայ՝ այլ կամաւ  
ըստ Աստուծոյ, մի զօջաբարդութեամբ,  
այլ յօժարութեամբ, մի իբրեւ ախ-  
րելով վիճակացն այլ լինել օրինակ հօ-

տին, զի յերեւիլ հովուապետին ընդունելիցիք զանթառամ փառայն պըսակ ։

Ինչպէս ամեն մարութիւն, նոյնպէս ագահութիւնը, արծաթսիրութիւնը, դոշարադութիւնը հոգեկան հիւանդութիւն է, որ մարմինն ալ կը տանջէ չարաչար, կը հիւժէ և կը սպաննէ . Եկեղեցւոյ պաշտօնէութիւնը ծանր հիւանդութեան մէջ է . դեղի, դարմանի և խիստ դժուշաւոր խնամոց կը կարօտի . պէտք է մտնել Աստուծոյ բժշկարանի դեղարանը և զօրաւ որ դեղեր առնուլ .

Ագահութեան ախտը բուժելու համար հերիք է որ մի՛ յանկանաբ պատուէրը իւր բոլորական եւ ընդարձակ նշանակութեամբն հասկնանք, ընդունինք և զգուշութեամբ ու երկիւղածութեամբ գործադրենք՝ ինչպէս որ հրամայած ու պատուիրած է համայնից Բժշկապետը ։

Ոչ ապաքէն մարմնոյ հիւանդութեանց համար ալ հմուտ բժշկին որոշած դեղն այն ատեն օգուտ կը

նէ հիւանդին, երբ դեղերն ըստ հրահանգին գործածուին եւ հիւանդըն բոլոր դժուշաւոր պատուէրներուն համաձայն վարուի ։ Արդ եթէ մարմնոյ հիւանդութեան համար մարմնաւոր բժշկաց պատուէրին հնազանդիլ հարկ է, որչափ եւս առաւել հոգւոյ հիւանդութեանց համար հոգւոր շօր և համայնից Բժշկապետին օրինաց և պատուիրանաց ամենաշեղմ սիրով հըլու հնազանդութիւն պէտք է . ապա թէ ոչ ախտը կը տարածի, կարմատանայ և ապա բժշկութիւնն անհնարին կը լինի . այն ատեն զանազան մահահըրաւեր ախտեր ալ կըսկսին երեւիլ . ինչպէս որ ագահութեան ունակացողներն անոր կից այլ և այլ ախտերու և մարութեանց ծնունդ տալէ զատ գրգռող երկպառակիչ և խռովութիւն յարուցանող դժոխսային ախտն ալ կուսնենան ինչպէս Առաքեալն ալ կը վկայէ ըսելով . «Ուստի՛ պատերազմուիք, ուստի՛ կռիւք ՚ի ձեզ . ոչ յայտախի ցանկութեանց ձերոց՝ որք զօրացեալ են յանդամն ձեր ։»

Ուրեմն թողունք այս և տեսնելք թէ ԽՌՈՎԱՐԱՐՈՒԹԻՒՆՆ ԲՆՃ ԵՐԵՆՈՅԹՈՒՆԻ ԼԿԵՂԵՅԸՅ ԿՊԱՇՏՈՆԷԻՆ ՎԵՐԱՅ :

Դ.

ԽՌՈՎԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԼՃԱՒԱՍԻԿ ԱԳԱՀՈՒԹԵԱՆ և ՑԱՆԿՈՒԹԵԱՆ Ժանտ ծնունդներէն մին ալ : ԼՄեն լաուութանց և բարեկարգութեանց եղծիչն է ԽՌՈՎԱՐԱՐՈՒԹԵԱՆ կիրքը :

Ունայնամիտ փառասիրութիւնը, ամբարտաւանութիւնը եւ կոյր նախանձութիւնը շարժիչ են սոյն դժոխսային կրից, որուն անձնատուր եղողը, ցաւալի է խոստովանիլ, ժանտախտէ բռնուածի պէս չէ կարող ազատիլ : Խռովարարը յուզեալ եւ դիւրագրգռ գիւ սիրտ մի կունենայ, բարկացող և ժանտ կը լինի, ատեցող, ինքնահաւան, կամապաշտ է. որով եւ իրաւամբ ատելի է ամենուն : Վասն զի ընտանեաց, ժողովուրդեան և ազգի խաղաղութիւնը կը վերտվէ, սրտերը կը

յուզէ և կը տագնապէ, և անթիւ չարիք կը սերմանէ իբր հաւատարիմ արբանեակ չարին : Խռովարարը օրէնքներու ալ ընդդիմակաց է. քանզի ամեն արդար օրէնք հասարակաց խաղաղութիւնը կապահովէ, իսկ խռովարարը զայն կեղծանէ :

ԼՃաւասիկ բովանդակ տիեզերք խաղաղութեամբ է որ արդիւնաւորութեան եւ յարատեւութեան մէջ կը կենան, և այս արդիւնքն յառաջ բերողն է աստուածային իմաստութեան դրած յախտենական օրէնքը, որ ներհակներն ՚ի միասին համաձայնեցնելով խաղաղութիւն ըրաւ և Կոյութեան ու գեղեցիկ կարգի բերաւ ամեն բան, ուրեմն խռովութիւնը շեփոթող է և իսնդարող կարգի, եղծիչ լաուութեան, ապականարար և վախճանիչ ամենայնի, հետեւապէս անհրնազանդ է բնութեան օրինաց, ընդդէմ բարոյական օրինաց և ապստամբ քաղաքականին. ճիւղալ մ' է նա որուն Կոյութեան գաղափարն իսկ վնասակար է աշխարհի :

Խաղաղարարը Աստուծոյ որդի կ'անուանի, ուրեմն խռովարարը որդի է սատանայի և ճնունդ դժոխոց, ուստի մարդ կոչուելու եւ աշխարհի մէջ ապրելու իսկ արժանի չէ : նա տարտարոսի խաւարին եւ անյուշութեան լճին մէջ նետուելու արժանի է, որ անհունութի մէջ երթայ իւր ժանտ կրկն ստեղծած ուրուականաց և բտու ուկրի հետ ոգորի առանց մէկուն վը նստել կարենալու :

Խռովայոյդ անդգամին հասուցած չարիքն անհնար է մանրամասնաբար թուել, վասն զի ամեն դիպուած եւ առիթ, ամեն պարագայ եւ հանգամանք այլ և այլ շարժառիթներ են որ կը յուզեն զխռովարարը . և նա ամեն տեսակ չարիք կարող է հասցնել, զորս անհնար կը լինի թուել . ուստի ընդ հանրապէս այսչափ ըսելէ վերջը անձ նինք այժմ օոյն վատթար կիրքը մատնաւորապէս Ակեղեցւոյ պաշտօնէից վրայ նկատել :

Աղգային լռութերթք զմեզ խռովարար հռչակեցին, ս'ի պաշտօնեացք ե-

կեղեցւոյ, և այնպիսի վատաբանութի, որ գրելու զկ'անողն ալ կ'երեւի թէ բաւական յուղուած և վրդովուած է . և եթէ ուզենք ստել և խօսողն յանդիմանել, չի պիտի կրնանք . քանզի անհերքելի ապացոյցներ են՝ վարչութեան առաջնորդական խնդիրներով զբաղելը, բազմաթիւ հանրագրերն՝ անթիւ ստորագրութեամբ, առաջնորդանիստ գաւառներու յուզեալ, շիտթ և անկարգ վիճակը, առաջնորդական անընդհատ դատերը, ամբաստանութիւնք և մարդերցոյ ջատագոտութիւնք և այլն : Ահա այս ամենը իրատ պարզ եւ հաստատուն կերպիւ կ'ապացուցանեն որ մեզմէ շատերը խռովայոյդ են որք աղգին կարեւորութեան պատճառաւ գործի կը կոչուին և իրենց որպիսութիւն իսկոյն կը յայտնեն . ուստի այս անունը մեր գործով ինքնին ապացուցեալ եւ ստուգուած լինելով հարկ չի կայ վերստին հաստատել կամ հերքել, քանզի էութիւն մի ուրանալը ստել է և սուտը մարդէն չէ . . . . :

Տիեզերաց մէջ ամեն բան իրենց

անուան ու գործն ունին՝ և ամենքն ալ ըստ անուան և ըստ պաշտաման ան խափան յառաջ կ'ընթանան դէպ իւրենց սահմանեալ նպատակին, անձնիւր արարած իւր անուան և գործոյն տէրն ըլլալով կը ծառային Արարչին կամաց : « Անպտուղ ծառը կը կտրենք և կրակը կը ձգենք » : Սէր եւս տիեզերաց մէջ արարած մի եմք . մեր եւս մեր անունը և գործն ունիմք, բայց ահա կը տեսնեմք որ մեր ոչ մեր անուան և ոչ մեր գործոյն տէրն եմք . քանզի արդիւնաւորած չէ մեզմէ՝ ինչ որ մեր պաշտօնը կը խոստանայ, ինչ որ մարդիկ կ'ակնկալեն և ինչ որ Աստուած կը պահանջէ . եթէ պտուղ տալիք ծառ մը պտուղ չի տալով կտրել և կրակը ձգել հարկ է, հապա ինչ ընել սէտք է այն ծառը որ բարի եւ օգտակար պտուղ տալու տեղ չար և մնասակար պտուղ կուտայ :

Սէր որ խաղաղութեան հրեշտակ, բարութեան աւետարանիչ կ'անուանեմք, և միջնորդ հաշտութեան կոչուած եմք, ինչո՞ւ չայս գեղեցիկ անուան

արժանաւոր լինել չեմք ձգելի . ինչու մեր կոչումը չեմք յարգեր, միթէ մեր բնութենէ դուրս արարածներ եմք . չէ որ մեր եւս նոյն խաղաղասէր Արարչին արարածներն եմք, ո՞չ ապագէն բնութեան օրինաց սահմանադիր՝ սիրոյ և բարութեան Հօր որդիքն եմք . ինչ երեսով, ՀԱՅՐ ՄԵՐ, կը կոչեմք զայն, որոյ կամաց հակառակը գործելով կը վնասեմք զնա եւ կ'օտարանամք անկէ . ո՞րչափ մեղապարտ եմք մեր, որպիսի դատապարտութեան արժանի եմք մեր . քանզի որչափ հեռացած եմք մեր կոչումէն, նպատակէն և սահմանէն, եւ որչափ ներհակած եմք մեր բարի Արարչին սուրբ կամացը դէմ . և քանի՞օն վտանգաւոր հետեւանքներ տրուած եմք մեր շուրջը :

Ո՞վ Հա՞րբ իմ, եթէ մեր տգիտութեամբ ատուածային օրինաց խաղաղասէր տրամադրութիւնն ու իմաստուն կարգադրութիւնը տիեզերաց ընթացքէն չեմք կարող իմաստասիրել, եթէ անցեալ պատմութեց ընդարձակ ասպարիզին մէջ չեմք կարող պայծառ

նկատել և տեսնել խռովութեան չար հետեւանքը, եթէ Աստուծոյ օրէնքներն ու պատուէրները չեն ազդեր՝ յաստուածային սիրոյ հեռացած այս մեր սառած և քարացեալ սրտին, գոնէ մեր ներկայ դործոց հետեւանքները թող խրատեն զմեզ։ Ագահութեամբ և այլ և այլ ցանկութեամբ վարակեալ կոյր առաջնորդաց սերմանած խռովութեան և ատելութեան հետեւանքը չէ այս ընդհանուր անբարեկարգութիւնը, ըմբոստութիւնը, և զեղծմունքը. խրոսովայոյզ պաշտօնէից սերմանած գայթակղութեան լարդիւնքը չէ ժողովրդեան անհանգստութիւնը, իրարու հետ անմիաբան եւ հակառակամարտ լինելը, վարչութիւն սրտատակը, դատարաններ յաճախելը և բանտեր լեցրնելը։ Ա երջնէնք անգամ մի յերկիր կորացած մեր գրուխները, սրբէնք և ուղղէնք մեր բժժուած և շլացած աչքերը, բաջ զննէնք Աստուծոյ եկեղեցին, սղորմելի ժողովուրդը, սրուն գժբաղդաբար պաշտօնեայ կարգուածեմբ, լաւ նկատեմբ և տեսնէնք նորա

հոգւոյն մահացու վերքերը, որոց համար կ'ըսուի թէ մեր ձեռօք բացուած են, վասն զի զմեզ առաջնորդ կարգեցին որ զանոնք 'ի լաւն յորդորենք եւ նոցա գնացքը ուղղէնք. մեր մեր ժանտընթացքով, մեր դժնդակ վարքով, մեր խռովայոյզ կիրքով ալ աւելի խոտորեցինք զանոնք դէպ ուղիղ նպատակն առաջնորդող ճանապարհէն, մեր անսպառ ցանկութեամբ և անյագ աղա հութեամբ վրդովեցինք նոցա խաղաղութիւնը, ամեն ժամանակ խռովութիւն, երկպառակութիւն և ատելութիւն սերմանելով եղբայր եղբոր դէմ զինեցինք, բուն իսկ մեր օրինակով դանոնք վարժեցուցինք խռովայոզութեան, որով Աստուծոյ սրբեգրութեանէն զրկելով 'ի հոգեւորս և 'իմարմնաւորս վշտացուցինք և սաստկապէս վերաւորեցինք, որոյ դարմանն հոգայ մեզ կ'լինայ։ Ա եր ժողովրդեան մէջ շերտեցանք սիրով, քաղցրութեամբ, հանդարտութեամբ և հեզութեամբ, ինչպէս վայել էր Վրբիստոսի աշակերտին. մեր չունեցանք այն սուրբ նախանձաւորութիւնը, ու

րով նախնի Հարք կը վառէին Մտու-  
 ծոյ կամքը կատարելու և կատարել  
 տալու համար . նորա սիրով և զօրու-  
 թեամբ Հոգւոյն զինուած ամենանողա-  
 տեհուածութեանց առաջքը կ'առնէին : Իսկ  
 մէք ընդհակառակն անձնական սնտոխ  
 կիրքերով յուզուած բորբոքած Մա-  
 տուծոյ եկեղեցւոյն վրայ անհոգ գըռ  
 նուեցանք . անկարգութիւնները ոչ թէ  
 միայն չուղեցինք , այլ և մէք ինքնին  
 յամառ կամապաշտութեամբ զոյն  
 արմատացուցինք եւ զանազան անտե-  
 ղութեանց պատճառ դարձանք , քան  
 ղն մեր այս ընթացից հետեւանքն ե-  
 ղաւ ժողովրդեան մեղաց և մոլութեց  
 մէջ անխտիր լինելը , որ հեթանոսական  
 անաստուած ապականութիւն է և ոչ  
 բրիտանէական սքըութիւն . ամեն  
 տեղ յուզմունք , անկարգութիւն , շը-  
 փոթութիւն և անհամաձայնութիւն  
 ներ տիրեց , որ դիւային ոգւոյն ատր-  
 յեղի ձենձերահոտ նուէր մ' է . իսկ  
 Տեառն մերոյ խաղաղարար ու քաղցր  
 սգւոյն ներհակ ուզողուի :

Մտուած իմ , ի՛նչ պիտի լինէր աք-

զեօք եթէ մէք մարմնաւոր տիրող մի  
 հրամանին տակ ծառայներ լինէինք ու  
 այսչափ և այսպէս ներհակէինք նորա  
 կարգադրութեանց և հրամանաց : մի-  
 թէ պատուհաս չի պիտի կրէինք . մի-  
 թէ չի պիտի տուժէինք , միթէ վարձ  
 քէ չի պիտի զրկուէինք , և վերջապէս  
 եթէ մեր տիրող տան մէջ խռովու-  
 թեան եւ երկպառակութեան պատ-  
 ճառ լինէինք , միթէ իբրեւ անհաւա-  
 տարիմ , անարժան և անցարմար ծա-  
 ռաներ նոյն պաշտօնէն անարգանօք չի  
 պիտի մերժուէինք : Իսկ արդ Մտու-  
 ծոյ ծառայելը , նորա սուրբ եկեղեցւոյն  
 պաշտօնէութիւնը միթէ մարդու մը  
 ծառայելէն ալ փոքր է . միթէ այն-  
 քան ալ արժէք չունի , որ նկատողու-  
 թեան անդամ չառնուիր . եւ ամեն  
 կրից ու թերութեանց տէր մարդիկ  
 կը յաճախեն և կը ղեղանին սուրբ եւ  
 երկնաւոր կրօնին ծառայութեան մէջ ,  
 սակայն իրենց կրից և ցանկութեանց  
 միայն կը ծառայեն և ոչ Մտուծոյ :

Բաղաբական և ընտանեկան պաշ-  
 տօնեացք շարունակ ընտրութեան , փո-

վիտուլթեան և պատժոյ կ'ենթարկին, ինչ պիտի լինի մեր արժանիքը որ ազատ կացուցանէ զմեզ այդ արդարութեան հատուցումէն . — անշուշտ կատարելութիւն . եթէ մեր պաշտօնի սրբութիւնը և աստուածայնութիւնը բացառութիւն ընդունած է իւր պաշտօնէից համար, ուրեմն պէտք է արժանաւորիմք անոր, ասպ թէ ոչ ապաշնորհ պիտի համարուիմք : Ամեն ծառայ և պաշտօնեայ կ'աշխատի իւր տիրոջ հաճոյ լինիլ, որ գովութեան արժանանայ . իսկ մեք կարծես մրձուժ մի ունիմք մեր տիրոջ կամաց ներհանն ընելու, և անոր խտտելի երեւնալու, սակայն պէտք է հաւատամք, որ պարտուց և իրաւանց մէջ գտնուող անողորբելի արդարութիւնը, յաւիտենական օրինաց մէջ գտնուող անկաշառ գատուորը բնապէս և բարոյապէս կը պատժէ պարտազանցը :

Թողունք հանդերձեալը, որ արդարութեան օրինօք պատրաստուած է, միթէ կենցաղոյս մէջ մեռ պաշտամանց ներհակ գործելով պատիժներէ ազանտ

եմք, — քան լիցի . այսչափ անարդ հըրատարակութիւնք, այսպիսի անպատուութիւնք մարդ եղողին համար քիչ պատիժ են : Պաշտօնին անարգուիլը, եղծուիլը, սրտի և մտաց հանապաղօրենայ տաղնասն ու վրդովմունքը . Աստուծոյ խօսքին չի խօսուիլն ու չի լուուիլը պատուհաս չեն, ինչ են . բայց այս ամենը սիրտ ունեցողը միայն կրգ դայ և մարդ եղողը միայն կրնայ խրատուիլ և ուղղուիլ : Կարծես ճիշդ այն ժամանակն եմք որոյ համար մարգարէն Աստուծոյ կողմէն պատուհաս կը գովէ ըսելով, «Սով պիտի տամ, բայց այս սովը ոչ հացի և ոչ ալ ջուրի սով է, այլ Տիրոջ խօսքը չի լսելու սով » : Քանզի ահա իսկապէս կը տեսնեմք, որ Աստուծոյ խօսքը անարգուած թէ չի խօսուիր և թէ չի լուիր, ինչո՞ւ, — վասն զի այսչափ կիրքերով վարակեալ Աստուծոյ բանին քարոզիչքս մեր քարոզածէն օգուտ չի շահելով, մեք զմեզ արժանաւոր չնկելով՝ նորա արժէքն ու ազդեցութիւնն ալ կտարած եմք, եւ այժմ այնպիսի բաներ կուղենք քարո-



ղել, որպէս զի լոկ մեր հանձարը ցոյց տամք և ժողովուրդը զարմանայ բայց չը շահի. բանդի այն ասեն նոյնը մեր վերայ ալ պիտի բնտուէ : Խռովայոյդ պաշտօնեայ մի ո՞ր անպատկառ երեսօք պիտի համարձակի խաղաղասիրութիւն քարոզել :

Պաշտօնեայք պէտք է հանդարտ լինին, ըսաւ Աւարեալը, պէտք չէ զարնող ու կռուող լինին, այլ համբերող, հեղ, ժուժկալ և հիւրասէր, Ատուծոյ տանը աղէկ վերակացութիւն պէտք է ընեն, այսինքն ժողովուրդը ըսւ հառաւարեն, կրթեն և Ատուծոյ օրէնքով սուրբ և բարի վարուց մէջ դաստիարակեն : Բայց մէք ո՞ւր, և այս պարտականութիւնն ո՞ւր :

Արդ քանի որ մէք ըստ ամենայնի մեր անուան, պաշտօնին և մեր պարտուց ներհալը կը գործեմք, անշուշտ աղատ չեմք արդարութեան հատուցանելիք պատուհասէն. և քանի որ մէք ծառայ մի, գործաւոր մի, մշակ մի՞ իւր դանցառութեանց, ընդդիմութեց և թերութեց համար կը պատժեմք, պէտք

է ուրեմն իմաստասիրեմք թէ մեզ ինչ պիտի պատահի : Վանդի մէք ալ Տէր մի ունիմք, որ եթէ նոյնպէս վարուի մեզ հետ, արդարութիւն ըրած կը լինի. բայց բարեբաղդաբար մեր Տէրը երկայնամիտ է, միշտ և անմիջապէս չի հատուցաներ և պատժոյն բովանդակ մեծութիւնն ու ծանրութիւնը մէկէն չի հասցներ, այլ բիւր օրինակով, դէպքերով և առիթներով կը խրատէ ըդ մեզ, որպէս զի ուղղութեան ճանաւ պարհը մանենք. իսկ մէք կամակոր և կամապաշտ լինելով ոչ կրդգամք և ոչ ալ խրատուիլ կուզեմք, սակայն որչափ յամսու և անդարձ մնամք, այնչափ ալ դատապարտութիւնը կը սաստկացընեմք և կը կրեմք թէ կենցաղոց մէջ և թէ ՚ի հանդերձեան :

Այն խաղաղութիւն և սէր կը քարոզեմք ժողովրդեան, մէք խաղաղութեան պաշտօնեայ լինելնիս բանիւ և արտաքին ձեւերով կը յայտնեմք անոնց և խաղաղութեան դրոշակով կը մտնեմք նոցա մէջ, բայց մեր գարշաւ պարաց հետքերէն խռովութիւն կը

վատայ, մեր աչքերէն յուզմունք կը ցորայ, և մեր ձեռքերէն երկպառակութիւն կը սփռի: Մեր խօսքերը գրգռիչ են, և մեր լեզուն երկասցրի սուրի սէս դպած տեղը մահաբոյր վերքեր կը բանայ: Ըսեն օր Աստուծոյ տան մէջ, Խաղաղութիւն ամենեցուն, կը գոչեմք բերանով, բայց արդեամբ խռովութիւն կը ներշնչեմք. ժողովըրդեան հոգւոյն վերքերը բուժելու տեղ՝ տւելի կը զայրացնեմք, և զինքն իւր զաւոց անդգայ ընելու համար, բան չի կայ, հոգ մի՛ ըներ, առողջ ես, կ'ըսեմք. բայց երբ ժողովուրդը խռովութեամբ այն քան յուզի, որ ալ առաջքն առնուլ անհնար լինի, այն ատեն կը սկըսիմք ժողուրդէն գանդատիլ և արտաքին միջամտութեան կարօտիլ. և մեր յիմարութեամբը կուզեմք որ այն միջամտող խաղաղարարը զմեզ ՚ի սպառարդարացնէ և միայն ժողովուրդը դատելով ու դատապարտելով խաղաղութիւն ընէ, և այս նպատակին հասնելու համար ուրիշ անվայել միջոցներու կը դիմեմք . . . . :

Վայ մեզ նման կոյր առաջնորդներուն, որ լոկ անուանական առաջնորդներ և սրաշոնեայներ ըլլալ կուզենք. պարտիզի մէջ տնկուած խրատու իրակներ (գորգուլուգ) ենք, ուր ասպականիչ կենդանիք մեկըմէկ բղիտելով սարտեղը տակն ՚ի վերայ կ'ընեն իսկ մեք միշտ անդգայ եմք. կամ թէ կարծես Երեմիայ մարգարէն այսօր իսկ Աստուծոյ կողմէն կը գանգատի մեր վերայ ըսելով, «Վուք իմ ժողովրդեանս վերքերուն անհոգութեամբ նայեցաք և — խաղաղութիւն է, խաղաղութի է —, ըսիք, քանի որ խաղաղութի չը կար»: Ի՞նչ ողբալի և դառն վիճակ է այս, Հարբ. սրտորուակելը նենգել է նենգելը խաբել է, խաբելը մահու չափ վնասել է, որ չի վայելէր ոչ կրծաւուրին և ոչ որ և իցէ մարդուն: Ըրդեթէ մեք խռովութեան արբանեակներ եմք, ինչո՞ւ վատութեամբ զմեզ կը ծածկեմք, ինչո՞ւ խաղաղութեան սիրուն հրեշտակի գեղեցիկ կերպարանօքն ու բերկրառիթ համբաւովը կը շարխմք և կը ծպարխմք, իսկ ՚ի ներքուստ խռու

վարար ու ժանտաժուտ կը լինիմք :

Երբ մարդ մի բարութեան պատրու  
ուակաւ չարութիւն դործէ , ամեն  
թուր ու մուր կը տեղանք , անարգանք  
և նախատինք չի մնար գլուխը կը թա-  
փենք՝ իւր նենգաւոր վատութեանը  
համար , և արժանի իսկ է ամեն դը-  
ժնդակ չարեաց հանդիպելու . հասյա  
մեզ նման դառնազգեստ գայլերու ի՞նչ  
պէտք է . . . : Ի՞նչ պիտի ընենք , երբ  
Տէր Աստուած իւր փրկած հօտին աչ-  
ցելութիւն ընէ , եւ երբ մեզ նման  
վարատող և ցրուող հովուաց վերայ  
իւր արդար բարկութիւնը բռնկի . . . :

Անտարակոյս խռիւի պէս պիտի աչ-  
րէ մեր կիբքերն ու գործքերը և պիտի  
խորտակէ , փչոէ և ցրուէ մեր հոգար-  
տութիւնն ու ամբարտաւան խոր-  
հուրդները : Փոխուիլ պէտք է Հարբ ,  
այս ճանապարհն ան ել է և վտան-  
գաւոր :



Հ Պ Ա Ր Տ Ո Ւ Թ Ի Ի Ն

ԱՆՈՒՐԱՆԱԼԷ , որ երբ մարդ բա-  
րոյականի ուղիղ ճանապարհէն կը շե-  
ղի հարկաւ ամեն տեսակ մոլութեան  
և մոլորութեան կը մասնուի . ուստի  
զարմանք չէ երբ եկեղեցւոյ պաշտօնե-  
լից վերայ Հ Պ Ա Ր Տ Ո Ւ Թ Ի Ի Ն , ամբարտա-  
ւանութիւն և գոռոզութիւն կը տես-  
նուի : Քանզի հերիք է որ նոքա իրենց  
բուն կոչումէն մազի չափ շեղին , ալ  
այնուհետեւ ամեն չարիք կը յուսաց-  
ուի . ուր մնաց որ այսքան հեռացած  
են : Աւելի ցաւալին և վտանգաւորն  
այն է , որ չը հեռանալ կը կեղծեն ու  
իրենց բուն գործերը կը պատրուակեն .  
սխալն ուղիղ և չարն իբր բարի կը համ-  
բաւեն : Սակայն սրչափ խոտորնակ մի-  
ջոցներով արդարանալ ճգնին , այնչափ  
ալ արդարութենէ պիտի հեռանան .  
սրչափ սխալնին ուղղելու համար ետ  
չի դառնալով՝ նորանոր կամահաճ հը-  
նարքներ ստեղծեն . այնչափ ալ պիտի

սխալին . ինչպէս ահա ՀՊԱՐՏԻՌԹԻՒՆՆԵՆ  
 ալ իրենց ուրիշ պակասութիւններն գու  
 ցելու համար դիւային հնարք մի եւ  
 դժոխային քող մի է . և երբ այս ալ  
 խայտառակուելի , զայն մոռցնելու հա  
 մար կեղծաւորութեան և երեսպաշ  
 տութեան կը դիմեն , և այսպէսով շա  
 րունակ մոլութենէ ՚ի մոլութիւն կը  
 թաւալին , ուրիշ աղատելու ուրիշ  
 ճար չի կայ , բայց միայն խոնարհու  
 թեամբ իւր անձը ճանչնալ , խրատուց  
 և յանդիմանութեանց անսալ և պաշ  
 տօնի պարտաւորութիւններն ուսա  
 նիլ ու գործադրել ճշդութեամբ եւ  
 անխափան :

Հպարտութիւնը սաղայելական  
 կիրք մի է , որուն գերի եղողը ծաղը  
 ու ծանուկ է ամեն մտացիներու , որչափ  
 խորխտայ այլոց վերայ , որչափ զայլը  
 մերժէ և արհամարհէ , այնչափ ալ ու  
 րիշին ծաղըլ կը շարժէ իւր վերայ և  
 այլոց արհամարհանաց կենթարկի . ին  
 քըն սրչափ ուրիշ իրմէ աւելի արժա  
 նաւորներուն անձին , խօսքին , գործ  
 քին և արդեանց չը հաւանի ու բանի

տեղ չը դնէ , այլք եւս զնա ինքն կը  
 նախատեն , կայսպանեն եւ զզուանօր  
 կատեն . որ և արժանի իսկ է ատելու  
 թեան , քանզի հպարտը թշնամի է և  
 ատելի ( ստուծոյ :

Հպարտին բնութեան և ընթաց  
 քին նայելով պէտք էր նա հեռանար ,  
 առանձնանար և մարդկային ընկերակա  
 նութենէ դուրս ապրէր . քանզի նա  
 կ'ատէ ինչ որ իրմէ դուրս է . տիեզե  
 րաց մէջ ինքն է միայն արժանաւոր ,  
 գիտուն , բարի , արդար և սուրբ .  
 ուստի հարկ էր որ փախչէր և միայնիկ  
 ինքն իւր վերայ զմայլած՝ ապրէր ա  
 ռանձին և գարծէր ու մեռնէր առան  
 ձին : Ինչո՞ւ ուրեմն հպարտը տակա  
 ւին կը զիջանի մարդկան մէջ մնալ .  
 վասն զի փառասէր է . և գովեստի ու  
 փառաւորութեան կը ցանկայ . և աշ  
 խարհի մէջ չեն պակսիր անմիտ կեղ  
 ծաւորներ . որ հպարտին վերայ զար  
 մանան , զմայլին և զայն աստուածա  
 պէս գովեն ու փառաւորեն . և հպար  
 տին հաճելի ու խիտ հեշտայի է կեղ  
 ծաւոր չլթունքներէ դուրս ծխած նե

խեղալ դրուատեաց խոռնկը . որ որչափ մահառիթ է իրեն , այնչափ ալ սիրով , յօժարութեամբ և բուռն բերմամբ կը մղուի դէպ յայն ինչպէս թիթեւնի կը ճրագին . . . :

Ինչ որ արդէն խռովարարութիւն համար ըսինք , նոյնը վերստին չի կրկնելու համար կրսեմք , որ հպարտը խռովաշոյղ ալ կը լինի . քանզի կ'ատէ և կարհամարհէ ամեն բան , չի հաւանիր ոչ մարդու և ոչ նոցա գործոց , որով դարոյթ , յուզումն և խռովութիւն կը գրգռէ : Նա իրական առաքինութիւն և բարձր արժանաւորութիւն չունենալուն համար սնայարժութեան հողմով կուռի և կը փքանայ , և այսպիսեօք առանց արժանաւորութեան վարկ ու համբաւ ստանալ կը ճգնի : Բայց ինչ լաւ տնօրինած է բնութեան լրարիչը , որ հպարտը միշտ իւր բարձրութենէն անկանելով կը ցածնայ և կը խորտակի , և այս իւր արդար պատուհանն է . ինչպէս արդէն ըսինք , աւտուածային օրինաց դէմ՝ մեղանջելուն պատիժն իր մէջն է :

Ինչպէս ամեն մոլութիւն նոյնպէս և հպարտութիւնը բնական ու բարոյական օրէնքէ դուրս է : Հպարտութիւնը այնքան չար ու գայթակղելի մոլութիւն մի է , զոր կրող եկեղեցւոյ պաշտօնեայն բարոյապէս պաշտօնէ դադրած կը համարուի , և երանի թէ իրանէս ալ դադարած լինէր : Քանզի հպարտութիւնը Սաղայէլի յատկութիւնն է , իսկ խոնարհութիւնը՝ Քրիստոսի . արդ ինչ կարելի է Քրիստոսի աշակերտ լինիլ և միանգամայն Սաղայէլի բնութիւն ունենալ . ուրեմն յայտնի է որ գոռող և հպարտ պաշտօնեայն Քրիստոսի աշակերտ ըլլալէ ինքնին դադրած է . ալ ոչ խօսքը , ոչ արտայբն ձեւը և ոչ մարդելուղաց ծափահարութիւնը չեն կարող զայն ճշմարիտ պաշտօնէի կարգն անցընել . ուստի լաւ է որ իսպառ դադարի :

Չը փիտեմ , թէ ինչպէս լեւտարանի աշակերտքս այսչափ հեռացած եմք աւետարանի շաւղէն , որ դէպ 'ի կեանք կառաջնորդէ : Մեր Տէրը և վարդապետը հեզութեան ու խոնարհութեան

Ճամբով եկաւ և զմեզ նոյն ճանապարհին մէջ դրաւ . մեր նորա խօսքերն ու գործոց օրինակները փոխանակ մեր անձին վերայ կրելու , զանոնք ձեռներու և արարողութեանց փոխելով միայն ՚ի տես կր՛կատարեմք և արդարութիւն կը համարիմք , ինչպէս հին Փարիսեցիները : Նորա ԽՕՄ-բը մեր վարքով թագաւորեցնելու տեղ , կանարգեմք զայն և կըստեղծեմք այնպիսի կամահաճ բաներ , որովք կը տանջուիմք հոգւով և մարմնով :

Յիսուս Քրիստոս մեր անձին հանգրստութիւնը հեղութեան ու խոնարհութեան մէջ ցոյց տուաւ . « Սուրբ ցէք ինձմէ , ըսաւ , հեղութիւն աւ խոնարհութիւն , որպէս զի ձեր անձին հանգստութիւնը գտնէք » : Իսկ մէք ընդ հակառակն , չը դիտեմք ինչք համար կը հպարտանամք և մեր կրկն գերի կը լինիմք . հանգստանալու համար կը գոռոզանամք և չարաչար տանջանաց կը մասնուիմք : Բարձրանալու սանդուխ՝ խոնարհութիւնն ու առաքինութիւնը ցոյց տուաւ Յիսուս ,

իսկ մէք կուզեմք հպարտութեամբ և մոլորութեամբ բարձրանալ . և սակայն միշտ կը խոնարհիմք կը ցածնամք եւ կանարգուիմք . Յիսուս ըսած է , « Անձը խոնարհեցնողը պիտի բարձրանայ , եւ բարձրացնողը պիտի խոնարհի » . այլ մէք կարծես սորա ճշմարտութեան վերայ տարակուսած , կուզեմք փորձել , և սակայն ամեն ժամանակ մեր փորձերովն իսկ ճշմարտութիւնն ըստուգած եմք ու տակաւին չեմք համոզուած թէ երկնաւոր Վարդապետին ամեն ըսածները յաւիտենական ճշմարտութիւններ են . « Արկիմք և երկիր կարող են անցնիլ , բայց նորա խօսքերէն նշանակեց մի անգամ չէ կարելի անցնիլ : Նա ըսած է թէ . « Աստուծոյ հեղբունն ու խոնարհներուն մէջ կը բնակիմ » : Իսկ մէք ամբարտաւանութիւն զայն մեզմէ կը հեռացնեմք , ու մենք ալ իրմէ կը հեռանամք . ինչպէս իմաստունն ալ կրտէ թէ « Ամբարտաւանութեան սկիզբը Տիրոջմէն հեռանայն է , որովհետեւ նորա սիրտը Աբարզէն խտորեցաւ » :

Այլ սակայն ինչ հարկ կայ հարաբեր  
տուութեան անարդ ու զղուելի ըլլալը  
ցոյց տալու համար աստ և անդ վիսյ  
ութիւններու դիմել, ամենէն լաւա  
գոյն վկայութիւնը և աւելի հաստա  
տուն փաստը ներկայ օրինակն է . ես  
մէկը նկարագրեմ, դուք ձեր շուրջը  
հազարաւորը կրնաք տեսնել :

Նայեցէք սա ամբարտաւան մար  
դոյն վերայ, որ սնեքայով, խրոխտա  
լով և գլուխը վեր ցցած երկու կողմին  
վրայ ճոճայլով կը քայլէ . կեղծաւորնե  
րէ շրջապատեալ չորս կողմը արհամար  
հական նայուածքներ կը նետէ . բոլին  
ներուն կակնարկէ որ գան թեւերուն  
տակ մտնեն, առանց հարկի, միայն  
թէ փառաւոր երեւի և ուշադրութի  
գրաւէ : Հալիւ ուրեմն կը զիջանի թը  
շուտի մը հետ խօսելու, և այն զայ  
րութիւ, խորխտանօք և լի անարդու  
թեամբ : Տեսէք, սա մի կողմէն կա  
րեկցութեան և միւս կողմէն զղուա  
նայ արժանի տեսարանը . թշուառը  
հպարտին ոտքն ինկած կողկողագին և  
արտասոււալիք աչքը դէպ անոր կը նայի :

Նորա քարացեալ սիրտն ողորելու եւ  
թերեւս աչքերէն ու երեսէն դուշա  
կելու նորա ներքին զգացմունքը եւ  
հոգւոյն հանգամանքը և անտի հետեւ  
ցրնելու իւր խնդրոյն վախճանը : Բայց  
ամբարտաւանին դաժան աչքերը ա  
նողոք դահճի մը աչքերուն կը նմա  
նին . կատղած վագեր նմոցն յոնկց ծայ  
րերն իրար միացեր և աչաց կոպերուն  
վերայ են ինկեր, աչքերը խոժոռ ու  
անդադար շարժուն, դէմքը դաժան  
ու կնձուտ, բայց կերեւի թէ գոհ է  
այս տեսարանէն, քանզի անձամբ շար  
ժումն չընէր թշուառը մերժելու եւ  
կամ պատժելու, կերեւի թէ հաճոյք  
կը զգայ նորայն աստիճան խոնարհելէն,  
կը հեշտանայ նորա համբոյրներէն, որ  
անդադար ստքերուն կը մատուցանէ .  
և կերեւի թէ կը փառաւորի զայն ու  
տիցն առջեւ տարածեալ տեսնելէն .  
ներքնապէս կը զմայլու այս ամենուն վե  
րայ և դիւային ուրախութեամբ կը  
բերկրի, այլ թշուառին խնդիրը ոչ կը  
լռէ և ոչ կը կատարէ : Սակայն աւանդ  
որ ջը լներ նստել այն բեկեալ սրտէն

դէպ յերկինս բարձրացող հառաչանաց ձայնն ալ, որ անպատճառ կը սրանայ բարձրերոյն գթութեան աթոռին առջեւ և կը փութացնէ հատուցումը :

Հիմա Չեղ կը հարցնեմ՝ Հարբ իմ, ամբարտաւանին այս երեւոյթին պէս զգուցիւ, ատելի, և սոսկալի ի՞նչ կայ. հապա եթէ եկեղեցական մի լինի այս, որ աստիճան անարդանք է իրեն և անպատուութիւն իւր պաշտօնին : Օ գայւարանգս խաբել կուղեմ, և չեմ ուզեր հաւատալ, որ եկեղեցւոյ պաշտօնէից մէջ այս աստիճան դիւական ամբարտաւանութիւն կը գտնուի. բայց ինչ ալ որ լինի, նորա գոյութիւնը նոյն արդիւնքն ունի. ուստի բուն իսկ հը պարտութեան գոյութենէն խորշելու է, չը թողով, որ մեր սրտին մէջ մուս գանէ :

Եկեղեցւոյ պաշտօնեայն եթէ կուզէ այսպիսի ասորիսի և մտեկան վարքով վարել իւր սրբազան պաշտօնը և որանչելի երեւիլ, խիստ կը սխալի. մանաւանդ որ աւելի ատելի հրեշ մի է այն կրօնաւորը, որուն արտաքին

փառքէն, խորխտանքէն և բռնութենէն կը սոսկայ ժողովուրդը. և փոխանակ աներկմիտ վտահութեամբ մօտենալու և իւր կարօտութեանց մէջ լի երկնային սիրով և անկեղծ համարձակութեամբ անոր ներկայանալու, կը դողայ, ետ կը քաշուի, նորէն յառաջ կը մղուի, երկկողմ և սարսափ մամբ, հաղար անգամ ձեռքը կը համբուրէ կամ ոտքը կանկանի : Այս ոչ եկեղեցականութիւն է և ոչ ժողովրդականութիւն. այս արտաքոյ է մարդկութեան եղբայրական պայմանին. և օտար. եկեղեցւոյ պաշտօնէին ու ժողովրդեան մէջ եղած սուրբ առնչակցութեան օրէնքին, որ է օրէնք հայրական և որդիական սիրոյ, օրէնք խաղաղութեան, բարութեան, գթութեան, խոնարհութեան և հեզութեան. այս օրէնքէն և այս սկզբունքէն դուրս կրօնաւորութիւն չի կայ. այս պայմաններէն դուրս եկեղեցւոյ պաշտօնէութիւնը աննշան, կրօնաւորութիւնն աննպատակ և ժողովուրդը ղեղծեալ և անուղղայ կը լինի : Եթէ կու-



զենք փառք ժառանգել, պէտք է ճրջ մարիտ փառաց փախարիմք, որ հա մեստութեան, խոնարհութեան եւ չափաւորութեան մէջ է. ճշմարիտ փառքը չի գտնուիր հարստութեան, գուռութեան և շքեղազարդ երեւելի հանդերձներով պճնազարդելու մէջ. միմիայն անթերի պարտաւատարութեամբ կարող է մարդ արժանաւորիլ ճշմարիտ փառաց:



Օ.

ՊՃՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Եկեղեցիոց պաշտօնէից ՊՃՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ չը գիտեմք ինչ մեկնութիւն ապրու է. եթէ բուն պճնասիրութեան նշանակութեամբ հասկանամք, չը վայելէր կրօնաւորին, քանզի ամօթ է, իսկ ուրիշ մեկնութիւն չեմք կարող ապ, քանզի պատրուակած պիտի լինիմք: Արդ որովհետեւ պճնասիրու-

թիւնը կրօնաւորին չը վայելէ, հարկ է ուրեմն նշաւակել նորա անպատկառ երեւոյթքը:

Պճնասէրը ունայնամիտ է. ճշմարիտ իմաստութիւնն ու առաքինութիւնը չը բնակիր ունայնամիտ զարդասիրին սրտին ու մտքին մէջ. ուստի յիմար է նա՝ որ խենեշութեամբ հագուել շքուել կը սիրէ:

Հանդերձը մարմնոյ ծածկութի համար է, ինչ հարկ կայ աւելորդ հանդերձներով բեռնաւորիլ եւ ծաղրելի զարդերով պճնիլ՝ քանի որ պարզ հանդերձ մի մեր պէտքը կարող է հոգալ:

Սարդուն ճշմարիտ զարդն է իւր հոգւոյ կատարելութիւնքը, համեատութիւնը, առաքինութիւնն ու իմաստութիւնը, և սոցա կը վայելէ բն ծայել արժանաւոր փառք և վայելուչ պատիւ. պճնասէր եղողը այս ամեն կատարելութենէ զուրկ լինելը կը յայտնէ, քանզի չունենալով ճշմարիտ արժանիք և իրական վայելութիւն, կուզէ արտաքին շքեղութեամբ փառք ու պատիւ ստանալ, բայց իրեն պէս

պակասամիտներու զարմանքը միայն կրնայ գրաւել, այլ իմաստնոց առաջեւ ծաղրու ծանակ կը լինի: Մեր այս բաձներէն չը կարծուի թէ գձձու-թիւնը կը պաշտպանեմք և անոր բարոյական հանգամանք կրնձայեմք, ոչ, այլ մեր խօսքը, չափաւորութեան, պարզութեան և համեստութեան համար է:

Պճնասիրութիւնը կանացի հանգամանք մի է, կարծեմ բաւական ամօթ է մարդու մը որ կը զիջանի կանանց պէս պճներու մտադրութիւն դարձրնել: Կանանց մէջ անգամ երբ չափազանց վայելչասիրութեամբ պճնազարդեալ մէկը տեսնեմք, նորա վերայ բարի համարումն չեմք ունենար. անհամեստ, ըկտի և այլն կանուանեմք. այլ պճնասէր մարդն ի՛նչ անուանեմք, հապա պճնասէր կրօնաւորն ի՛նչ անուանեմք. . . . :

Անհամեստ ու զարդամոլ կանայք իրենց արդ ու զարդովը կուզեն զարահրապուրել, նոցա կիրքերը գրգռել և մեղաց ու մորութեան որողայթին մէջ ձգել, որ սատանայի գործ է և ոչ

մարդու, ուրկէ խելացիները զգուշնօք աչքերնին կը դարձրնեն. իսկ ան միտները կապղին ու բերանաբաց կը նային՝ առանց զգարու իրենց հոգւոյն և սրտին մէջ քնդուենաձ վերքին ցաւը, որ քաղցկեղե պէս կը ճարակի և կը խոցոտէ մարմինն ու հոգին և կասպահանէ գեղեցիկ վարքն ու բնաւորութիւնը: Իսկ երիտասարդք ալ կը պրճնին իրենց ունայնամտութիւնը ցոյց տարու, և թերեւս զարդամոլ կանանց համամիտ լինելնին յայտնելու և անոնց խորհրդոց պատասխանելու համար. որով երկուքն ալ իրենց մտքի դատարկութեան և սրտի ապականուէ հաւաստին տուած կը լինին: Սակայն եկեղեցւոյ պաշտօնեայն ի՛նչ վախճանի համար կը զարդարուի. եթէ նպատակը կը վերոյիշեալները չեն, ուրեմն ի՛նչ են, և եթէ պճնասիրութիւնը ստանկ անպարկեշտ ու հեշտախտային խորհուրդներ կը պարունակէ, ամօթ չէ եկեղեցականին որ այսպիսի անսուրբ խորհուրդներով զբաղի և այս կերպ զըզուելի կարծիքներ հրաւիրէ իւր վերայ:

Պճնասիրութիւնը վտանգաւոր մը ըլլաթիւններէն մին է, զոր խախտանել կը պարտի եկեղեցականը և ոչ թէ իւր օրինակովն ալ քաջալերել: Որչափ հարուստներ փճացուցած է պճնասիրութիւնը և քանի՜ աղքատներ յուսահատեցուցած է, միթէ անոնց պատասխանատու չէ՞ն եկեղեցւոյ պաշտօնեայք, որ չեն խրատեր և վնասակարութիւնը ցոյց տար. մանաւանդ պճնասէր կրօնաւորք, որ իրենց օրինակով թելադրիչ կը հանդիսանան:

Կը յիշէք անշուշտ; Հարբ, որ Ս. Պատրիարք Հայրիկը պճնասիրութեան դէմ քարոզ մի տուաւ. և օրիորդ մի ըրագրաց միջոցաւ պատասխանեց թէ «Նախ քու եկեղեցականներդ խրատե և զգուշացուր»: և նոյն յօդուածին մէջ նկարագրած էր պճնասէր կրօնաւորը իւր բոլոր խենեշ կերպարանօքն ու վտի շարժմամբը. ջը պատկառեցա՞ք զարդասէր Հարբ: Եթէ այսպիսի անարգութիւններէ ամօթ չէք կրեր, կը նշանակէ թէ դուք ձեր պատիւը կը թուսած էք, վասն զի ինչպէս ըսած է ի

մաստունին մէկը թէ, «Ով որ պատիւը կորսնցնելէ կը վախնայ, այնպիսին իւր անձը անկարգութիւններէ կը զսպէ և անպատուութենէ կը զգուշանայ, իսկ անգամ մի զայն կորսնցնողը կը համարձակի տուանց ամօթոյ ամեն չարիք գործելու»: Նոյն օրիորդը թէ որ զարդասէր է, այդպէս ընելով թէպէտ իւր անուղղայութիւնը յայտնեց, սակայն դուք չէք խղճեր, որ պատճառ տուէք նորա այդ համարձակութեան. և ջը համոզուեցա՞ք տակաւին որ ձեր օրինակովը զեղծման առաջնորդած էք ժողովուրդը և պատասխանատու էք նուցա չարեաց, մեղաց և մորութեանց:

Երբ Յիսուս Քրիստոս վայ կը կարդար կեղծաւոր Փարիսեցիներուն նուցա պճնասիրութեան համար, երբ կը նախատէր ու վար կը զարներ նոցա փառաւոր ու երևելի հանդերձներով շրջելու բաղձանքը, միթէ մեղ համար բացառութիւն ըրաւ. «Հանդերձի համար մի հոգայք, և երկու հանդերձ մի ունենաք», արգելական պատուէրներն ինչպէս տմեն մարդու համար,

միթէ նոյնպէս, և առաւել ևս մեղ հաւ  
մար ալ չէ :

Սեղք է Հարք իմ և եղբարք, ափե  
սոս է այն հոգն ու մտածմունքը զոր  
կը վատնենք ցեցեբու կուր լինելէք հանւ  
գերձներն ստանալու, պահպանելու և  
մանաւանդ անոնցմով զարդարուելու  
համար : Այդ հսկողութիւնն ու մտա  
տանջութիւնը եթէ ոմանց բարուց  
ուղղութեան և հոգւոյ փրկութեան  
վերայ ըրած լինէինք որչափ արդիւնաւ  
ւոր և միտիթարական էր թէ մեղ եւ  
թէ այլոց համար :

ՊՃնասիրութեան ետեւէ մոլոր  
եալ եկեղեցականը իրաւունք կուտայ  
այլոց կարծել, որ փառամով, խաբե  
բայ, շռայլ, ցանկատէր և վավաշոտ է .  
բանդի ինչպէս Ազնիկ կրտսէ . «Օ արդար  
ուող կրօնաւորը դեւերու հիւրընկալէ»  
ուստի և իւր խորհուրդներն ու գործ  
քերն ալ դիւային են, որ չեն վայելեր  
կրօնի սրբութեան : Արեմն մեծն Ա  
ղէքսանդրի ըսածին պէս պէտք է կամ  
անուանիս փոխելք կամ գործքերնիս .  
բանդի Աստուած օուրբ է և կը կամի

որ մեր ալ սուրբ լինինք . «Բանդի կու  
չեաց զմեզ Աստուած ՚ի սրբութիւն և  
ու ՚ի սրբութիւն » :

Որպէս զի շատիպուիմք աւելի ան  
պարկեշտ իրողութիւններ յայտնելը այս  
մասին այսչափ հերիք սեպելով՝ անց  
նիմք օրինալանցութեան վերայ ալ  
բիչ մը խօսիլ և վերջացնել :



Լ :

ՕՐԻՆԱՅ ԱՐՀԱՄԱՐՀՈՒԹԻՒՆ

ՅԱՅՏՆԻ է որ օրէնք մը կը հաստա  
տուի անկարգութիւնները կարգաւո  
րելու և թիրուութիւններն ուղղելու  
համար : Ան հասարակ օրէնքն այն տե  
ղերն զգալի կը լինի, ուր անկարգու  
թիւնք կը յաճախեն : Օրէնք եղած  
տեղը նորա տրամադրութեանց դեմ  
տեղի ունեցած շարժումները՝ եթէ օ  
րէնք դրուելէ յառաջ լով թերութիւն  
կը համարուէին, օրէնքը սահմանուե  
լէն վերջը այն ամեն զանցառութիւնք  
և ընդդիմութիւնք կը լինին յայցանք,

մեղք և ոճիր: Ինչպէս առիթ ունեցանք շատ տեղ ցոյց տալ թէ օրէնք չեղած տեղը հաստատուն բարութիւն չը լինիր, նոյնը վերստին կը կրկնուի: Քանզի ուր որ օրէնքը չի չլսէր, այն տեղէն կարգաւորութիւն յուսալն ան մտութիւն է, և ուր կարգ և կանոն չըկայ, այն տեղ ուղղութիւն չը լինիր, իսկ ուղղութիւն չեղած տեղն անհնաւ ըին է որ բարի բան մի հաստատութիւն գտնէ:

Եթէ օրէնքը չէ իշխողը, ուրեմն կիրքն է. և հնազանդութիւնները կիրքերու նուիրուած են. ո՛հ և ի՛նչ աղետալի կը լինի այն տեղին վիճակը, ուր մարդկային յեղեղուկ և անսանձ կիրքերը կը տիրեն: Ենդա՛հոր ամեն բան շիւթութեան մէջ կը լինի. ամեն մարդ իւր միտքը իւր գործը բաւ կը համարի, անդ մոլութիւնը և մոլորութիւնը անսանձ կը յառաջանան. անդթութիւնը և զրկանք յուր կը շողայնեն, սոսութիւնն ու խարդախութիւնը, կեղծաւորութիւնն ու նենգութիւնը օճի սլէս կը սողան և ան-

մեղաց սիրան ու հոգին կը թունաւորեն: Ախտանձը՝ ատելութեան, աշարդանաց և սխալալութեան կամ վրէժխնդրութեան դաշնակից լինելով խաւարի մէջ թակարթներ կը լարէ, և բաղվիցս կը յաջողի արդարութիւնն ու անմեղութիւնը թակարթել, յառաջադիմութիւնը, լուսաւորութիւնը, ազգային օգուտն ու բարիքը այն տեղ, այն խաւար ծուղակին մէջ կաշկանդել, եթէ ոչ կորուսանելու՝ գէթ առ ժամանակ մի արգիլելով՝ նոցա արդեանցը խտիանարար լենելու համար: Այսն զի արդարութեան վերայ հիւ՛ն նուած չըջահայեաց և անաչառ օրէնքը չէ որ կիջսէ, այլ շահախնդրութեան ջախջախ եղեգան կութնած, անձնասէր կամատաշտութեան կոպտութեամբ զնուած, հազար նկատումներով բիւր երկիւղներով և կասկածներով չըջապատեալ կիրքն ու կամքըն է անդ իշխան և կռամվար, որ հրամաններ կընէ. եթէ հասարակաց մտասակար ալ լինին, սակայն ինքը կը պնդէ և գործարութիւնը կը պա-

հանջէ, եթէ իրեն վնասակար լինին՝ ուրիշ պատճառներով ետ կաննէ. շինելու տեղ կեղծանէ, կանգնելու տեղ կը բանդէ. և այսպէս թէ ինքն և թէ ժողովուրդը կատարի փոթորիկներով յուզուած ծովուն ալեաց մէջ աստանդական տատանող նաւուն կը նմանի, որ ոչ կարող է հանդիստ լինիլ, և ոչ դէպ ՚ի իւր նպատակը դիմել, այլ շարունակ իւր կորստեան վտանգին ըստ պատելով կը ծփայ և կը հեծէ : Այն ուրեմն այն խեղճ ժողովրդեան, որ առանց բարեկարգ օրէնքի կառաջնորդութի. բայց և սուսել վայ այն առաջնորդին որ ժողովրդեան լաւութի համար սահմանուած օրէնքը կարհամարհէ : Այն օրէնք հաստատող օրհնութիւն պիտի ստանայ, ուրեմն անէճք անոր, որ օրէնքը կարհամարհէ և կեղծանէ :

Հարկ չի կայ կարծեմ եկեղեցւոյ պաշտօնէից օրինազանց կամ օրինաց արհամարհող լինելը հաստատելու կամ ժխտելու : Այն ան զի մինչ ցարդ մեր խօսածներէն կը հասկցուի, որ նորա

իրբեւ օրինաց աւանդապահներն ըլլալով հանդերձ՝ իրենց ապօրինի գործքերովը օրէնքներն արհամարհած և օրինազանց գտնուած են, որով այսչափ չարիք հասուցած են աղբին և իրենց գլխուն :

Արջափ ցաւալի է տեսնել, Այկեղեցւոյ պաշտօնեայն, Աստուծոյ հօտին առաջնորդը որ օրէնք կարհամարհէ, մինչդեռ իրմէն օրէնք կը պահանջուի. բայց ինչ կը լինի իւր արհամարհանաց հետեւութիւնը, լսենք Տիրոջ : «Բա հանային ջրթուկք պէտք է գիտութիւն պահպանէ և անոր բերնէն օրէնք պիտի խնդրուի. ինչու որ ամենակալ տիրոջ հրեշտակն է, իսկ դուք ճամբէ դուրս ելաք եւ շատերը օրէնքին նկատմամբ գայթակղեցուցիք . . . ես ալ զձեզ բոլոր ազգաց մէջ արհամարհած և երեսէ ձգուած թողելով անարգեցի. պատճառ որ իմ ճանապարհս չը պահեցիք, այլ օրէնքը կը ծռէիք և ակնառութիւն կրնէիք » : Աստուած ամենաբարին ինքն գոլով ծայրագոյն բարի, կուզէ որ իւր բանական

արարածներն ալ բարութիւն և կարգաւորութեամբ անցնեն սոյն կենցաղական յաւիտենիս շրջանը և անվախճան յաւիտենիս մէջ արժանաւորութեամբ մտնել պատրաստուին . ապա թէ ոչ ինչպէս անբան ու անզգայ արարածոց վերայ օրէնք մի կիշխէ և այն օրէնքէն դուրս ելնողը անշուշտ իւր երջանկութենէն, հանգստութենէն և մինչեւ խոհ կեանքէն ալ կը զրկուի, նոյնպէս եւ բանական էակին, մարդուն համար ալ բաց 'ի բնականէն' բանական օրէնքներ ալ տրուած է . որոց ներհակողն և զորս արհամարհողն ալ իւր ներհակը պիտի կրթէ . քանզի այսպէս կրտսառնայ Աստուած : «Իմ ժողովրդեանս առաջնորդներն իրենց փափկութենէն պիտի իյնան . և իրենց չար ընթացքին համար պիտի մերժուին » : — « Ահա ես այդ հովիւներուն հակառակ եմ . և անոնց ձեռքէն իմ խաչներս որիտի պահանջեմ և անոնց բերնէն պիտի ազատեմ զանոնք, որ ալ անոնց կերակուր չը լինին, և այդ հովիւներն ալ չը պիտի արածեն իմ խաչներս » : — Հանէք այդ

չար ծառայն արտարին խաւարը, այն տեղ թող լայ և ախրաները կրճտէ :

Այսպէս ահա աղետարի է այն եկեղեցւոյ պաշտօնէին ներկայ վիճակը և վախճանը, որ իւր կոչման ու պարտաւորութեանց ներհակը գործելով պարտազանց կը լինի ու քար գայթակղութեան կը դառնայ անմեղաց առջեւ : Արհամարհելի է նա ազգաց եւ աղանց մէջ, Աստուծոյ երեսէն ձգուած չարաչար մոլորութենէ 'ի մոլորութիւն կը գլորի միշտ և իրեն համար աղետալի վախճան կը պատրաստէ : Թող չը խաբուի այնպիսին կեղծաւոր շողորթներու սուտ գովեստներուն և նենգաւոր դաւաճաններու յուզայեան համբոյրներուն . որք իրենց շահասիրութեան, փառասիրութեան և անձեական որ և իցէ վատ կիրքերնուն գործիք ընելէն վերջը պատրաստ են օր մի դահալիւթել յանդունդս անարգութեան և անպատուութեան :

Օրինազանցին համար սահմանուած այս փոխարինութեանց առհասարակ այն ամեն օր կրնգուենի օրինա-

քանցք, բայց ոչ իրենք կրողու շանան  
 և ոչ այլք կը խրատուին : Պէտք է ըզ  
 քու շանալ, Հարք, ապա թէ ոչ մօ  
 տալու ա է այն մեծ և բողբոսկան հա  
 բուածը որ օրէնքն արհամարհողներու  
 համար սահմանած է աստուածային ի  
 մաստուծիւնը, և զոր շատերը կրե  
 ցին և կը կրեն միշտ, այն է, եղծումն  
 և ապականութիւն, արհամարհանք և  
 անարգութիւն : Շատերուն մէջէն մեկ  
 նշանաւորն ըսեմ. Իարծրաստիճան ե  
 կեղեցական մի, գրեթէ եռեսուն տա  
 րի յառաջ այս տեղ գտնուելով մի օր  
 հասարակ միաբաններէն մեկուն հրա  
 ման մի կրնէ, նա ալ ուրիշ գործի զըր  
 կուած լինելով կը պատասխանէ թէ  
 հիմա ժամանակ չունիմ : Այլեղեցականը  
 իւր հրամանին չի կատարուիր տեսնե  
 լով սաստիկ կը զայրանայ և խոստա  
 յօք սպառնալիքներ կրնէ, անարգանք  
 և լուանք կը թափէ խեղճին գլխուն .  
 եւ յանկարծ պատասխան կրնողունի  
 թէ «էհ, հանդարտ կեցիր, այս տեղ  
 ձեր . . . լեռները չենք » : Վարդապե  
 տը թէ և նորէն կրսպանայ, բայց մի

աբանը առանց մտիկ ընելու արհա  
 մարհանօք կը մեկնի : Այս վարդապե  
 տը ուրիշ եկեղեցականաց հետ նստած  
 ատեն այն դէպքը վշտապին սրտիւ  
 կը պատմէ և վերջը սա նշանաւոր  
 խօսքը կը յաւելու. « Անք, կրսէ,  
 արժանի եմք այս արհամարհանաց,  
 և տակաւին քիչ է մեղ համար .  
 քանզի իրաւ որ մեր տեղը շատ ան  
 վայել կերպով կը վարուինք և արհա  
 մարհանօք կը խօսինք մեր ստորագ  
 րեալներուն և ժողովրդեան հետ, հի  
 մա արդարութիւն է որ մենք ալ այս  
 պէս անարգութիւնք » : Այլեղեցւոյ այս  
 անարժան պաշտօնեայն այն ատենէն  
 մինչ ցարդ կապրի խաբէութեամբ և  
 լի անարգանօք . այդ դէպքը թէպէտ  
 դբացած էր, բայց խրատ ըլլալու չափ  
 ներգործութիւն ըրած չէր իւր վերայ .  
 ուստի շատ անգամ շատ անարժան գոր  
 ծերու մէջ գտնուեցաւ, յանդիմանուե  
 ցաւ արտաբառուեցաւ առաջնորդութե  
 անարգաբար կրօնափոխութեան դի  
 մեց, և ըբօրէն բարոյներ տուաւ ի  
 նպաստ Պատական եկեղեցւոյն . յե



աոյ նորէն ետ դարձաւ , իւր ճարպիկ ճարտարութեամբը նորէն պաշտօններու անցաւ , ՚ի վերջոյ յանդուգն անհրնազանդութեամբ և օրինազանցութեամբ եկեղեցական բարձրագոյն աստիճանի ձկտել յանդգնեցաւ ինքն ընտիր և ինքնակոչ . . . լինելով . ամեն յաճութիւն և անարգութիւն կրեց և այսօր լքեալ երեսէ ձգուած կը կենայ վանքի մի խորշը : Արդ այս անձը եթէ առաջին փոքր հարուածներէն խրատուեր , փորձառու լինէր և կեանքը կարգադրելով իւր կոչման արժանանար , անշուշտ մեծամեծ պատուոյ պիտի հասներ և եկեղեցւոյ մեծ ծառայութիւններ պիտի ընէր . քանզի բոլոր բնական պիտանի ձիրքերով զարգարուած է , բաց ՚ի ստացական կրթութութենէ : Այսպէս նաեւ շատերը պատժուած են և կը պատժուին : Բայց երանի թէ այս հարուածները միայն մեր վերայ գային , և մեր օրինակովը գեղձանող օրինազանց ժողովուրդը ազատ մնար օրինաց արդար հասուցմունքէն : Այլ յաւիտեական օրէկրը

անաշու է , իւր արդարութիւնը ամենուն համար է . նա կը պատուհասէ զամենքն ալ առանց խորութեան . բայց այն ամենուն պատասխանատուն մէնք պիտի լինինք . « Անորէնը իւր անորէնութեան մէջ պիտի մեռնի , բայց նորա արիւնքը ձեռքէդ պիտի պահանջուի » :

Սեղմէ ոմանք Աստուծոյ , ատեալնէն փոխանակ զԱստուած և նորա օրէնքները քարոզելու . շատ անգամ , գուցէ յանգետս կամ դիտմամբ , անուղղակի իրենք զիրենք կը քարոզեն , շատ անգամ օրէնքներ կ'եղծեն եւ խեղճ ժողովրդեան ստութիւն ու գուրութիւն ընելու թելադրիչ խօսքեր կը խօսին , որ ոչ Աստուծոյ օրէնքէն է և ոչ ուրիշ հաստատուն հիմ մի ունին , այլ լոկ իրենց մոլորութենէն յառաջադած կամահաճ հնարքներ և անխոհեմ գիւտեր , զորս իբր իրենց հանձարոյն հրաշալիք կը ներկայացնեն հրապարակ առանց գալու և տեսնելու թէ ինչ վատ ներգործութիւն կընէ ժողովրդեան սրտին և որչափ կը

խանգարէ նոցա բարոյական կենաց  
 ուղղութիւնը : Արդարեւ պէտք է խօ-  
 սիլ, եկեղեցւոյ բէմէն ՚ի լուր ժողո-  
 վրդեան կամ առ տնին յունկանէ պէտք  
 է բարոզել, բայց միշտ ճշմարտութեան  
 և բարոյական ուղղութեան պատկառ-  
 կալով և ոչ թէ ճարտարութիւն ծա-  
 խելու համար արիւնցիկիս բերնին ե-  
 կածը դուրս տալով, որք և Ատուծոյ  
 Հոգին ալ կը թշնամանեն՝ երբ անմը-  
 տաբար կրսեն թէ “Սուրբ Հոգին կը  
 տայ մեզ և մեր ալ ձեզ” . բայց Ա-  
 տուծոյ հոգւով խօսողը Ատուծոյ  
 խօսքը կը խօսի . Սուրբ Հոգին՝ ճշ-  
 մարտութեան հոգի է . և ստութեան  
 հետ մասնակցութիւն չունի . . . :

Այս պէտք է խօսիլ ճշմարտու-  
 թիւնն , ըսինք , բայց պէտք չէ կար-  
 ծենք որ լոկ խօսելով ազատած կը լի-  
 նիմք պարտքէ . ոչ : Քանզի մեզ լու-  
 ղը եթէ մեր խօսքը մեր գործքերով  
 ասպացուցուած չը տեսնէ , նորա ճշ-  
 մարտութեան վերայ կասկածելով չուղ-  
 դուիր . որով և մեր Ատուծոյ խօսքին  
 ազդեցութիւնը ժողովրդեան համար

տկարացուցած և կտրած կը լինինք և  
 կը մերժենք ու կը հեռացնենք մեր վե-  
 րայէն Ատուծոյ թագաւորութիւնը .  
 ուստի և արժանի եմք արհամարհա-  
 նաց :

Մի Հարք իմ, մանաւանդ դուք  
 որ բարձր աստիճաններու մէջ գրաւ-  
 նուելով իրաւունք ունեցած էք միւս  
 կարգաց ընտրութեան , ձեռնադրու-  
 թեան և նոցա վարուց վերայ , զոչոչ  
 կացէք , որ մի գուցէ ձեր խօսքովն և  
 գործքովը առիթ տուած լինիք նոցա  
 մոլութեանց . մանաւանդ խիստ մեծ  
 զգուշութեան կարօտ է ձեր այն ամե-  
 նափտանգաւոր ընթացքը որ մէկուն  
 պատժածը և արտաքսածը միւսնիդ ա-  
 ռանց քննութեան կը յարդէք , կը մե-  
 ծարէք և փափուկ պաշտօններ կը յանձ-  
 նէք և վերջը վիշտ կը կրէք թէ դուք  
 և թէ ժողովուրդը : Մէկերնիդ կար-  
 գէ կը լուծէք , միւսնիդ կարգ կուտայ .  
 խկ յանցաւորը կարծես իւր վատու-  
 թիւնքն ասպացուցանելու և կարգէն  
 լուծողին արգարութիւնը հաստատե-  
 լու համար կերթայ նորէն անլուր չա-

ընթացներ գործելէ զինի կրօնափոխութեան արդուութիւնն ալ յանձն առնելու չափ կը ցածանայ յանարգութիւն և 'ի նախատինս իւր պաշտպանին , 'ի ղնաս և 'ի գայթակղութիւն ազգին : Ահա այս կերպիւ յանցաւոր պաշտօնեայք անսանձ ազատութիւն գտած են . և ոչ միայն չեն ուղղուիր , այլ և իրենց ըրած ապիրատութիւնները քաջաբերուած տեսնելով ալ աւելի կը չարանան , որոց պատճառը դուք և ձեր իրարու հետ ունեցած հակառակութիւնն է . որով ժողովուրդը կը հարբատահարի և կը թշուառանայ : Ի սէրն Աստուծոյ Հորք , պաշտօնեայք եկեղեցւոյ , այս պատկառելի անունը ամօթ թող ազդէ ձեզ , Աստուծոյ օրհնքներուն խոնարհութեք հնազանդեցէք և ձեր այդ անձնական հակառակութիւններէն մէկդի կեցիք , ափսոս է ժողովրդեան , դուք այդ իշխանութեանց և այդ գահերուն վերայ միշտ չէք մնար , բայց ժողովուրդը միշտ կայ , և ձեր թողած վատութիւնն ու լաւութիւնն ալ միշտ պիտի մնայ : Եր

ինդրեմ ամենայն ակնսածութեամբ որ առանց գժտմնելու և վշտանալու ընթեռնուք , Հորք իմ , ձեր մէկ խոնարհ պաշտօնակցին սոյն տկար խօսքերը՝ ոչ թէ դատելու համար , այլ օգտելու նպատակաւ ընդունիք զայն : Աղաչենք զուրք Հորքին Աստուած , որ մեր ամենուն սրտին վրայ ներգործելով տպաւորէ իւր կամքն ու հաճոյքը որպէս զի հետեւելով անոր՝ ազատ լինիմք ամեն տեսակ գերութիւններէ , յորտկաշխանդուած եմք այսօր գրեթէ ամենքնիս ալ :

Ի այց եթէ պատահի որ իմ սիրելի պաշտօնակիցքս այնչափ առաքինացած լինին որ ազատ համարին զիրենք ամեն տեսակ թերութենէ , և ծանր գայ իրենց իմ խօսքերս , այն ատեն ամեն պակասութիւն իմ վրայ կառնում և այս ամենը ինձ և իմ ուղղութեան համար միայն ըսած կը լինիմ , սրտանց ուրախ լինելով իմ պաշտօնակցացս իմաստութեան , ժրութեան , առատաձեռնութեան խաղաղասիրութե , խոնարհութեան , պարկեշտութեան ,

ողջախոհութեան եւ օրինապահութեան վերայ :

Այն ատեն մասնաւոր յօգուածաբար առիթ չի պիտի ունենան մեր վերայ խօսելու համար օտար ազգաց կրօններուց վերայ խօսուած եւ գրուած անլուր չարեաց թարգմանիչ լինել, այլ ակնհասութեամբ պիտի յարդեն եւ պատիւ պիտի համարին օտարաց առջեւ զմեզ յիշել եւ մեզմով պարծելու : այն ատեն եւ դուք կարօտ չի պիտի լինիք քանի մի մուրացիկ լրագրեր վարձելու՝ որպէս զի զձեզ ստութեամբ ներբողեն եւ յանիրաւի պաշտպանեն : Քանզի այն ատեն զամեն լեզու ճշմարիտ գովասան եւ զամենայն որ իրաւամբ պաշտպան պիտի ունենայք, ու բուն ՚ի սրտէ կը տենայ ինչպէս ամեն որ, նոյն եւ ես :

Թերեւս շատերն ըսեն թէ, « Այսինչ երկու խօսք էր, որ չի լրացաւ : Այս ալ կ'աւետեմ անոնց թէ ահա լրացաւ, սակայն դեռ երկու խօսք ալ չեղաւ : Քանզի նկատելով Արեւելոց պաշտօնէից զեղծեալ վիճակը տեսնելով

նոցա բուն կոչման ներհակ բռնած ընթանցքնին եւ առ հասարակ սիրած Կայթակորութիւննին, եւ քննելով սոցա շարժառիթները, այն ատեն մեր խօսածը կէս խօսք ալ եղած չը լինիր տակաւին. եւ եթէ այսպէս երթայ, դեռ եւս շատ ու շատ պիտի խօսուի : Այլ մեր այս չափը հերթեմտեպէով կը լռեմք, յիշելով այս տեղ մեր բազմերախտ Հօր Ա. Գրեգոր լուսաւորչի սա հետեւեալ պատուական խօսքը. « Հնորհալից մտայ եւ հաւատացելոց սակաւ բանք խրատուց բաւական են առ ՚ի ուղղութի, իսկ անհաւատից եւ անշնորհաց՝ եւ յուրով բանք խրատուց ոչ ինչ օգուտ գործեն, որոց խաւարեալ են միտք իւրեանց, եւ օտարացեալ են ՚ի շնորհաց անտի Աստուծոյ ։ Եւսմախապ ։

50.

Handwritten text in Armenian script, likely a manuscript page. The text is arranged in approximately 15 lines, though some are partially obscured or faded. It appears to be a historical or religious document.



952

002 200

952



1-41

